



Ձիաց մեր հանապազորդ

ԱՊՐԻԼ, ՄԱՅԻՍ, ՀՈՒՆԻՍ 2017

Աստվածաշնչի ամենօրյա անձնական և ընտանեկան
ընթերցումներ և հոգևոր խորհրդածուծություններ

Ի՛նչ ՏԱՐԻ

Բ ԵՌԱՄՍՅԱԿ

Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում Radio Bible
Class ընկերությունը, որի թույլտվությամբ Our Daily Bread
գրքույկից թարգմանել ենք հաջորդ էջերի
խորհրդածուծությունները:

Ամերիկայի Հայ Ավետարանչական ընկերակցություն
AMAA

31 West Century Road

Paramus, New Jersey 07652, USA

E-mail: amaa@amaa.org, Website: www.amaa.org

Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության
Հայաստանի մասնաճյուղ

0019, Երևան, Մարշալ Բաղրամյան 18

Հեռ.՝ (010) 54-35-76; (010) 54-35-78

Էլփոստ՝ amaa.armenia@amaa.am

Կայքէջ՝ www.amaa.am

Երբ «ԱՅՈ»-ն «ՈՉ» է նշանակում

Շնորհակալություն հայտնեցի Աստծուն մորս՝ արյան քաղցկեղի Շղեմ պայքարելու ժամանակ նրան հոգատար լինելու ինձ տրված առանձնաշնորհումի համար: Երբ դեղերը սկսեցին օգնելուց ավելի վնասել, մայրս որոշեց դադարեցնել բուժումը՝ ասելով. «Ձեռ ուզում սրանից ավելի չարչարվել: Ուզում եմ վերջին օրերս ընտանիքիս հետ վայելել. Աստված գիտի, որ ես պատրաստ եմ մեկնելու»:

Ազաչեցի Երկնավոր Հորը՝ մեծագույն բժշկին, որ կարող է հրաշքներ գործել: Սակայն «այո» ասելու համար մորս խնդրանքին, պետք էր «ոչ» ասել: Երկար տառապելուց հետո տեղի տվեցի ու ասացի. «Տե՛ր, թող Քո կամքը լինի»:

Կարդա՛ր
Յոռմ. 8.22-28

Նեղությանս մեջ ես Տիրոջը ձայն տվի, և նա լսեց ինձ:
Սաղմ. 119.1

Շուտով Տերը ընդունեց մորս ցավից հեռու Իր հավիտենակալության մեջ: Այս մեղավոր աշխարհում մենք տառապանքի փորձառությունը պիտի ունենանք մինչև Հիսուսը նորից գա (Հոռմ. 8.22-25): Մեր մեղավոր էությունը, սահմանափակ տեսողությունը և վախի ցավը կարող են արգելք լինել մեր աղոթքի կյանքին: Սակայն բարեբախտաբար «Հոգին... Աստծուն վայել կերպով բարեխոսում է սրբերի համար» (Հմ. 27): Նա մեզ հիշեցնում է, թե ամեն բանի մեջ Աստված բարիք է անում նրանց, որոնք Իրեն սիրում են (Հմ. 28), նույնիսկ երբ Իր «այո»-ն մեկին նաև նշանակում է սրտի խորքից «ոչ» մեզ համար:

Երբ ընդունում ենք մեր փոքր բաժինը Իր մեծ ծրագրի մեջ, մենք արձագանքում ենք մորս այս խոսքին. «Աստված բարի է, ու դա է կարևորը: Ինչ որ Նա է որոշում, ես պատրաստ եմ ու խաղաղություն ունեմ»: Տիրոջ բարությունն ապավինելով՝ մենք կարող ենք նրան վստահել՝ պատասխանելու ամեն աղոթքի Իր կամքի համաձայն ու Իր փառքի համար:

Աղոթք - Տե՛ր Յիսուս, շնորհակալ եմ, որ վստահելի ես, մինչ ղեկավարում ես մեր օրերը Քո կամքի համաձայն, որ ընդգրկում է ամեն մարդու, ամեն սերունդի և ամեն վայրկյանը, մինչև որ Դու նորից գաս:

Աստծո պատասխանները ավելի իմաստուն են, քան մեր աղոթքները:

Տեսարանների ետևում

Մի հարցի շուտափուլյթ պատասխան ստանալու ակնկալիքով աղջիկս բջջայինով հաղորդագրություն ուղարկեց մի բարեկամի: Հեռախոսի նամականու բաժինը ցույց էր տալիս, որ բարեկամը տեսել է հաղորդագրությունը, ուստի նա անհամբեր սպասում էր արձագանքի: Ինչքան ժամանակը առաջ գնաց, նա ավելի ու ավելի հուսախաբ եղավ և ուշացման համար սկսեց տրտնջալ: Նրա գայրույթը մտահոգություն վերածվեց, և մտածեց, թե պատասխան չստանալը արդյոք իրենց միջև ինչ-որ խնդրի արդյո՞ւնք էր: Վերջապես պատասխան եկավ, և աղջիկս հանդատացավ՝ եզրակացնելով, որ իրենց հարաբերությունը լավ հիմքերի վրա էր, և խնդիր չկար: Բարեկամը պարզապես անհրաժեշտ մանրամասներ էր ճշտում՝ պատասխանելու համար: Հին Կտակարանի մարգարեներից Դանիելը նույնպես անհամբերություն պատասխանի էր սպասում: Մեծ պատերազմի մասին վախազդու տեսիլք ունենալուց հետո Դանիելը ծոմ պահեց և խոնարհաբար Աստծուն դիմեց աղոթքով (10.3, 12): Երեք շաբաթ նրա աղոթքներն անպատասխան մնացին (Հմ. 2, 13): Վերջապես մի հրեշտակ եկավ ու վստահեցրեց, որ իր աղոթքները լսելի էին եղել առաջին օրն իսկ: Մինչ այդ հրեշտակը պայքարում էր այդ աղոթքների համար: Թեև Դանիելը տեղյակ չէր, բայց Աստված գործի վրա էր անցնող քսանմեկ օրերի ընթացքում: Մեր վստահությունը, թե Աստված լսում է մեր աղոթքները (Սաղմ. 40.1), կարող է պատճառ դառնալ մեր անհանգստություն, երբ մեր աղոթքների պատասխանը չենք ստանում: Դրա համար հակված ենք հարց տալու, թե Աստված հոգո՞ւմ է արդյոք: Դանիելի փորձառությունը մեզ հիշեցնում է, թե Աստված գործի վրա է նրանց փոխարեն, ում սիրում է, նույնիսկ եթե դա տեսանելի չէ մեզ:

Աղոթք - Տե՛ր, օգնիր ինձ վստահելու Քո հոգատարությունը, նույնիսկ եթե չեմ կարող տեսնել:

Աստված միշտ գործի վրա է հանուն Իր ժողովրդի:

Կարդա՛ր Դանիել 10. 1-14

...քո խոսքերը լսելի դարձան, և ես եկա քո խոսքերի պատճառով:

Դանիել 10.12

Կարեկցող սիրտ

Յրթ ընկերներով մի մարդաշատ զբոսայգում երաժշտական միջոցառման զնացինք: Ցանկանալով կողք կողքի նստել՝ փորձեցինք մեկ շարքի մեջ տեղավորվել: Մինչ այդ մի կին մտավ մեր մեջտեղը՝ նստելով աթոռներից մեկին: Կինս ասաց, որ մենք ուզում ենք միասին նստել, սակայն նա պատասխանեց. «Ի՞նչ անեմ», իսկ ինքն ու իր ընկերները հրմշտելով մտան մեր շարքի մեջ:

Մինչ մեզինից երեքը ետևի շարքում կտեղավորվեին, կինս նկատեց, որ այդ կինն իր հետ ուներ մեկը, որ հատուկ խնամքի կարիք ուներ, և փորձում էր իր խոսմբը միասին պահել, որպեսզի խնամքի կարոտ այդ մարդուն հոգ տաներ: Շուտով մեր զայրույթն անցավ: Սուն ասաց. «Պատկերացրու, ինչքան ծանր է կնոջ համար նման մարդաշատ վայրում»: Այո՛, հնարավոր է, որ նա կոշտ արտահայտվեց, սակայն մենք կարող ենք կարեկցությամբ պատասխանել՝ փոխանակ բարկանալու:

Ուր էլ գնանք, պիտի հանդիպենք մարդկանց, որոնք հոգածության կարիք ունեն: Կարող է այնպես լինել, որ Պողոսի այս խոսքերը օգնեն մեզ մեր շուրջը եղող մարդկանց այլ աչքով նայել, կարծես թե նրանք կարիք ունեն կարեկցության ու սիրո. «Ուրեմն, ինչպես Աստծու ընտրյալներ՝ սրբեր ու սիրելիներ, հագե՛ք ողորմասիրտ գթածություն, քաղցրություն, խոնարհություն, հեզություն, համբերատարություն» (Կող. 3.12): Նա նաև հորդորում է, որ մենք հանդուրժենք ու ներենք իրար (Հմ. 13):

Կարեկցելով՝ պիտի կարողանանք ուրիշներին ցույց տալ Նրան, որ իր շնորհի ու կարեկցության սիրտը բացեց մեր առջև:

Աղոթք - Յայր, Քո կարեկցությունը երբեք չի պակասում: Թող որ մենք ցուցանենք Քո սիրտը՝ կարեկցելով ուրիշներին:

Կարդա՛ր Կողոսացիներ 3.12-17

Ուրեմն, ...հագե՛ք ողորմասիրտ գթածություն, քաղցրություն, խոնարհություն, հեզություն, համբերատարություն:

Կող. 3.12

Կարեկցել նշանակում է հասկանալ ուրիշների դժվարությունները:

Նրա խոսքը՝ վերջին խոսքը

Չորդ դարի կեսերի բուռն Քրիստոնյա առաջնորդ և Նավիգատոր հոգևոր ընկերակցության հիմնադիր Դաուսոն Թրոթմանը շեշտեց Աստվածաշնչի կարևորությունը յուրաքանչյուր Քրիստոնյայի կյանքում: Թրոթմանը սովորություն դարձրեց օրն ավարտել այս խոսքով. «Նրա խոսքը՝ վերջին խոսքը»: Քննելուց առաջ նա մտածեց իր սովորած Սուրբ Գրային մի համարի կամ հատվածի մասին և ապա աղոթեց նրա ազդեցության ու իր կյանքում կարևոր տեղի համար: Նա ցանկացավ, որ իր մտածած վերջին խոսքը օրվա ավարտին լինի Աստծո խոսքը:

Դավիթը գրում է. «Երբ անկողնուս վրա քեզ եմ հիշում, գիշերվա մեջ քո մասին եմ մտածում, որովհետև ինձ օգնեցիր, ու քո թևերի հովանու տակ պիտի ցնծամ»: Մեր ունեցած մեր նեղության կամ խաղաղության պահին գիշերվա մեր վերջին խորհուրդը կարող է մեր մտքերը խաղաղեցնել Աստծո տված հանգիստով ու մխիթարությամբ: Դա նաև կարող է պատրաստել հաջորդ առավոտի մեր առաջին խոհի երանգն ու կշռույթը: Բարեկամս ու իր կինը իրենց օրն ավարտում են չորս երեխաների հետ բարձրաձայն կարգալով Սուրբ Գրքի մի հատված ու առօրյա ընթերցում: Նրանք լսում են հարցեր ու խորհուրդներ իրենց երեխաներից ու խոսում, թե ինչ է նշանակում Հիսուսին հետևել տանը կամ դպրոցում: Նրանք դա կոչում են իրենց տարբերակը՝ «Նրա խոսքը՝ վերջին խոսքը» յուրաքանչյուր օրվա համար: Ի՛նչ լավ ձև մեր օրն ավարտելու:

Աղոթք - Շնորհակալ եմ, Հայր, մեր սրտերում ու մտքերում եղած Քո խոսքի համար, որ գիշերվա մեր վերջին խորհուրդն է լինում, երբ Քո ապահով ձեռքերի մեջ ենք հանգստանում:

**Աստծո հոգին մեզ նորոգում է, երբ խորհրդածում ենք
Նրա խոսքի մասին:**

Կարդա՛ Սաղմոս 62. 1-11

Երբ քեզ հիշում էի
իմ անկողնում,
առավոտյան կա-
նուխ խոսում էի քեզ
հետ: Քանի որ դու
եղար իմ օգնականը,
քո թևերի հովանու
տակ ես պիտի
ցնծամ:

Սաղմ. 62. 6-7

Քոսի քաջությունը

Մինչ Հարավային Աֆրիկայի Թոկոյի Մոնո գետում սպասում էր իր մկրտության արարողությանը, Քոսին ծովեց՝ վերցնելու մաշած փայտից շինված քանդակը: Իր ընտանիքը այդ առարկան պաշտել էր սերունդներ շարունակ: Հիմա նրանք նայում էին, թե ինչպես է նա այդ այլանդակ պատկերը շարտում կրակի մեջ: Այլևս որևէ տեսակի պաշտամունք դրա հետ կապված չպիտի կատարվեր:

Արևմուտքի Քրիստոնյաներից շատերն են մտածում, որ կուռքերը որպես փոխաբերություն են գործածվում Աստծո փոխարեն: Թոկոյի մեջ կուռքերը շոշափելի աստվածների տեսքով են, որոնց առջև զոհեր են մատուցում: Հետևաբար, մկրտության ժամանակ կուռքերն այրելը խիզախ հայտարարություն է նոր հավատացյալների համար՝ որպես միակ ճշմարիտ Աստծուն իրենց հավատարմության նշան:

Ութամյա Հոսիան Հուդայի թագավոր է լինում կուռքեր պաշտող և անբարո մշակույթում: Նրա հայրը և պապը եղել էին Հուդայի Թագավորության ամենավատ թագավորներից երկուսը: Այդ օրերին Քահանայապետը Օրենքի Գիրքն է գտնում: Ու երբ երիտասարդ Հոսիա թագավորը լսում է նրա խոսքերը, հագուստները պատռում է (Դ Թագ. 22.8-13): Նա քանդում է բոլոր կուռքերն ու մեհյանները ու դադարեցնում պոռնիկությունը: Ու այս բոլոր վատ սովորությունների փոխարեն նա վերահաստատում է Զատիկի Տոնը (23.21-23): Երբ գիտակցաբար կամ անգիտակցաբար Աստծուց անկախ մեր հարցերին պատասխան ենք փնտրում, մենք հետևում ենք սուտ աստվածների: Ավելի իմաստուն կլինի ինքներս մեզ հարցնել, թե մենք ի՞նչ կուռքեր պիտի կրակը նետենք:

Աղոթք - Տեր, ների՛ր մեզ, երբ մեր ուշադրությունը սևեռում ենք այլ բաների՝ ցույց տալով, թե մեր սիրտը Քեզ վրա կենտրոնացած չէ: Ցույց տուր մեզ, թե ինչ բաներ պիտի թողնենք ու դրանք փոխարինենք Քո Սուրբ Հոգու ներկայությամբ:

Որդյակներ, զգուշացե՛ք կուռքերից: Ա Հովհ. 5.21

Կարդա՛ Դ Թագ.
 23.12-14, 21-25

Ինձնից բացի այլ աստվածներ չպիտի լինեն քեզ համար: Չպիտի երկրպագես ու չպիտի պաշտես դրանց: Ելք 20.3,5

Ի՞նչն է հավիտյան մնայունը

Բարեկամս, որ վերջերս շատ դժվարություններ ունեցավ, գրեց. «Երբ վերադարձ եմ կատարում անցյալ չորս դպրոցական շրջաններին, տեսնում եմ, որ շատ բաներ են փոխվել: Ու սա իսկապես վախազդու է: Ոչինչ նույնը չի մնում»:

Իրապես շատ բան կարող է պատահել երկու տարվա ընթացքում. աշխատանքի փոփոխություն, նոր բարեկամություն, նյութական դժվարություն, հիվանդություն, մահ: Լավ թե վատ, կարող է պատահել, որ կյանքի փոփոխության փորձառությունը թաքնված է մի քիչ այն կողմ գտնվող անկյունադարձում՝ սպասելով հարձակման: Պարզապես մենք չգիտենք: Հետևաբար, որքա՛ն մեծ մխիթարություն է իմանալ, որ մեզ սիրող Հայրը բնավ չի փոխվում:

Սաղմոսերգուն ասում է. «Բայց դու նույնը կմնաս, և քո տարիները չեն անցնի» (Սաղմ. 101.27): Այս ճշմարտության ակնարկը անսահման է: Նշանակում է, որ Աստված հավիտյան սիրող, արդար ու իմաստուն է: Սուրբ Գրոց ուսուցիչ Արթուր Փինքը հրաշալի կերպով հաստատում է այս միտքը՝ ասելով. «Աստծու հատկանիշներն ինչ որ էին արարումից առաջ, նույնն են այսօր և նույնը պիտի մնան հավիտյան»:

Հակոբոս առաքյալը գրում է. «Ամեն բարի տուրք և ամեն կատարյալ պարգև վերևից է իջնում, լույսի Հորից, որի մեջ փոփոխություն կամ փոփոխման շուք բնավ չկա» (Հակ. 1.17): Մեր փոփոխական հանգամանքների մեջ մենք միշտ կարող ենք վստահ լինել, թե մեր բարի Աստված ներդաշնակ պիտի մնա իր նկարագրի հետ: Նա բոլոր բարիքների աղբյուրն է, և ինչ որ ինքն է անում, բարի է:

Աղոթք - Տե՛ր, Դու նա ես, որ բնավ չի փոխվում ու միշտ բարի է մեր հանդեպ: Այսօր մեր սրտերը խաղաղեցրու շնորհով ու խաղաղությանը, որ միայն Քեզնից է գալիս:

Նա, որ ամբողջ տիեզերքն իր ձեռքերի մեջ է բռնում, քեզ բնավ չպիտի թողնի:

Կարդա՛ր
 Սաղմոս 101. 25-28

Բայց դու նուրը կմնաս, և քո տարիները չեն անցնի:
 Սաղմ. 101. 27

Գաղլիմեն փողոց

Կինս՝ Կարողինը, և ես քայլում էինք Լոնդոնում ու Հանդիպեցինք մի փողոցի, որ կոչվում էր Գաղլիմեն - Godliman Street - Աստծո Մարդ: Մեզ ասացին, որ ժամանակին այնտեղ մի բարի ու աստվածավախ մարդ է ապրել, ու այդ փողոցը ծանոթ է որպես «Աստծո վախով ապրող մարդու»: Այս անունն ինձ հիշեցրեց Հին Կտակարանի մի պատմություն:

Սավուղի հայրը իր որդուն ու մի սպասավորի ուղարկեց փնտրելու իր կորցրած էջերին: Սավուղը շատ օրեր ման եկավ, բայց չգտավ կենդանիներին:

Սավուղը պատրաստ էր տեղի տալով տուն վերադառնալ, երբ իր սպասավորը աղերսեց, որ Ռամա գնան, որ Սամուել մարգարեի քաղաքն էր, ու ասաց. «Այս քաղաքում է ապրում Աստծո մարդը: Նա պատվավոր մարդ է և ինչ որ ասում է, անպայման կատարվում է: Արի՛ գնանք նրա մոտ, թերևս մեզ ցույց տա այն ճանապարհը, որով պետք է գնանք» (Ա Թագ. 9.6-7):

Իր կյանքի բոլոր օրերում՝ մինչև ծերություն, Սամուելը բարեկամություն ու ջերմ հարաբերություն ցանկացավ ունենալ Աստծո հետ. իր բոլոր խոսքերը ճշմարտություն էին լեցուն: Ժողովուրդը ընդունում էր նրան իբրև Տիրոջ մարգարե: Ուստի Սավուղը և իր սպասավորը ճամփա ընկան դեպի այն քաղաքը, ուր Աստծո Մարդն էր ապրում (Հմ. 10):

Մեր կյանքերն այնպես պիտի Հիսուսին ցույցանեն, որ մենք մի հետք թողնենք մեր հարևանների վրա, որ մեր աստվածավախ և Աստծո մարդը լինելու հիշատակը մնա:

Ազոթք - Չգիտեմ, Տե՛ր, թե իմ հարևաններն ինչպես են ինձ նկարագրում: Սակայն ես ուզում եմ Քեզ մոտիկ լինել ու լույս՝ իմ անկյունում:

Լավագույն վկայությունը աստվածավախ կյանքով ապրելն է:

**Կարդա՛ր
 Ա Թագ. 9. 1-10**

Ծառան ասաց նրան. «Այս քաղաքում է ապրում Աստծու մարդը»
 Ա Թագ. 9.6

Կյանքի հովիվ

Երբ տղաս դպրոցում իր դասարանը փոխեց, լալով ասաց. «Ուզում եմ իմ ուսուցչիս հետ մինչև կյանքիս վերջ լինել»: Մենք պիտի օգնեինք նրան, որ հասկանար, թե ուսուցիչ փոխելը կյանքի մի մասն է կազմում: Մենք կարող ենք մտածել՝ ասելով. «Կա՞ արդ՞յոք մի հարաբերություն, որ մինչև կյանքի վերջ մնա»:

Հակոբ Նահապետը տեսավ, որ կա այդպիսի մեկը: Շատ մեծ փոփոխությունների մեջ ապրելուց հետո ու սիրելիներիս կորցնելով՝ նա անդրադարձավ, որ հարատև մի ներկայություն կար իր կյանքում: Նա աղոթեց. «Աստված, որ պահպանեց ինձ իմ մանկությունից մինչև այսօր... թող օրհնի այս մանուկներին...» (Ծննդ. 48.15-16):

Հակոբը հովիվ էր եղել, ուստի համեմատեց իր հարաբերությունը Աստծո հետ՝ իբրև հովվի և նրա ոչխարների հետ կապ: Երբ մի ոչխար է ծնվում, աճելու ու մեծանալու ընթացքում հովիվը հոգում է նրան ցերեկ ու գիշեր: Առաջնորդում է նրան օրվա մեջ ու պահպանում գիշերվա ընթացքում: Դավիթը, նույնպես մի հովիվ, նույն համոզմունքը ուներ, սակայն նա մատնացույց արեց Նրա հավիտենականությունը՝ ասելով. «...երկար օրեր ես Տիրոջ տանը պիտի բնակվեմ» (Սաղմ. 22.7):

Ուսուցիչ փոխելը կյանքի մի մասն է: Սակայն որքա՞ն լավ է իմանալ, որ մենք կարող ենք մի հարաբերություն ունենալ, որը մնայուն է: Հովիվը խոստացել է մեզ հետ լինել երկրի վրա մեր փորձությունների բոլոր օրերին (Մատթ. 28.20): Ու երբ մեր կյանքն ավարտվի, մենք ավելի պիտի իրեն մոտենանք, ինչպես երբեք:

Աղոթք - Հայր, շնորհակալ եմ, որ կյանքիս Հովիվն ես: Փառավորում եմ Քո հավատարմությունը:

Աստված մեզ երբեք չի լքում:

Կարդա՛ր
Ծննդոց 48. 8-16

Աստված..., որ պահպանեց ինձ իմ մանկությունից մինչև այսօր:
 ԾՆՆԴ. 48.15

Հավատքի մի ճամփորդություն

1880-ին, հրատարակութեան առաջին օրից, Լյու Ուոլլեսի «Բեն Հուր» վեպը չի դադարել վերահրատարկվել: Դա 19-րդ դարի ամենից ազդու Քրիստոնեական գիրքն է համարվել ու դեռևս շարունակում է ընթերցողներ գրավել այսօր, որովհետև հյուսում է Հիսուսի ճշմարիտ պատմությունը վիպական հրեա ջնուղ Բեն Հուր անունով երիտասարդ ազնվականի կերպարի մեջ:

Էմի Լայֆսոնը «Մարդկություն» (Հյուսմանիթի) թերթում գրել է, որ այդ գրքի բովանդակությունը փոխակերպել է հեղինակի ամբողջ կյանքը: «Բեն Հուրը ինչպես որ առաջնորդել է ընթերցողներին Չարչարանքի պատկերների միջոցով, այնպես էլ ուղղորդել է Լյու Ուոլլեսին Հիսուս Քրիստոսին հավատալու»: Ուոլլեսն ասել է. «Ես տեսա Նազովրեցուն... Ես տեսա Նրան այնպիսի գործեր անելիս, որ ոչ ոք չի կարող»: Ավետարանների արձանագրությունը Հիսուսի կյանքի մասին թույլ է տալիս մեզ քայլել Նրա կողքին, ականատես լինել Նրա հրաշքներին և լսել Նրա խոսքերը: Հովհաննու Ավետարանի վերջում գրված է. «Հիսուսն իր աշակերտների առաջ ուրիշ շատ հրաշքներ էլ գործեց, որ այս գրքում գրված չեն: Բայց սրանք գրվեցին, որպեսզի հավատաք, որ Հիսուսն է Քրիստոսը՝ Աստուծու Որդին, և որպեսզի հավատալով՝ նրա անունով կյանք ունենաք» (Հովհ. 20.30-31): Լյու Ուոլլեսի արած հետազոտությունը, Աստվածաշնչի ընթերցումն ու գրությունը առաջնորդեցին նրան Հիսուսին հավատալու: Ուստի Աստուծու Խոսքը մեզ մտքի ու սրտի փոխարկերպման է տանում, որով մենք հավիտենական կյանք ունենք իր մեջ և իր միջոցով:

Աղոթք- Տեր, թող Քո կյանքի արձանագրությունը գրվի մեր մտքերի ու սրտերի վրա, որպեսզի մենք աճող հավատք ունենանք Քո մեջ:

Բագմաթիվ գրքեր տեղեկացնում են, բայց միայն Աստվածաշունչն է կարող փոխակերպել:

Կարդա՛
Հովհաննես 20.24-31

Բայց սրանք գրվեցին, որպեսզի հավատաք, որ Հիսուսն է Քրիստոսը՝ Աստուծու Որդին, և որպեսզի հավատալով՝ նրա անունով կյանք ունենաք:

Հովհ. 20.31

Մեր լավագույն բարեկամը

Երբ ես 12 տարեկան էի, մեր ընտանիքը փոխադրվեց անապատային մի գյուղ: Իմ նոր դպրոցի մարմնամարզության դասերից հետո տաք եղանակին վազում էինք ցայտաղբյուրից ջուր խմելու: Լինելով շատ նիհար ու փոքր իմ դասարանի մեջ՝ երբեմն ինձ դուրս էին հրում շարքից, մինչ հերթիս էի սպասում: Մի օր ընկերս՝ Խոսեն, որ իր տարիքի համեմատ մեծ ու ուժեղ էր, տեսավ պատահածը: Նա եկավ ու իր ուժեղ բազուկը մեկնեց իմ ճանապարհը բանալու համար: «Հեյ, ասաց նա, թողեք, որ նախ Բենքսը խմի»: Ու ես դրանից հետո բնավ դժվարություն չունեցա ջուր խմելու մարմնամարզության դասերից հետո:

Հիսուսը հասկացավ, թե ինչ բան է անարգանք հանդուրժելը: Աստվածաշունչը մեզ ասում է. «...արհամարհվեց ու բանի տեղ չգրվեց» (Յու. 53.3): Սակայն Նա միայն տառապանքի գոհ չեղավ: Նա եղավ նաև մեր ջատագովը, իր կյանքը տալով «նոր ու կենդանի ճանապարհ բացեց» մեզ համար, որպեսզի կարողանանք Աստծո հետ հարաբերության մեջ մտնել (Եբր. 10.20): Նա ասաց մեզ այն, ինչ որ մենք չէինք կարող անել՝ մեզ տալով փրկության ճրի պարգևը, երբ մեր մեղքերից հրաժարվենք ու իրեն վստահենք: Հիսուսը լավագույն բարեկամն է, որ կարող ենք ունենալ: Նա ասաց. «...Ինձ մոտ եկողին ես դուրս չեմ անի» (Հովհ. 6.37): Մարդիկ կարող են մեզ մերժել ու վտարել, սակայն Աստծո բազուկները բաց են խաչի միջոցով: Որքա՛ն հզոր է մեր Փրկիչը:

Կարդա՛ Երայեցիներ 10.19-23

Բայց ովքեր նրան ընդունեցին, նրանց, որ հավատում են նրա անվանը, իշխանություն տվեց նրանց Աստծու զավակներ լինելու:

Յովհ. 1.12

Աղոթք - Սիրո փրկարար գործը կատարված է, պատերազմը մղված ու ճակատամարտը շահված: Մահը իզուր արգելում է իր հարությունը. Քրիստոսը բացել է դրախտը:

Աստծո՝ մեզ տված ձրի պարգևը թանկ արժեցավ նրա համար:

ԻՆչ՞ՈՒ ՆԵՐԵԼ

Երբ մի բարեկամ դավաճանեց ինձ, գիտեի, որ ներելու էի նրան, սակայն վստահ չէի, որ կարող էի: Նրա խոսքերը խորապես խոցեցին ինձ, ու ես ցավով ու բարկությամբ լցվեցի: Հակառակ այն բանի, որ խոսեցինք այդ մասին, ու ասացի, որ ներել եմ իրեն, երբ հանդիպում էինք, ցավ էի զգում: Հասկացա, որ ես դեռևս ոխ ունեի նրա հանդեպ: Մի օր, սակայն, Աստված պատասխանեց աղոթքներիս և կարողություն տվեց վերջնականապես ձերբազատվելու այդ զգացումից:

Ներումը Քրիստոնեական հավատքի սիրտն է, մեր Փրկչի տված ներումը խաչի մահով: Հիսուսը սիրեց նրանց, որոնք իրեն խաչեցին՝ աղոթք մատուցելով իր Հորը, խնդրելով, որ ների նրանց: Նա դառնություն ու բարկություն չկառչեց, սակայն շնորհ և սեր ցույց տվեց նրանց, ովքեր իրեն չարություն արեցին:

Որպես Հիսուսի հետևողներ՝ այսօր պատե՛հ առիթ է Տիրոջ առջև՝ նկատի ունենալ մեկին, ում ներելու ենք՝ ցույց տալով իր սերը: Երբ խնդրում ենք Աստծուն, որ մեզ օգնի իր Հոգու միջոցով ներելու, Նա պիտի գա մեզ օգնություն՝ տալով մեզ պետք եղած ուժը: Երբ ներենք, ձերբազատ կլինենք չներելու կաշկանդումից:

Աղոթք - Տե՛ր Հիսուս, Քո շնորհի և զորության միջոցով օգնիր ինձ, որ ներե՛մ բոլորի՛ն, ու Քո սերը ինձ ազատ արձակի:

Կարդա՛ր Ղուկաս 3. 32-34

Հիսուսն ասաց.
«Հայր, ներիր
նրանց, որովհետև
չգիտեմ, թե ի՞նչ եմ
անում»: Եվ նրա հա-
գուստները բաժանե-
լիս վիճակ գտցին:
Ղուկ. 23.24

**Նույնիսկ խաչի վրա Հիսուսը ներեց նրանց, ովքեր
իրեն ցավեցրին:**

Մազերդ ցած նետիր

Հիսուսի խաչելությունից քիչ ժամանակ առաջ Մարիամ անունով մի կին թանկագին անուշահոտություն լցրեց Հիսուսի ոտքերի վրա, ապա իր մազերով սրբեց (Հովհ. 12:3): Նրա արածը հանդուգն արարք էր. նա ոչ միայն զոհեց, ինչ որ ունեեր, այլ նաև իր վարկը: Առաջին դարի միջինարևելյան մշակույթի մեջ որևէ պատվավոր կին իր մազերը հրապարակով վար չէր նետի: Սակայն ճշմարիտ պաշտամունքը ուրիշների՝ մեր մասին ունեցած կարծիքը չէ (Բ Թագ. 6:21-22): Հիսուսին պաշտելու համար Մարիամը պատրաստ էր անպարկեշտ, նույնիսկ անբարո համարվել:

Մեզնից շատերը երբ եկեղեցի են գնում, կատարյալ լինելու ճնշումն են զգում՝ մտածելով, թե մարդիկ ի՞նչ պիտի ասեն մեր մասին: Փոխաբերական իմաստով խոսելով՝ մենք աշխատում ենք համոզված լինել, որ ամեն մազ իր տեղում է: Սակայն առողջ եկեղեցին այն տեղն է, ուր մենք կարող ենք մեր մազերը վար նետել ու չծածկել մեր թերությունները կատարելության կեղծ ծածկոցի տակ: Եկեղեցում մենք պետք է կարողանանք մեր տկարությունները երևան հանել՝ ուժ գտնելու համար, փոխանակ ծածկելու դրանք ուժեղ երևալու համար:

Պաշտամունք չի նշանակում այնպես վարվել, թե ոչ մի սխալ բան չկա, այլ ընդհակառակը, թե ամեն բան ճիշտ է, ճիշտ Աստծո և ուրիշների հետ: Երբ մեր մեծագույն վախը մեր մազերը ցած նետելն է, թերևս մեր մեծագույն մեղքը դրանք վեր պահելն է:

Աղոթք - Քննիր ինձ ու ճանաչիր իմ շավիղները, և տես, եթե իմ ճանապարհին անօրենություններ կան, առաջնորդիր ինձ քո հավիտենական ճանապարհներով (Սաղմ. 138:23-24):

Կարդա՛ր Զովհաննես 12. 1-8

Մարիամն էլ մի լիտր նարդոսի ազնիվ, մեծագին յուղ վերցրեց, Զիսուսի ոտքերն օծեց և նրա ոտքերն իր մազերով սրբեց:
 Զովհ. 12.3

Մեր պաշտամունքը ճիշտ է, երբ մենք Աստծո հետ ճիշտ ենք:

Մեզ համար լքված

Մոտ բարեկամ ունենալը մեր ցավը թեթևացնո՞ւմ է: Պատասխանելու համար այդ հարցին Վիրջինիա Համալսարանից հետազոտողներ սքանչելի մի փորձ ներկայացրին: Նրանք ուզեցին տեսնել, թե ուղեղն ինչպե՞ս է փոխազդում ցավին, երբ մարդը մենակ է դիմազրավում այն, օտարականի կամ բարեկամի ձեռք է բռնում:

Հետազոտողները այս փորձը կատարեցին բազմաթիվ գույգերի վրա և ստացան համապատասխան արդյունք: Երբ մարդը միայնակ էր կամ օտարականի ձեռքից էր բռնած ցնցման պահին, ուղեղի այն մասերը, որոնք վտանգն էին ցույց տալիս, պրկում էին ունենում: Իսկ երբ մարդը վստահելի մեկի ձեռքն էր բռնում, ուղեղը հանդարտվում էր: Բարեկամի հանգստացնող ներկայությունից ցավը ավելի տանելի է դառնում:

Հիսուսը հանգստի կարիք ուներ, երբ աղոթում էր Գեթսեմանի պարտեզում: Նա դիտեր, թե ինչ էր դիմազրավելու. ուրացում, ձերբակալություն և մահ: Նա խնդրեց իր մտերիմ բարեկամներից արթուն մնալ և աղոթել իր հետ՝ ասելով, թե Իր «հոգին մահու չափ տրտմած է» (Մատթ. 26.38): Սակայն Պետրոսը, Հակոբոսը և Հովհաննեսը քնեցին:

Հիսուսը ցավին դիմազրավեց միայնակ: Սակայն որովհետև նա այդ ցավը կրեց, մենք կարող ենք վստահ լինել, որ Աստված երբեք չպիտի լքի կամ թողնի մեզ (Եբր. 13.5): Հիսուսը տառապեց, որպեսզի մենք չունենանք Աստծո սիրուց բաժանման փորձությունը (Հռոմ. 8.39): Իր ընկերակցությունը մեզ հետ ցանկացած բան ավելի տանելի է դարձնում:

Աղոթք - Հիսուս, շնորհակալ եմ Քեզ՝ խաչը ու ցավը կրելուդ համար: Շնորհակալ եմ Հոր հետ հաղորդակցության մեջ ապրելու հնարավորությունը մեզ տալու համար:

Կարդա՛ր
 Մատթեոս 26.036-46

Ինքն ասաց. «Քեզ չեմ թողնի ու երեսից չեմ զգի»: Եբր. 13.5

Աստծո սիրո համար մենք երբեք միայնակ չենք:

Յիշիր խաչը

Մի մեծ խաչ կա իմ հաճախած եկեղեցու առջև, որ ներկայացնում է այն խաչը, որի վրա Հիսուսը մահացավ, որի վրա մեր բոլոր մեղքերը քավվեցին Իր սրբությամբ: Այնտեղ Աստված թույլ տվեց, որ Իր կատարյալ Որդին մահանա մեր գործած, ասած կամ մտածած բոլոր հանցանքների համար: Խաչի վրա Հիսուսը ավարտեց այն գործը, որ հարկավոր էր մեզ մահից փրկվելու համար, ինչին արժանի էինք (Հռոմ. 6.23):

Խաչը պատճառ է դառնում հաշվի առնելու, թե Հիսուսը մեզ համար ինչ արեց: Խաչվելուց առաջ Նա դանակոծվեց, թքոտվեց: Զինվորները եղեգով հարվածեցին Նրա գլխին, ծաղրելով ծնրադրեցին Նրա առջև: Ստիպեցին, որ Նա Իր խաչը կրի մինչև այնտեղ, ուր պիտի խաչեին Իրեն, սակայն Նա չատ տկար էր դաժան մտրակների դիմաց: Գողգոթա կոչվող վայրում խաչի վրա գամեցին Նրան ու թողեցին, որ գամերը Նրա մարմնի ծանրությունը կրեն: Վեց ժամ հետո Հիսուսը Իր վերջին շունչը առավ (Մարկ. 15.37): Մի հարյուրապետ, որ ահանատես եղավ Հիսուսի մահվան, հայտարարեց. «Այս մարդն իրո՞ք որ Աստծու Որդին էր» (Հմ. 39):

Հաջորդ անգամ երբ տեսնես խաչը, նկատի ունեցիր, թե ինչ է նշանակում այն քեզ համար: Աստծո Որդին այնտեղ չարչարվեց ու մահացավ, ապա հարուժյուն առավ՝ հավիտենական կյանքը հնարավոր դարձնելու համար:

Աղոթք - Սիրելի՛ Հիսուս, չեմ կարող սկսել շնորհակալություն հայտնել Քեզ իմ մեղքերը ներելու համար, երբ մահացար խաչի վրա: Շնորհակալ եմ Քո զոհողության համար ու հավատում եմ Քո հարության զորությանը:

Կարդա՛
Մարկ. 15.19-20,33-39
 Այս մարդն իրո՞ք որ Աստծու Որդին էր:
 Մարկ. 25.39

Քրիստոսի խաչը ցույց է տալիս մեր մեղքը իր ամենից վատ փիճակի մեջ և Աստծո սերը՝ իր լավագույն դրսևորումով:

Սիրո արժեքը

Մեր աղջիկը լաց եղավ, երբ ծնողներին ճանապարհեցինք: Մեզ Անգլիա այցելելուց հետո նրանք երկար ճամփորդություն էին սկսել դեպի տուն՝ Միացյալ Նահանգներ: «Ձեմ ուզում, որ նրանք գնան», - ասաց նա: Երբ փորձում էի նրան հանգստացնել, ամուսինս ասաց. «Մտածում եմ, որ ճշմարիտ է այսպիսի սիրո արժեքը»:

Մենք կարող ենք մեր սիրելիներից բաժանումի ցավը զգալ, սակայն Տեր Հիսուսը զգաց գերազույն բաժանումը, երբ վճարեց սիրո մեծ գինը խաչի վրա: Նա, ով թե՛ մարդ ու թե՛ Աստված էր, իրականացրեց յոթ հարյուր տարի առաջ Եսայիի արած մարգարեությունը, երբ «չատերի մեղքերը կրեց» (Ես. 53.12): Այս գլխում տեսնում ենք ցուցիչները, որոնք երևան են բերում տան տառապող ծառային, որ «մեր անօրենությունների համար դատապարտվեց» (Հմ. 5), երբ գամվեց խաչին, ու զինվորներից մեկը գեղարդով նրա կողը խոցեց (Հովհ. 19.34), և «նրա՛ վերքերով մենք բժշկվեցինք» (Ես. 53.5):

Սիրո պատճառով Հիսուսը աշխարհ եկավ ու ծնվեց որպես մանուկ: Սիրո պատճառով Նա ընդունեց օրենքի վարդապետների, ժողովրդի ու զինվորների արարքը: Սիրո պատճառով Նա չարչարվեց ու մեռավ՝ կատարյալ զոհ լինելու ու Աստծո առջև մեր փոխարեն կանգնելու համար: Մենք ապրում ենք նրա սիրո պատճառով:

Աղոթք - Տե՛ր Հիսուս Քրիստոս, Աստծո գառնուկ, որ մեր մեղքերն ես կրում, շնորհ արա մեզ և օգնիր, որ մենք էլ շնորհ ու սեր փոխանցենք ուրիշներին: Տույց տուր, թե ինչպես կարելի է Քո սերը ուրիշների հետ բաժանել:

Հիսուսը կատարյալ զոհն էր, որ մահացավ մեզ կյանք տալու համար:

Կարդա՛ր
 Եսայի 53. 9-12

...որովհետև նա իր անձը մահվան մատնեց:

Ես. 53.12

Նա հասկանում ու հոգ է տանում

Երբ մի մարդու հարց տվին, թե տգիտությունն ու անտարբերությունը հարցն՞ր են արդյոք ժամանակակից հասարակություն մեջ, կատակով ասաց. «Զգիտեմ ու չեմ կարևորում»:

Մտածում եմ, որ շատերն են այդպես դատում աշխարհի ու մարդկանց մասին: Սակայն երբ գալիս է մեր կյանքում վարանումների ու մտահոգությունների շրջան, Հիսուսը հասկանում և իսկապես հոգ է տանում: Եսայի 53-ը, որ Հին Կտակարանի մեջ Հիսուսի խաչելության մարգարեությունն է, հպանցիկ ակնարկում է Հիսուսի կրած տառապանքները: «Ու նա վշտից իր բերանն անգամ չի բացում:

Ինչպես ոչխար՝ նա մորթվելու տարվեց, և ինչպես գառ՝ անմոռնչ կանգնած է խուզողի առաջ» (Հմ. 7): «Իմ ժողովրդի անօրենությունների պատճառով նա մահվան մատնվեց» (Հմ. 8): «Տերը կամենում է մաքրել նրան վերքերից: Եթե մեղքերի համար հատուցում տաք, ապա երկարակյաց սերնդի կարժանանաք, որի միջոցով Տերը կցանկանա ազատել նրան իր ցավերից» (Հմ. 10):

Հիսուսը իր ցանկությունք մեր բոլոր մեղքերն ու հանցանքները կրեց խաչի վրա: Մեր Տիրոջից ավելի ոչ ոք չհարչարվեց մեզ համար: Նա լավ գիտեր, թե ինչն էր սիրով մեր մեղքերից ազատելու գինը և ուզելով վճարեց այդ բոլորը (Հմ. 4-6):

Հիսուսը մեռելներից հարություն առած լինելու պատճառով ողջ է ու ներկա է մեզ հետ այսօր: Ինչ վիճակում էլ լինենք, հասկանում ու հոգ է տանում: Նա մեզ պիտի առաջնորդի ցանկացած պարագայում:

Աղոթք - Տե՛ր, շնորհակալություն ենք հայտնում, որ ծանոթ ես մեր վիճակին ու հոգ ես տանում մեզ: Այսօր ուզում ենք Քեզ հետ քայլել ու պատվել Քեզ մեր արածներով:

Այստեղ չէ, այլ հարություն է առել: **Ղուկ. 24.6**

Կարդա՛ր
Եսայի 53. 1-8

Նա մեր մեղքերն էր վեցնում և մեզ համար չարչարվում:
Ես. 53.4

Տանը՝ Զիսուսի հետ

«Տան պես տեղ չկա՛»։ Այս ծանոթ արտահայտությունը ցույց է տալիս մեր մեջ խորապես արմատացած հանգստի և պատկանելություն ունենալու ցանկությունը։ Հիսուսն այս պատկանելությունն ակնարկեց, երբ իր աշակերտների հետ վերջին ընթրիքն արեց։ Այնտեղ Նա խոսեց Իրեն սպասող մահվան ու հարություն մասին, բայց խոստացավ, որ հակառակ իր մեկնելուն՝ ետ պիտի գա իրենց համար, բնակվելու տեղ տա՝ տուն պատրաստելուց հետո։

Նա այդ տեղը պատրաստեց նրանց և մեզ համար, երբ որպես անմեղ մահացավ խաչի վրա՝ Աստծո օրենքի բոլոր պայմաններն ամբողջացնելով։ Նա վստահեցրեց իր աշակերտներին, որ երբ այս բոլորն անում է պատրաստելու այս տունը, անշուշտ ետ պիտի վերադառնա նրանց համար ու միայնակ չպիտի թողնի։ Նրանք վախենալու կամ էլ մտահոգվելու կարիք չունեին իրենց կյանքի համար՝ այստեղ՝ երկրի վրա, կամ այնտեղ՝ երկնքում։

Հիսուսի այս խոսքից մենք վստահություն ու ապահովություն կարող ենք զգալ, որովհետև հավատում ենք, թե Նա տուն է պատրաստում մեզ համար։ Նա նաև իր տունը պատրաստում է մեր մեջ (տե՛ս՝ Հովհ. 14.23), ու Նա մեզնից առաջ է գնացել՝ պատրաստելու մեր երկնային տունը։ Ինչ տեսակ տան մեջ էլ որ ապրելիս լինենք այսօր, մենք Հիսուսին ենք պատկանում՝ լցված իր սիրով ու վեր բարձրացած իր խաղաղությունամբ։ Նրա հետ չկա ավելի լավ տեղ, քան տունը։

Աղոթք - Տե՛ր, երբ զգում ենք, որ անտուն ենք, մեզ հիշեցրու, որ Դու ես մեր տունը։ Թող որ այս պատկանելության զգացումը բաժանենք նրանց հետ, ում հանդիպում ենք։

Զիսուսը տեղ է պատրաստում մեզ համար, ուր պիտի ապրենք հավիտյան։

Կարդա՛ր
Յովհաննես 14.3

...զման ու ձեզ համար տեղ պատրաստեմ։

Յովհ. 14.3

Վայելի՛ր տեսարանը

Մայրամուտ: Մարդիկ մի պահ դադարեցնում են իրենց գործն ու դիտում են, նկարում ու ըմբռնելով գեղեցիկ տեսարանը:

Վերջերս կինս և ես դիտեցինք Մեքսիկայի Ծոցի մայրամուտը: Մի մեծ բազմություն էր մեզ շրջապատել, մեծ մասամբ օտարականներ, որոնք հավաքված էին ծովափին՝ դիտելու այս երեկոյան հրաշալիքը: Այն պահին, երբ ամբողջ արևը հորիզոնից ցած իջավ, ամբոխը ծափահարեց:

Ինչո՞ւ են մարդիկ այսպես պատասխանում: Սաղմոսների գիրքը առաջարկում է մի ուղեցույց: Սաղմոսերգունքը գրում է Աստծո մասին, որ հրամայում է արևին՝ փառաբանելու իր Արարչին (Սաղմ. 148:3): Եվ ուր արևի ճառագայթներն ընկնում են, մարդիկ գնում են պաշտամունքի այնտեղ:

Այն գեղեցկությունը, որ մեզ է տալիս բնությունը, խոսում է մեր հոգուն: Նա ոչ միայն կարողություն ունի մեզ կանգ առնելու ու մեր ուշադրությունը գրավելու, այլև մեր ուշադրությունը սևեռելու գեղեցկության Արարչին:

Աստծո վիթխարի արարչության հրաշքը պատճառ կարող է դառնալ մեզ մի պահ կանգնեցնելու ու հիշեցնելու, թե ինչն է իրապես կարևոր: Իվերջո, մեզ հիշեցնում է, թե Արարիչը կա օրվա ապշեցուցիչ մուտքի ու ելքի ետևում, Մեկը, որ այնքան սիրեց իր ստեղծած աշխարհը, որ եկավ փրկելու ու վերանորոգելու:

Աղոթք - Տե՛ր, վայելում եմ այն աշխարհը, որ Դու ստեղծեցիր իր զանազան գույներով: Դու և Քո ստեղծածները սքանչելի են:

Աստծուն միացիր՝ ցնծալու այն բոլոր բաների համար, որ Նա արեց:

Կարդա՛ր
Սաղմոս 148.1-6

Օրհնեցե՛ք նրան, արեգակ և լուսին, օրհնեցե՛ք նրան, բոլոր աստղեր և լույս: Սաղմ. 148.3

Անուշ բույր

Հեղինակ Ռիտա Մնտուզենը պատմում է հաճելի պատմություն Անգլիայի Դուլբր փոքրիկ գյուղաքաղաք իր այցելության մասին: Կեսօրից հետո, մինչ մի գավաթ թեյ էր խմում մի թեյարանի բացօթյա բաժնում նստած, անուշ բույր է առնում: Ռիտան հարցնում է մատուցող երիտասարդին, թե որտեղից է գալիս այն: Մատուցողը պատասխանում է. «Անցնող մարդկանցից»: Այդ գյուղաքաղաքի բնակիչների մեծամասնությունը աշխատում է մոտակա օձանեկիբի գործարանում: Երբ նրանք տուն են վերադառնում, իրենց հետ տանում են հագուստի մեջ մտած այդ անուշ բույրը:

Քրիստոնեական կյանքը նկարագրող որքա՛ն գեղեցիկ պատկեր: Ինչպես Պողոս առաքյալն է ասում, մենք ամեն տեղ տարածվող Քրիստոսի հոտն ենք (Բ Կորնթ. 2.15): Պողոսը օգտագործում է պատերազմից վերադարձող թագավորի նկարը՝ օղի մեջ բուրելով հաղթանակի ու գերիների շարաններն առաջնորդող քաջարի զինվորների տոնակատարության հոտը՝ հայտարարելով թագավորի մեծությունը (Հմ. 14): Ըստ Պողոսի՝ մենք Քրիստոսի անուշ բույրը տարածում ենք երկու ձևով: Առաջին՝ մեր խոսքերով, երբ ուրիշներին պատմում ենք Նրա մասին: Երկրորդ՝ մեր ապրած կյանքով՝ կատարելով Քրիստոսանման զոհողություն (Եփ. 5.1-2): Իմանալով հանդերձ, որ ամեն մարդ չպիտի գնահատի մեր տարածած երկնային բույրը, այնուամենայնիվ պիտի հավատանք, որ դա կյանք է բերելու շատերին: Երբ հետևում ենք Հիսուսին, մենք էլ ենք լցվում Նրա բույրով և մեզ հետ տանում ենք Նրա հոտը փողոցների մեջ՝ մեր խոսքերով ու արարքներով:

Աղոթք - Տեր Դիսուս, մեզ արա Քո գեղեցկության ու հաղորդակցության սուրհանդակները մեր տների, գրասենյակների ու շրջապատի մեջ:

Կարդա՛ր Բ Կորնթ. 2.14-16

Շնորհակալություն Աստծուն, ...և իր գիտության բույրը ամեն տեղ հայտնվում է մեզանով:
Բ Կորնթ. 2.14

Մենք Քրիստոսի բույրն ենք մարդկանց համար:

Թողնել

Մեր ամուսնություն տարեդարձի առթիվ ամուսինս երկու նստատեղով հեծանիվ վարձեց: Երբ ճանապարհ դուրս գալով սկսեցինք այն վարել, անմիջապես հասկացա, որ ամուսնուս լայն ուսերը ծածկել էին ճանապարհի իմ տեսադաշտը: Նաև ձեռքիս բռնակն էր անշարժ և չէր ազդում հեծանիվը ղեկավարելու վրա: Միայն առջևի բռնակն էր որոշում հեծանիվի ուղղությունը, իսկ իմ ձեռքի ձողը պարզապես հենարան էր ինձ համար: Ես ընտրություն ունեի կամ հավատալ, որ չեմ կարող ղեկավարել այն, կամ վստահել Մայքրին մեր ճանապարհորդությունը:

Երբ Աբրամը խնդրեց Աստծուց իր երկիրն ու ընտանիքը ունենալու մասին, Աստված շատ տեղեկություններ չտվեց որոշված վայրի մասին: Ո՛չ աշխարհագրական տվյալներ, ո՛չ բացատրություն նոր երկրի ու նրա հնարավորությունների մասին, ո՛չ էլ հուշում, թե որքան ժամանակ պիտի տևի այնտեղ հասնելը: Աստված պարզապես ասաց՝ «գնա՛» Իր ցույց տված երկիրը: Աբրամի հնազանդությունը այս ցուցումին, հակառակ մանրամասների չգոյություն ու անորոշության, նրան վարկ բերեց (Եբ. 11.8):

Եթե գտնենք մեզ անորոշության մեջ կամ ղեկավարության պակաս ունենանք, որդեգրենք Աստծուն վստահելու և հետևելու Աբրամի օրինակը: Աստված լավ ձևով պիտի ղեկավարի մեզ:

Աղոթք - Օգնիր ինձ, Աստված, Քեզ վստահելու իմ կյանքի անորոշությունների մեջ:

Կարդա՛ ԾՆՈՒՄ 12.1-9

Աստված ասաց Աբրամին. «...Գնա այն երկիրը, որ ցույց կտամ քեզ»: ԾՆՈՒՄ 12.1

Տալու պարզևր

Մի եկեղեցու հովիվ կյանք տվեց «նա իր շապիկն էլ քեզ կտա» խոսքին, երբ իր եկեղեցու անդամներին ներկայացրեց այս ցնցող մարտահրավերը. «Ի՞նչ կլինի, եթե մեր հագած վերարկուները հանենք և կարոտյալներին տանք»: Ապա իր վերարկուն հանեց ու դրեց ամբիոնի մոտ: Շատերը հետևեցին նրա օրինակին: Այս դեպքը պատահեց ձմռան ցուրտ եղանակին, և հեշտ էջր ներկաների համար առանց վերարկուի տուն վերադառնալ: Սակայն այդ օրը բազմաթիվ չքավորների համար ձմռան ցուրտ եղանակը մի քիչ ջերմացավ:

Երբ Հովհաննես Մկրտիչը թափառեց անապատում, նա խստորեն դիմեց իրեն լսելու և մկրտվելու համար եկած բազմությանը. «Իժերի՛ զավակներ:

Ապաշխարության արժանի պտուղների արարեք» (Ղուկ. 3.7-8): Ու նրանք վախենալով հարցրին. «Հապա ի՞նչ անենք»: Նա հետևյալ խրատը տվեց ու ասաց. «Նա, ով երկու հագուստ ունի, մեկը թող չունեցողին տա, իսկ նա էլ, ով ուտելիք ունի, թող նույնն անի» (Հմ. 10-11): Ծջմարիտ ապաշխարությունը առատաձեռն ու բազմաշնորհ սիրտն է տալիս:

Որովհետև «Աստված սիրում է հոժարությամբ տվողին», տալը երբեք տրտմությամբ և հարկադրաբար չպիտի լինի (Բ Կորնթ. 9.7): Սակայն երբ մենք հոժարությամբ՝ ազատ կամքով ու առատաձեռնորեն ենք տալիս, տեսնում ենք, որ տալն իսկապես ավելի մեծ օրհնությունն է, քան ստանալը:

Աղոթք - Տե՛ր, շնորհակալ ենք Քո տված բոլոր օրհնությունների համար: Ներիր մեզ, երբ հաճախ Քո տված օրհնությունները սովորական ենք դիտում: Տո՛ւյց տուր մեզ, թե ի՞նչ կարող ենք տալ մեր ունեցածներից՝ ուրիշի կողմից օրհնված լինելու այսօր:

Ով բաշխի առատորեն՝ օրհնված կլինի: *Առակներ 11.26*

Կարդա՛ր Ղուկաս 3.7-14

Ամեն մեկը թող տա, ինչպես որ սրտում հոժարությամբ կա, և ոչ թե տրտմությամբ կամ հարկադրանքով...
Բ Կորնթ. 9.7

Միշտ լսել

Հայրս քիչ է խոսում և լսելու դժվարությունն ունի զինվորական ծառայության պատճառով և հիմա լսողական գործիք է օգտագործում: Մի օր, երբ ես ու մայրս մի քիչ շատախոսեցինք, որ իր կարծիքով չափազանց էր, նա կատակով ասաց. «Երբ որ ցանկանամ մի քիչ լռություն ու խաղաղություն, միայն սա պիտի անեմ»: Ձեռքերը բարձրացրեց, ականջների սարքերը փակեց ու ձեռքերը գլխի ետևում ծալելով՝ աչքերը ժպիտով փակեց:

Մենք երկուսով ծիծաղեցինք: Ըստ իրեն՝ մեր խոսակցությունն ավարտվել էր: Հորս արածն ինձ հիշեցրեց, թե Աստված որքան է մեզնից տարբեր: Նա միշտ ուզում է լսել իր զավակներին: Սա ապացուցվում է Աստվածաշնչի ամենից կարճ աղոթքներից մեկի միջոցով: Մի օր պարսիկների Արտաշես թագավորի սպասավորը՝ Նեեմիհն, տխուր էր: Երբ թագավորը հարցրեց նրան, թե ինչու է տխուր, նա վախով խոստովանեց, թե պատճառը իր նախնիների քաղաք Երուսաղեմն է, որ ավերակված է: Նեեմիհն գրում է. «Թագավորն ինձ ասաց. «Դրա համար ի՞նչ ես ուզում խնդրել ինձնից»: Ես աղոթքի կանգնեցի ու միտքս ուղղելով երկնքի Տեր Աստծուն՝ ասացի թագավորին» (Նե. 2.4): Այդ ժամանակ Նեեմիհի աղոթքը կարճ տևեց, սակայն Աստված լսեց նրան: Այս կարճ աղոթքը գործի դրեց Աստծու ողորմած պատասխանը Նեեմիհի բազմաթիվ աղոթքներին, որ բարձրացրել էր Երուսաղեմի համար: Ճիշտ այդ պահին Արտաշես թագավորը դրական պատասխան տվեց Երուսաղեմը վերաշինելու Նեեմիհ խնդրանքին:

Կարդա՛ր Նեեմի 2.1-9

Տերը մոտ է բոլոր նրանց, ովքեր կանչում են իրեն, բոլոր նրանց, ովքեր կանչում են իրեն ճշմարտապես: Սաղմ. 144.18

Աղոթք - Շնորհակալ եմ, սիրող Հայր Աստված, աղոթքի առիթի ու առանձնաշնորհումի օրհնության համար:

Աստված մեծ է՝ լսելու մեր ամենափոքր ձայնն անգամ:

Կծկվող դաշնամուր

Երեք տարի անընդմեջ տղաս մասնակցեց դաշնամուրային համերգների: Անցյալ տարի, երբ նվագեց, նկատեցի, թե ինչ գեղեցիկ կերպով կատարեց կտորը: Երկու հատված նվագելուց հետո կողքիս նստեց ու մեղմ ձայնով փսփսաց. «Մայրի՛կ, այս տարի դաշնամուրը ավելի փոքր էր»: Ես ասացի. «Ո՛չ, անցյալ տարվա նվագածդ դաշնամուրն է: Դո՛ւ ես ավելի մեծ: Դո՛ւ ես մեծացել»:

Հոգևոր զարգացումը Ֆիզիկական աճի նման է. հաճախ է այդպես պատահում: Շարունակական երևույթ է, որ իր մեջ ներառում է նաև Հիսուսին նմանվելը ու տեղի է ունենում մեր մտքի նորոգությունը (Հռոմ. 12.2): Երբ Սուրբ Հոգին գործում է մեզ համար, մենք կարող ենք մեր մեղքերը հասկանալ:

Ցանկանալով Աստծուն փառաբանել՝ մենք ջանք ենք գործադրում փոխվելու: Երբեմն հաջողություն ենք ունենում, մի այլ պարագայում փորձում և ձախողվում ենք: Եթե այնպես է լինում, որ ոչինչ չի փոխվում մեր մեջ, վհատվում ենք: Մենք կարող են ձախողումը հավասարեցնել շարժումի պակասին, երբ փաստ է, որ մենք ընթացքի մեջ ենք:

Հոգևոր աճը իր մեջ ընդգրկում է Սուրբ Հոգուն՝ փոխելու մեր կամքը և ժամանակը: Մեր կյանքի որոշ հանգրվաններում մենք կարող ենք ետ նայել և տեսնել, թե հոգևոր առումով աճ ենք ունեցել: Թող Աստված մեզ տա այն հավատքը, որ «նա, ով ձեր մեջ այս բարի գործն սկսեց, կկատարի էլ մինչև Հիսուս Քրիստոսի օրը» (Փիլիպ. 1.6):

Աղոթք - Սիրելի՛ Հայր, տուր ինձ ցանկություն հոգևոր առումով աճելու: Ուզում եմ Քեզ պատվել իմ կյանքով ու վաշելել Հոգու կատարած գործի փորձառությունը իմ մեջ:

Կարդա՛ր Փիլիպ. 1.1-11

...նա, ով ձեր մեջ այս բարի գործն սկսեց, կկատարի էլ մինչև Հիսուս Քրիստոսի օրը:
Փիլիպ. 1.6

Հոգևոր աճը ընթացք է:

Մեռած, բայց կենդանի

Ապրիլի 24-ը մահվան մասին է խոսում, սակայն միաժամանակ կյանքի մասին է: Այո՛, թշնամին ահարկու և դիվային գաղափարներով ու իր հոշոտող ճիրանների մեջ առավ ողջ հայությունը. Չարգեց, թալանեց, տեղահանեց ու սպանեց: Նա փորձեց բնաջնջել և արմատախիլ անել հային քստմենքի ոճրագործությամբ՝ արձանագրելով հայ ժողովրդի պատմության ամենից սարսափելի ու սահմուկեցուցիչ էջը: Մեր կորուստը մեծ ու անհաշվելի եղավ: Նրանք ընկան, բայց մենք շարունակում ենք ապրել:

Հարց ենք տալիս, թե ինչի համար եղավ այս ամենը: Ո՞րն էր մեր հայրերի ու մայրերի հանցանքը: Շատերի կարծիքով, մեր հայ և քրիստոնյա կամ լավագույնը և առաջանցիկ լինելն էր պատճառը: Ինչ էլ լինի, իրողությունը նույնն է մնում: Մենք նահատակվեցինք ու տեսանք վիշտ, ցավ, տառապանք և մահ: Այսօր հիշում ենք մեր նահատակներին, սգում ու հարգում: Թեև նրանք մեռան, սակայն նրանց հոգին ապրում է ու պետք է ապրի մեր մեջ: Նրանք մեռան Քրիստոսի հետ, ու հավատում ենք, որ ապրում են Նրա հետ: Այս խորհուրդներով ու հավատքով է պետք ոգեկոչել Ապրիլյան Եղեռնը: Նրանք մեռան, որպեսզի հայն ու հայությունը կանգուն մնան Աստծու շնորհով: Մեռած, բայց կենդանի, մահ, բայց նաև կյանք, ինչպես Տեր Հիսուսի մահն ու հրաշափառ հարությունը: Մենք էլ մոխրից հարություն առնելով շարունակում ենք մեր երթը: Հայն ապրում է այսօր՝ Հայաստանի, ազատագրված Արցախի ու ազատագրվելիք հայրենի հողի վրա համառորեն բազմանալու ու մեծանալու Երկնավորի շնորհով:

Աղոթք - Երկնավոր Դայր, աղոթում ենք, որ մեր նահատակների արյունը մարտահրավեր լինի ամեն մի հայի համար՝ կյանքի պայքարը մղելու:

Կանգնենք ու միասնաբար գոչենք մեր բանաստեղծների հետ.

«Ներկա՛» և «Կա՛նք, պիտի լինենք ու դեռ շատանա՛նք»:

**Կարդա՛ր
Յոնմեացիներ 8.1-10**

Եվ եթե Քրիստոսի հետ մեռանք, հավատում ենք, որ նրա հետ էլ կապրենք:
Յոնմ. 6.8

2 ձանձրանալ

5⁰ տարուց ավելի իմ խորհրդատուն և բարեկամը՝ Բոբ Ֆոսթրըրը, երբեք չձանձրացավ ինձնից: Իր երկարատև բարեկամությունն ու քաջալերանքը, նույնիսկ իմ վատ պահերին, ինձ նեցուկ եղան:

Մենք հաճախ մեզ գտնում ենք օգնություն ձեռք մեկնելու վիճակում նրան, ով նեղության մեջ է և կարեկցության կարիք ունի: Սակայն երբ անմիջապես չենք տեսնում արդյունքը, տկարանում ենք ու տեղի տալիս: Նկատում ենք, որ մեր հույսը անմիջական փոփոխություն տեսնելու վերածվել է շարունակական ընթացքի:

Պողոս առաքյալը հորդորում է, որ համբերող լինենք իրար օգնելու պարագայում՝ նկատի ունենալով արգելքներն ու պայքարը: Երբ գրում է. «Իրար բե՛ռը վերցրեք և այսպես Քրիստոսի օրենքը կատարեցեք» (Գաղ. 6.2), համեմատում է մեր պարտականությունը գործի հետ, ժամանակը և սպասումը հողագործի հետ, որ սպասում է հունձքի:

Ինչքա՞ն ժամանակ մենք պետք է աղոթենք և կարեկցենք նրանց, ում սիրում ենք: «Բարին գործելուց չձանձրանանք, որովհետև իր ժամանակին կհնձենք, եթե չթուլանանք» (Գաղ. 6.9): Քանի՞ անգամ պիտի մեր օգնության ձեռքը մեկնենք: Ուրեմն քանի առիթն ունենք, բարիք անենք բոլորին, մանավանդ հավատքի ընտանիքի անդամներին:

Տերը քաջալերում է մեզ այսօր Իրեն վստահելու, հավատարիմ լինելու՝ ուրիշներին օգնելու համար, անդադար աղոթելու և տեղի չտալու:

Աղոթք - Երկնքում ապրող Աստված, հույս և հարատևություն ենք փնտրում՝ շարունակելու կարեկցություն ցույց տալ ուրիշներին:

Աղոթքով խնդրում ենք Աստծուց, որ «կարող է առատությամբ ամեն բանից ավելին անել, քան որ խնդրում ենք ու իմանում» (Եփես. 3.20):

Կարդա՛ր Գաղ. 6. 1-10

Բարին գործելուց չձանձրանանք, որովհետև իր ժամանակին կհնձենք, եթե չթուլանանք:
Գաղ. 6.9

Մեկը՝ դիպչելու համար

Կանադական մի մեքենայի մեջ եղող ուղևորները ականատես եղան սրտաճմլիկ տեսարանի պրկված մի պահից հետո: Նրանք տեսան, որ մի 70 տարեկան կին ջերմորեն իր ձեռքն էր երկարում երիտասարդ մի մարդու, որի բարձր ձայնը և խանդարող խոսքերը վախ էին ազդում մյուսներին: Կնոջ ցուցաբերած ազնվությունը հանդարտեցրեց երիտասարդին, որ ընկավ մեքենայի հատակին արցունքոտ աչքերով: Նա ասաց. «Շնորհակալ եմ, տատի՛կ»: Ուտքի ելավ ու թողեց գնաց: Թեպետ կինը ընդունեց, որ սարսափած էր, բայց ասաց. «Ես մայր եմ, ու նա կարիք ուներ մեկին դիպչելու»: Մինչդեռ եթե ավելի սթափ դատեր, այդ կինը պիտի հեռավորություն պահեր, սակայն նա վտանգն անտեսեց ու սեր ցուցաբերեց:

Կարդա՛ր
Ղուկաս 5.12-26

Եվ նա, իր ձեռքը մեկնելով, դիպավ նրան...

Ղուկ. 5.13

Հիսուսը գիտի մի այդպիսի սիրո արտահայտություն: Նա չվախեցավ, երբ բորոտ մի մարդ մոտեցավ իրեն ու բժշկություն աղերսեց: Ոչ էլ անճարակ էր ուրիշ կրոնական առաջնորդների նման, որոնք հավանաբար միայն դատապարտում էին մարդուն, որ բորոտությունը իրենց մոտ էր բերել (Ղևտ. 13.45-46): Ընդհակառակը, Հիսուսը կարեկցություն էր ձեռքը երկարեց մեկին, որին ոչ ոք չպիտի համարձակվեր դիպչել, և բժշկեց նրան:

Երախտապարտ ենք, որ Հիսուսը եկավ այդ մարդուն և մեզ առաջարկելու այն, ինչ որ ոչ մի օրենք չէր կարող՝ իր ձեռքին ու սրտին դիպչել:

Աղոթք - Երկնքում եղող Հայր, խնդրում ենք օգնիր մեզ տեսնելու մեր անձերը այդ անհույս մարդու կերպարում, ինչպես նաև Քո Որդու ողորմությամբ լեցուն աչքերի մեջ, որ իր ձեռքը երկարեց ու դիպավ նրան:

Ոչ մեկը մեծ նեղություն կամ պիղծ չէ Հիսուսի դիպչող ձեռքի համար:

Լեզուն սովորել

Կանգնեցի ջամայկական եկեղեցու հավատացյալների մի փոքր խմբի մոտ և ճիգ գործադրելով տեղական լեզվով ասացի. «Ուազուան Ջամայկա»: Պատասխանն իմ ակնկալածից ավելին էր. ինձ ժպիտներով ու ծափահարություններով դիմավորեցին:

Իրականում ես պարզապես ասացի սովորական ողջույնը իրենց Փաթուկա լեզվով. «Ի՞նչ է պատահել»: Բայց այդ խոսքերով ես նրանց ասում էի. «Ես ձեզ այնքան եմ սիրում, որ ուզում եմ ձեր լեզվով խոսել»: Անշուշտ, ես դեռ լավ չգիտեի նրանց լեզուն՝ շարունակելու խոսքս, սակայն դա հարմար պահ էր:

Երբ Պողոս առաքյալը կանգնեց Աթենքի ժողովրդի առջև, ցույց տվեց, թե ծանոթ էր նրանց մշակույթին, և ասաց, որ նկատել էր մի գոհասեղան՝ «Անծանոթ Աստծուն», ու մեջբերեց նրանց բանաստեղծներից մեկից: Բնականաբար ոչ բոլորը հավատացին Պողոսի պատգամին Հիսուսի հարություն մասին: Սակայն ոմանք ասացին. «Այդ մասին քեզանից կրկին կլսենք» (Գործք Առ. 17.32): Երբ ուրիշների հետ խոսում ենք Հիսուսի և Իր բերած փրկության մասին, Աստծո խոսքը մեզ ցույց է տալիս, թե երբ հաղորդակցվում ենք ուրիշների հետ, սովորենք նրանց լեզուն, որպես միջոց գործածենք այն՝ բարի լուրը պատմելու (տե՛ս՝ Ա. Կորնթ. 9.20-23):

Մինչ գտնում ենք «Ուազուան» ուրիշների կյանքում, ավելի հեշտ պիտի լինի նրանց հետ բաժանել այն, ինչ որ Աստված է արել մեր կյանքում:

Աղոթք - Տեր, մեզ ցույց տուր այն, ինչ որ կարևոր է ուրիշներից: Օգնիր մեզ նախ նրանց հետաքրքրությունների մասին մտածել և ստեղծել առիթներ խոսելու Հիսուսի սիրո մասին:

Մինչ Հիսուսի մասին խոսելը ուրիշների մոտ, նախ նրանք թող տեսնեն, թե որքա՞ն ես սիրում նրանց:

**Կարդա՛ր
Գործք Առ. 17.22-32**

Որովհետև շրջելիս և ձեր պաշտամունքների առարկաները դիտելիս մի սեղան էլ գտա, որի վրա գրված էր «ԱՍԾԱՆՈԹ ԱՍՏՈՒՆ»: Գործք Առ. 17.23

Բարկություն այլընտրանքը

Մի առավոտ Փերթում (Ավստրալիա) Ֆրոն Մալհոլանդը տեսավ, որ իր մեքենան չկար: Նա գլխի ընկավ, որ սխալմամբ արգելված տեղ կանգնեցնելու համար ոստիկաններն էին տարել: 600 դոլար տուգանք վճարելուց ու բազմաթիվ դժվարություններից հետո Մալհոլանդը զգված էր, սակայն որոշեց չբարկանալ այն մարդու վրա, որի հետ աշխատում էր մեքենան ետ ստանալու համար: Փոխանակ իր մտածածն արտահայտելու՝ Մալհոլանդը զվարճալի մի ոտանավոր գրեց այս պատմության մասին ու կարդաց այնտեղ աշխատող մարդուն, որին հանդիպել էր տուգանված մեքենաների բախում: Մարդուն դուր եկավ ոտանավորը, ուստի նրանց միջև տգեղ ու անտեղի խոսակցություն չեղավ: Առակաց գիրքը մեզ սովորեցնում է. «Մարդու համար փառք է հեռու մնալ հայհոյանքներից» (Առ. 20.3): Կռիվը այդ շփումն է, որ կամ եռում է մակերեսի տակ, կամ պայթում է մարդկանց միջև, որոնք համաձայնության չեն գալիս:

Աստված մեզ տվել է հնարավորություն ուրիշների հետ խաղաղ ապրել: Նրա խոսքը մեզ վստահություն է ներշնչում, թե կարելի է բարկության զգացում ունենալ՝ առանց թույլ տալու, որ այն եռա կամ բորբոքվի մեղանչելու աստիճան (Եփ. 4.26): Նրա Հոգին օգնում է մեզ մարել բարկության կայծերը, որոնք մղում են մեզ անելու և ասելու բաներ՝ հարվածելու նրանց, ովքեր նեղում են մեզ: Աստված նաև մեզ տվել է Իրեն հետևելու օրինակը, երբ Չղազրգիո լինենք (Ա. Պետ. 2.23): Նա գլթած ու ողորմած Աստված է, համբերատար ու առատաձեռն՝ լեցուն կարեկցությամբ և ճշմարտությամբ (Սաղմ. 85.15):

Աղոթք - Սիրելի Աստված, խնդրում եմ օգնի ինձ բարկությունս կառավարելու, որպեսզի ինձ մեղքի չառաջնորդի: Քո Սուրբ Հոգու միջոցով տուր ինձ կարողություն անձիս վրա վերահսկելու:

Կարդա՛ր
Առակներ 20. 1-15

Մարդու փառքն է
հեռու մնալ հայհոյանքներից:

Առ. 20.3

Խոսեն եղիր:

Երբ լույսը բացվի

**Շատ ուշ էր, երբ կանգ առանք գիշերելու մի պանդոկում, Մյու-
նիխ քաղաքի մուտքի մոտ: Ուրախացանք, երբ տեսանք, թե
հանգստավետ սենյակն ուներ պատշգամբ, հակառակ նրան, որ
ճնշող մառախուղը անկարելի էր դարձնում մթի մեջ որևէ բան
տեսնել: Սակայն մի քանի ժամ անց, երբ արևը ծագեց, մառախու-
ղը սկսեց չքանալ, ու մենք տեսանք այն,
ինչ որ քողարկված էր նախորդ գիշեր: Կատարյալ հովվերգական մի տեսարան,
խաղաղ և լեցուն կանաչ մարգագետին,
ուր ոչխարներ էին արածացնում՝ վզերից
կախված փոքր հնչուն զանգակներով, և
մեծ սպիտակ ամպեր կային երկնքում,
որոնք կարծես ավելի ոչխարներ էին, մեծ,
բրդոտ ոչխարներ: Շատ անգամ կյանքն
էլ կարող է ամպոտել հուսահատության ու վհատության մգու-
թյամբ: Հանգամանքները կարող են շատ մուլթ թվալ, ու մենք մեր
հույսը կորցնում ենք: Սակայն ինչպես արևը ամպն ու մշուշն է
վանում մի կողմ, մեր հավատքն էլ կարող է կասկածի մուլթը վա-
նել: Եբրայեցիների 11-ը սահմանում է հավատքը որպես «հու-
սացված բաների հաստատումը ու չերևացող բաների ապացույց-
քը» (Հմ. 1): Հատվածը շարունակում է մեզ հիշեցնել Նոյի հա-
վատքը, որ «դեռ չերևացած բաների մասին պատգամ առնելով»
հնազանդվեց Աստծուն (Հմ. 7): Եվ Աբրահամը գնաց այնտեղ, ուր
որ Աստված առաջնորդեց, հակառակ այն իրողության, որ չգի-
տեր, թե ուր կարող էր լինել այդ տեղը (Հմ. 8): Թեև մենք Նրան
չենք տեսել ու չենք կարող զգալ Իր ներկայությունը, Աստված
միշտ ներկա է և պիտի օգնի մեզ մուլթ ու խավար գիշերների մեջ:**

Աղոթք - Հայր, շնորհակալ եմ մեր ամբողջ կյանքում մեզ հետ քայլե-
լու Քո խոստումի համար: Կասկածի պահերից օգնիր մեզ վստահություն
ունենալ, թե Դու ղեկավարն ես, ու մենք կարող ենք Քեզ վստահել:

Կարդա՛ր Եբրայեցիներ 11.1-8

Հավատն էլ հու-
սացված բաների
հաստատումը ու
չերևացող բաների
ապացույցն է:
Եբր. 11.1

Հավատքը ուղեցույցն է, որ տեսնում է մշուշի մեջ:

Կորի թե՛ն Բում

Չավիտյան սիրված

Գրեթե անկարելի է մի օր անցկացնել առանց անարգվելու, անտեսվելու կամ վիրավորվելու: Երբեմն էլ մենք ենք մեր հանդեպ անուամ այդ անտեսումն ու անարգանքը:

Դավթի թշնամիները հոխորտում էին, վախեցնում, անարգանքով հարձակվում իր վրա ու վատը խոսում նրա մասին: Այդ պատճառով էլ նրա փառքն ու արժանապատվությունը ջախջախված էին (Սաղմ. 4.1-2): Նա դարման ու օգնություն է խնդրում Աստծուց իր տագնապալից վիճակից դուրս գալու համար:

Ապա նա հիշում է. «Իմացե՛ք, որ Տե՛րը զարմանահրաշ գործեր արեց իր սրբի համար» (Հմ. 4): Զանազան անգլերեն

թարգմանություններ փորձում են ցույց տալ Դավթի այս հանդուգն հայտարարության ամբողջական պատկերը՝ թարգմանելով «հավատարիմ ծառա»-ն կամ «նվիրված ծառա»-ն որպես «աստվածավախ»: Երբայիբն *hesed* բառը, որ բառացի ակնարկում է Աստծու սիրո մասին ու գործության ուխտին, կարելի է ներկայացնել որպես «նրանց, որոնց Աստված պիտի սիրի հավիտյանս հավիտենից»: Մենք էլ պիտի հիշենք, որ հավիտյան սիրված ու հատուկ կերպով առանձնացված ենք Աստծու կողմից, իր սիրելի Որդու նման լինելու իր զավակները հավիտենապես: Փոխանակ վհատվելու՝ մենք մեզ կարող ենք հիշեցնել մեր Հորից ձրիաբար ստացած սերը: Մենք իր սիրելի զավակներն ենք: Ավարտը լոկ հուսահատությունն է, այլ խաղաղություն և ուրախություն (Հմ. 7-8): Նա երբեք մեզ չի լքում և երբեք չի դադարում սիրելուց:

Աղոթք - Երկնքում ապրող Չայր, մարդկանց խոսքերը կարող եմ մեզ խորապես վիրավորել: Սակայն Քո խոսքերը մեզ բուժում ու մխիթարում եմ, և Դու մեզ վստահեցնում ես, թե մեզ սիրում ես հավիտյան:

Աստծո սիրո ճշմարիտ չափանիշը իր անսահման սերն է մեր հանդեպ:

Կարդա՛ր Սաղմոս 4.1-8

Իմացե՛ք, որ Տե՛րը զարմանահրաշ գործեր արեց իր սրբի համար:

Սաղմ. 4.4

Հարցեր Աստծուն

Ի՞նչ պիտի անես, եթե Տերը քեզ հայտնվի աշխատանքային օրվա ընթացքում պատգամով: Սա պատահեց Իսրայելի նախնիներից մեկին՝ Գեղեոնին: Տիրոջ հրեշտակը երևաց նրան ու ասաց. «Տերը քեզ հետ է, ով գորավոր կտրիճ»: Սակայն նա ասաց. «Աղաչում եմ քեզ, Տե՛ր իմ, եթե Տերը մեզ հետ է, ինչո՞ւ այս բոլոր չարիքները եկան մեզ վրա...» (Դատ. 6.12-13): Գեղեոնը ուզեց իմանալ, թե ինչու է այնպես թվում, որ Աստված իրենց մոռացել է:

Աստված չպատասխանեց այդ հարցին: Երբ Գեղեոնը Իսրայելի ժողովրդի հետ յոթ երկար տարիներ դիմացավ թշնամու հարձակումներին, սովի և քարայրների մեջ թաքնվելուն, Աստված բնավ չբացատրեց, թե ինչո՞ւ չմիջամտեց: Աստված կարող էր ամեն ինչ վերագրել Իսրայելի անցյալ մեղքերին, սակայն ապագայի համար Նա Գեղեոնին հույս տվեց: Աստված ասաց. «Գնա՛ քո այդ գորությամբ... Տերը քեզ հետ է, և դու մազիամացիներին կջարգես, ինչպես մեկ մարդու» (Հմ. 14, 16):

Երբևէ մտածե՞լ ես, թե ինչու է Աստված թույլ տվել, որ ցավ ունենաս կյանքիդ մեջ: Փոխանակ այդ հարցին պատասխանելու՝ Աստված կարող է քեզ գոհացնել Իրեն մոտ լինելու համար այսօր ու հիշեցնելու, որ դու կարող ես Իր գորությանը վստահել, երբ տկար զգաս: Երբ Գեղեոնը վերջապես համոզվեց, որ Աստված իր հետ է, գոհասեղան պատրաստեց և այն կոչեց «Տիրոջը խաղաղություն» (Հմ. 24): Խաղաղություն կա՛ իմանալով, թե ինչ որ անենք և ուր որ զնանք, մենք Աստծո հետ ենք, որ խոստացել է երբեք չլքել մեզ ու բոլոր նրանց, ովքեր Իրեն են հետևում:

Աղոթք - Տե՛ր, օգնիր ինձ, որ Քեզ վստահեմ նույնիսկ երբ չեմ հասկանում, թե ինչու եմ որոշ բաներ պատահում: Քեզ եմ դիմում ինձ հարկավոր խաղաղության համար:

Ի՞նչը կարող է ավելի լավ լինել, քան ստանալ մեր հարցերին պատասխաններ, բարի ու հզոր Աստծուն վստահել:

Կարդա՛
Դատ. 6.11-16, 24

Գնա՛ քո այդ
գորությամբ... Տերը
քեզ հետ է:
Դատ. 6.14, 16

Միայն մեկ հպում

Երբ առիթ եղավ Արևելյան Աֆրիկայի հեռավոր շրջաններում բժշկական առաքելություն կատարելու, Քայլին ուրախությամբ փափագեց այդ ծառայությունն անել, սակայն մի քիչ անհանգստացավ: Նա բժշկական որևէ փորձառություն չուներ, հակառակ այն բանի, որ կարող էր հիվանդներին հիմնականում անհրաժեշտ օգնությունը ցույց տալ:

Երբ նա զնաց, այնտեղ հանդիպեց մի կնոջ, որ ահավոր, սակայն բուժելի հիվանդություն ուներ: Կնոջ փաթաթված ոտքը ետ մղեց իրեն, սակայն Քայլին գիտեր, որ անպայման մի բան պիտի աներ: Մինչ կմաքրեր ու կփաթաթեր նրա ոտքը, կինը սկսեց լալ: Մտահոգված՝ Քայլին հարցրեց, թե արդյոք ցա՞վ պատճառեց: «Ո՛չ, պատասխանեց կինը, ինը տարվա մեջ առաջին մարդն ես, որ դիպչում է ինձ»:

Բորոտությունը մի հիվանդություն է, որ մարդկանց ստիպում է հեռու մնալ հիվանդներից: Հին հրեական սովորությունը հստակ ուղեցույցներ ուներ՝ արգելելու այդ հիվանդության տարածումը: Օրենքը հայտարարում էր, որ նրանք առանձին պիտի բնակվեին, բնակավայրից հեռու (Ղևտ. 13.46):

Դրա համար էր զարմանալի, որ մի բորոտ մոտեցավ Հիսուսին՝ ասելով. «Տե՛ր, եթե ուզես՝ կարող ես ինձ մաքրել» (Մատթ. 8.2): Հիսուսը, երկարելով ձեռքը, դիպավ նրան և ասաց. «Ուղում եմ, մաքրվի՛ր» (Հմ. 3):

Հիվանդի ոտքին դիպչելով՝ Քայլին սկսեց ցույց տալ Հիսուսի անվախ ու կամրջող սերը: Մի հպումը մեծ տարբերություն բերեց:

Աղոթք - Տե՛ր, ուզում եմք ցույց տալ այն անվախ սերը, որ Դու ցույց տվեցիր, երբ այս աշխարհի վրա էիր քայլում:

Մենք ի՞նչ տարբերություն կարող ենք բերել, երբ հաղթենք մեր վախերին և վստահենք Աստծուն:

Կարդա՛ր
Մատթեոս 8.1-4

Հիսուսը, ձեռքը
մեկնելով, դիպավ
նրան... Մատթ. 8.3

Միայնակ տիեզերքում

Ապուլլոն 15-ի տիեզերագնաց Ալֆրեդ Ուորդենը հասկացավ, թե ինչ է նշանակում տիեզերքում լինել: 1971-ին նա երեք օր սավառենց միայնակ էնդովրը տիեզերանավի խցիկում, մինչ իր երկու տիեզերագնաց ընկերները շարունակեցին իրենց գործը հազարավոր մղոններ ներքև եզոզ լուսնի մակերեսին: Ուորդենի միակ ընկերակիցը այդ օրերին աստղերն էին, որոնք այնքան խիտ էին, որ թվում էր՝ պատել էին իր շուրջը՝ լույսի պատյանի պես:

Կարդա՛
ԾՆՈՒՄ 28.10-17

Տերն այստեղ է
իսկ ես չգիտեի:
ԾՆՈՒՄ. 28.16

Մինչ արևը մայր մտավ Հին Կտակարանի հերոսներից Հակոբի վրա, տնից հեռու իր առաջին գիշերը ինքն էլ միայնակ զգաց, սակայն այլ պատճառով: Նա փախչում էր իր ավագ եղբորից, որ ուզում էր իրեն սպանել՝ անդրանիկ լինելու օրհնությունը գողանալու համար: Երբ նա գիշերը քնով անցավ, երազում տեսավ երկիրը երկնքին կապող մի սանդուղք: Մինչ նա տեսավ նրա վրայից ելնող ու իջնող Աստծո հրեշտակներին, լսեց Աստծո հստակ ձայնը, որ խոստացավ իր հետ լինելու ու օրհնելու նրան իր զավակների միջոցով: Ու երբ Հակոբն արթնացավ, ասաց. «Տերն այստեղ է, իսկ ես չգիտեի» (ԾՆՈՒՄ. 28.16):

Հակոբը իրեն մեկուսացրել էր իր արած խաբեություն համար: Սակայն հակառակ իր ձախողության ու չար արարքին՝ նա Աստծո ներկայություն մեջ էր, որի ծրագրերը շատ ավելի լավ ու համապարփակ են, քան մերը: Երկիրքը ավելի մոտ է, քան մենք խորհում ենք, ու «Հակոբի Աստվածը» մեզ հետ է:

Աղոթք - Հայր, շնորհակալ եմք, որ Հակոբի պատմության միջոցով մեզ ցույց ես տալիս Քո անտեսանելի ներկայության ու բարության փառքը, որ մեր երևակայածից շատ ավելին է:

Աստված ավելի մոտ է, քան մենք մտածում ենք:

Հինգ թույլի օրենք

Կարդացի Հինգ թույլի օրենքի մասին, որ մի մայր էր սահմանել իր զավակների համար: Նրանք Հինգ թույլ առաջ կազմ ու պատրաստ պիտի լինեին ամեն օր՝ դպրոց գնալու ժամից առաջ:

Նրանք մոր շուրջ էին խմբվում, և նա յուրաքանչյուրի համար աղոթում էր՝ խնդրելով Տիրոջ օրհնությունը օրվա համար: Հետո համբուրում էր, ու նրանք վազելով գնում էին: Նույնիսկ դրացիների զավակներն էին ներառվում աղոթքի մեջ, եթե այնտեղ լինեին: Զավակներից մեկը տարիներ հետո ասում է, թե ինքը այդ փորձառությունից սովորել է աղոթքի կարևորությունը ամեն օրվա համար:

101-րդ Սաղմոսի հեղինակը գիտեր աղոթքի կարևորությունը: Սաղմոսը կոչվում է «Բորոտի աղոթքը, երբ նա իր անձկությունից մեջ Տիրոջ առաջ դրեց իր խնդրանքները»: Նա աղերսում է՝ ասելով. «Տե՛ր, լսիր իմ աղոթքը, աղաղակս թող հասնի քեզ: ...Նեղությունս օրը ի՛նձ մոտեցրու ականջը քո. երբ ձայն տամ քեզ՝ իսկույն լսի՛ր ինձ» (Հմ. 2-3): Աստված ցած է նայում «իր սրբություն բարձրությունից, ...երկնքից երկիր...» (Հմ. 19):

Աստված սիրում է քեզ և ուզում է լսել քեզ: Ամեն օր Հինգ-թույլի օրենքին հետևես կամ ոչ օրհնություն խնդրելու համար կամ կարիք ունենաս ավելի ժամանակ անցկացնելու իր հետ քո նեղությունից մեջ, խոսիր Աստծո հետ: Քո օրինակը կարող է մեծ ազդեցություն ունենալ քո ընտանիքի կամ քեզ մոտ եղող որևէ մեկի վրա:

Աղոթք - Տե՛ր, սովորեցրու ինձ զգույշ լինել Քո ներկայությանը և Քեզ հետ հարատև ազատորեն խոսել:

Աղոթել նշանակում է ընդունել, որ մենք կարիքն ունենք Աստծո:

**Կարդա՛ր
Սաղմոս 101. 1-17**

Ուշ դարձրեց նա
խեղճերի աղոթքին,
և չարիամարիտեց
խնդրանքը նրանց:
Սաղմ. 101.7

Հիշողության ծառայությունը

Կորստի ու հուսախաբուծության մեր փորձառությունները մեզ մոտ բարկություն, հանցանքի և շփոթի զգացումներ են առաջացնում: Եթե մեր ընտրությունները մի շարք դոճեր են փակել մեր առջև, որոնք երբեք չպիտի բացվեն, կամ եթե ողբերգություններ ենք ապրել կյանքում ոչ մեր սխալի պատճառով, արդյունքը, ընդհանրապես, Օսուալդ Չամբերսի անվանումով «Հզորի անչափելի տիրությունն է»: Մենք փորձում ենք ցավալի հիշողությունները զանց առնել, սակայն տեսնում ենք, որ դրա կարողությունը չունենք: Չամբերսը մեզ հիշեցնում է, թե Տերը դեռևս գործում է մեր կյանքում: Նա ասում է. «Բնավ մի վախեցիր, երբ Աստված անցյալը ետ բերի. թույլ տուր, որ հիշողությունը իր գործը կատարի: Սա Աստծո միջոցն է իր սաստումով, պատժով ու ցավով: «Հզորությունն է եղել»ը հրաշալի առաջընթաց պիտի ապահովի ապագայի համար: Հին Կտակարանի օրերին, երբ Աստված Իսրայելի ժողովրդին Բաբելոն աքսորեց, պատվիրեց Իրեն ծառայել օտար երկրի մեջ ու հավատքի մեջ ամրապնդվել, մինչև որ նրանց ետ վերադարձնի իրենց տունը: «Քանզի ե՛ս միայն գիտեմ իմ մտադրությունները...,- ասում է Տերը,- խաղաղության՝ մտադրություն, և ոչ թե չարության: Դրանից հետո ես հույս կտամ ձեզ» (Երեմ.29.11): Աստված պատգամեց չանտեսել կամ չկլանվել անցյալի դեպքերով, այլ ընդհակառակը՝ Իր վրա կենտրոնանալ ու առաջ նայել: Աստծո ներումը կարող է վերափոխել մեր վիշտը Իր հավիտենական սիրո վստահության:

Աղոթք - Հայր, շնորհակալ եմք մեզ համար Քո ունեցած ծրագրերի ու այն ապագայի համար, որ մեզ է սպասում Քո սիրո մեջ:

Աստված կարող է մեր ամենավատ հուսախաբությունները գործածել՝ Իր վրա մեր ունեցած հավատքը զորացնելու համար:

Կարդա՛ր Երեմիա 29.4-14

Քանզի ե՛ս գիտեմ իմ մտադրությունները, որ խորհում եմ և պիտի խորհեմ ձեր մասին, - ասում է Տերը, խաղաղության մտադրություն, և ոչ թե չարության: Դրանից հետո ես հույս կտամ ձեզ: Երեմ. 29.11

Պե՞տք է ներեն

Վաղ եկեղեցի հասա՝ մի ծրագրի նախապատրաստական աշխատանքների օգնելու համար: Մի կին եկեղեցու անկյունում կանգնած լալիս էր: Այդ կինը անցյալում գրպարտել ու վատ էր վարվել ինձ հետ: Անմիջապես նրա ձայնը լռեցրի օդազտիչ մեքենայի աղմուկով: Ինչո՞ւ մտահոգվեմ նրանով, ով ինձ չի սիրում: Սակայն երբ Սուրբ Հոգին ինձ հիշեցրեց, թե Աստված քանի՜ անգամ է ներել ինձ, մոտեցա նրան, ու կինը ինձ հասկացրեց, թե իր երեխան ամիսներ շարունակ հիվանդանոցում էր: Մենք գրկախառնված լաց եղանք ու աղոթեցինք իր աղջկա համար: Մեր տարակարծություններն ու հարցերը լուծելուց հետո դարձանք լավ բարեկամներ:

Կարդա՛
Մատթեոս 18.23-56
...իմչպես որ Քրիստոսը ձեզ ներեց, այնպես էլ դուք:
Կող. 3.13

Մատթ. 18-րդ գլխում Տեր Հիսուսը երկնքի թագավորությունը նմանեցնում է մի թագավորի, որ հաշիվ է պահանջում իր ծառաներից: Մի ծառա, որ մեծ գումար էր պարտք, ներում խնդրեց: Հազիվ էր թագավորը ներել ծառային իր պարտքը, երբ վերջինս գնաց ու գտավ մի այլ ծառայի և ստիպեց նրան իրեն ունեցած պարտքը վճարել, որը շատ ավելի քիչ էր, քան իր ունեցածը թագավորին: Երբ լուրը հասավ թագավորին, չար ծառան բանտ նետվեց իր չներող հոգու համար (հմ. 23-24):

Մեղքը ներել չի նշանակում ընդունել այն, մեր հանդեպ գործված սխալը և կամ պակասեցնել մեր վիրավորանքը: Ներում առաջարկելը պարզապես մեզ ազատ է թողնում Աստծո տված ողորմությունը վայելելու, ինչին արժանի չենք, մինչ հրավիրում ենք իրեն խաղաղություն վերահաստատող շնորհի գեղեցիկ գործեր անելու մեր կյանքում և հարաբերությունների մեջ:

Աղոթք - Տեր, օգնիր մեզ մեր ցավերը Քեզ բերելու, որպեսզի Դու նրանց բարի դարձնես: Մեզ պատրաստիր ամբողջովին ու թախանձանքով ներելու: Տուր մեզ Քո միաբանության հոգին:

Ուրիշներին ներելը ցույց է տալիս մեր վստահությունը Աստծո իրավունքի հանդեպ՝ դատելու մեզ իր կատարելության ու բարության համաձայն:

Խավարի մեջ պաշտամունք

Հակառակ նրան, որ բարեկամս՝ Միկին, իր տեսողությունը կորցնում էր, ինձ ասաց. «Պիտի շարունակեմ Աստծուն փառավորել ամեն օր, որովհետև շատ բան է արել ինձ համար»:

Հիսուսը Միկինն ու մեզ տվեց անվերջ փառաբանություն մեծագույն պատճառը: Մատթեոսի 26-րդ գլուխը ասում է մեզ, թե ինչպես է Հիսուսը Չատկի ընթրիքը արել իր աշակերտների հետ այդ երեկո խաչին բարձրանալուց առաջ: 30-րդ համարը ցույց է տալիս մեզ, թե ինչպես ընթրիքն ավարտեցին, երբ «օրհներգելուց հետո Զիթենյաց լեռը դուրս ելան»: Պատահական երգ չէր, որ նրանք երգեցին այդ երեկո, այլ փառաբանության երգ: Շուրջ մի հազարամյակ հրեաները մի խումբ սաղմոսներ էին երգել Չատկի առիթով, որ կոչվում էր “The Hallel” (hallel-ը փառաբանել բառի եբրայերենն է): Այս երեք աղոթքներից վերջինը և փառաբանության երգերը, որոնք գտնվում են 113-117 սաղմոսների մեջ, պատվում են Աստծուն, որ մեր փրկությունն է եղել (117.21): Նա ակնարկում է մերժված քարին, որ անկյունաքար եղավ (Հմ. 22), ու նրան, որ Տիրոջ անունով է գալիս (Հմ. 26):

Նրանք հավանաբար նաև երգեցին «Սա է օրն այն, որ Տերն ստեղծեց. եկե՛ք ցնծանք և ուրախանանք այսօր» (Հմ. 24): Ինչպես Տեր Հիսուսը իր աշակերտների հետ երգեց այդ Չատկի երեկոյան, Նա մեզ տալիս է գերագույն պատճառը մեր աչքերը բարձրացնելու հանգամանքներից վեր: Նա առաջնորդում է մեզ մեր Աստծո անսպառ սիրո ու հավատարմության փառաբանության:

Աղոթք - Տե՛ր, Դու միշտ արժանի ես փառաբանության, նույնիսկ երբ պատրաստ չեմ զգում փառաբանելու Քեզ: Օգնիր ինձ, որ սովորեմ Քեզ ավելի ու ավելի փառաբանել:

Աստծուն փառաբանելը օգնում է մեզ հիշել, թե իր բարությունը երբեք չի սպառվում:

Կարդա՛ր Մատթեոս 26.17-30

Ուստի նրա ձեռքով ամեն ժամանակ Աստծուն օրհնության զոհ մատուցենք, այսինքն նրա անունը դավանող շրթուների պտուղը:

Եբր. 13.15

Սպասելու բեռը

Վերջին մի քանի տարիներին ընտանիքիս անդամներից երկուսը ունեցան կյանքի համար վտանգավոր հիվանդություն ու բուժում անցան: Ինձ համար այդ ընթացքում նրանց հոգ տանելիս ամենից դժվարը եղավ հարատև անորոշությունը: Հստակ խոսք էի ուզում լսել բժշկից հիվանդության հանգամանքների մասին, սակայն շատ հազվադեպ էր դա: Հստակ բան ասելու փոխարեն՝ միշտ մեզ խորհուրդ տրվեց սպասել:

Դժվար է անորոշության բեռը կրել՝ սպասելով, թե հաջորդ ստուգումը ինչ է ցույց տալու: Մինչև մահի մեզ բաժանելը ունե՞նք արդյոք շաբաթներ, ամիսներ, տարիներ: Սակայն հիվանդությունից ու ախտորոշումից անկախ՝ բոլորս էլ պիտի մեռնենք - քաղցկեղի նման հիվանդությունը մեր մահկանացու լինելն է հայտնաբերում՝ փոխանակ թողնելու, որ այն պահվի մեր մտքերում:

Դիմագրաված լինելով մահկանացու լինելու հուզիչ ճշմարտությունը՝ ես ինքս ինձ գտնում եմ այն աղոթքի բառերի առջև, որ մի օր Մովսեսն ասաց: Սաղմոս 89-ն ասում է, թե մեր կյանքը նման է խոտի, որ կտրվում ու չորանում է (Հմ. 5-6): Մենք Աստծո հետ հավիտենական մի տուն ունենք (Հմ. 1): Մովսեսի նման մենք կարող ենք Աստծուն խնդրել մեզ սովորեցնել մեր օրերը հաշվել, որպեսզի սրտի իմաստություն ունենանք (Հմ. 12), և մեր կարճ կյանքը պողպեթ դարձնենք Իր համար մեր արածներով (Հմ. 17): Վերջապես Սաղմոսը մեզ հիշեցնում է, թե մեր հույսը բժիշկների ախտորոշման մեջ չէ, այլ Աստծո, որ «հավիտյանս հավիտենից է»:

Աղոթք - Տե՛ր, օգնիր մեզ տրված կյանքը լավ ապրել քո շնորհով:

Մենք կարող ենք մեր մահկանացու լինելու ճշմարտությունը քաջությամբ դիմագրավել, որովհետև Աստծուն ենք վստահում:

Կարդա՛ր
Սաղմոս 89

Այսպես, ինձ ցույց տուր քո աջը, և սրտով խոնարհներիմ՝ քո իմաստությունը: Սաղմ. 89.12

Լավագույնս կիսվել

Ղատական նիստի ժամանակ վկաները միայն Հանդիսատեսից կամ դիտողներից պվելին են: Նրանք գործուն մասնակիցներ են, որոնք օգնում են դատական հարցում վճիռ կայացնելիս: Նույնն է պարագան Քրիստոսի վկաների: Մենք պետք է գործուն դեր ունենանք բացարձակ կարևոր՝ Հիսուսի մահվան ու հարուժյան ճշմարտության հարցի համար: Երբ Հովհաննես Մկրտիչը եկավ ժողովրդին ասելու Հիսուսի՝ աշխարհի լույսի մասին, նա հայտարարեց իր ամբողջ իմացածը: Եվ Հովհաննես աշակերտը, որ արձանագրեց այս դեպքը, վկայեց Հիսուսի հետ իր ունեցած փորձառության մասին. «...Նրա փառքը տեսանք որպես Հորից եղած Միածնի փառք՝ լի շնորհով ու ճշմարտությամբ» (Հովհ. 1.14): Պողոս առաքյալը ճարտարներեն հավելելով այս գաղափարը՝ երիտասարդ Տիմոթեոսին ասաց. «Եվ այն բաները, որ ինձանից լսեցիր շատ վկաներով, հավատարիմ մարդկանց հանձնիր, որ կարողանան ուրիշների սովորեցնել» (Բ. Տիմ. 2.2):

Կարդա՛ր Յովհաննես 1.6-14

Սա վկայության համար եկավ, որ այն Լույսի մասին վկայի, որ բոլորը նրա միջոցով հավատան: Յովհ. 1.7

Բոլոր քրիստոնյաները հրավիրված են աշխարհի ատյանի առջև: Աստվածաշունչը ասում է, թե մենք լուկ հանդիսատես չենք, այլ գործուն մասնակիցներ: Մենք վկայում ենք Տեր Հիսուսի մահվան ու հարության ճշմարտությունը: Հովհաննես Մկրտիչը անապատի մեջ կանչողի ձայնն էր: Մեր ձայները կարող են լավել մեր աշխատավայրի, շրջապատի, եկեղեցու և մեր ընտանիքի ու բարեկամների մեջ: Մենք կարող ենք գործուն վկաներ լինել, որոնք պատմում են Հիսուսի՝ մեր կյանքում լինելու ճշմարտության մասին:

Աղոթք - Արդյոք մեր գործերը վկայո՞ւմ են Հիսուսի մասին: Տե՛ր, օգնիր մեզ, որ ազդու և կառուցողական կերպով վկայենք Քո մասին:

Ավետարանը լավագույնն է կիսվելու համար:

Չլուսավորված ուղիներ

Երբ ընտանեկան արձակուրդից հետո տուն էինք վերադառնում, ճանապարհը մեզ տարավ Կենտրոնական Օրիգոնի անբնակ ու ամայի շրջանները: Մայրամուտից հետո մոտ երկու ժամ մենք անցնում էինք խոր ձորերի ու տափաստանների միջով: Քսանից քիչ մեքենաների լույսեր էին երևում խավարում: Վերջապես լուսինը ելավ: Այն տեսանելի էր, երբ բլուրներ էինք բարձրանում, ծածկված, երբ դաշտ էինք իջնում: Աղջիկս ակնարկեց լուսնի լույսին՝ ասելով, որ այն հիշեցնում է Աստծո ներկայություն մասին: Հարցրի, թե արդյոք ուզո՞ւմ է տեսնել լուսինը՝ իմանալու համար, որ Նա այնտեղ է: Պատասխանեց. «Պարտադիր է, սակայն դա վստահորեն օգնում է»:

Կարդա՛ր
Յեսու 1.1-9

...քեզ հետ է քո Տեր
Աստվածը ամեն
տեղ, ուր էլ որ
գնաս: Յես. 1.9

Մովսեսի մահից հետո Հեսուն ժառանգեց իսրայելցիների առաջնորդությունը, և նրա վրա պատասխանատվություն դրվեց՝ ժողովրդին առաջնորդելու դեպի Ավետյաց Երկիր: Հակառակ իր երկնային կոչումի՝ Հեսուն մարտահրավեր ընկալեց իրեն տրված պատասխանատվությունը՝ նկատի ունենալով նրա վախազդու բնույթը: Աստված իր հետ լինելու խոստում տվեց իր առջև եղած դժվար ճանապարհի համար (Հեսու 1.9):

Հաճախ կյանքն ընթանում է անձանոթ շրջանների միջով: Մենք ճամփորդում ենք հանգամանքների միջով, երբ մեր առջև եղող ուղին հստակ չենք տեսնում: Աստծո ծրագրերը շատ անգամ ակնառու է մեզ համար, սակայն Նա խոստացել է՝ մեզ «հետ է ամեն օր, մինչև աշխարհի վերջը» (Մատթ. 28.20): Սրանից ավելի ի՞նչ վստահություն ու հավաստում ենք ուզում, երբ դիմագրավում ենք անորոշություն ու մարտահրավեր: Եթե նույնիսկ ճանապարհը լուսավոր է, Լույսը մեզ հետ է:

Աղոթք - Տեր, շնորհակալ եմք, որ մեզ մոտ ես, նույնիսկ երբ չենք տեսնում քեզ: Խնդրում եմ, Քո ներկայությամբ ինձ հանգստացրու:

Աստված մեզ հետ է, նույնիսկ եթե չենք տեսնում Նրան:

Երգել Մանուչակի հետ

Ձամայկայի անկեղանոցում մի տարեց կին՝ Մանուչակ անունով, նստեց անկողնի վրա և ժպտաց, երբ մի քանի երիտասարդներ եկան նրան այցելության: Կեսօրի շոգ, կաչուն ու խոնավ օդը լցվեց իր՝ ուրիշների հետ բաժանած սենյակը, սակայն նա չառարկեց: Ընդհակառակը, սկսեց մտաբերել մի երգ: Հետո մի մեծ ժպիտ գծագրվեց նրա դեմքին, ու նա սկսեց երգել. «Ես վագում եմ, ցատկում ու խաղում՝ փառաբանելով Տիրոջը»: Մինչ նա երգում էր, սկսեց թևերը ետ ու առաջ շարժել, կարծես վագում էր: Նրա շուրջ եղող երիտասարդների աչքերից սկսեցին արցունքներ հոսել, որովհետև Մանուչակը ոտքեր չուներ: Նա երգում էր՝ ասելով. «Տեր Հիսուսը ինձ սիրում է - ու երկնքում ոտքեր պիտի ունենամ՝ վագելու համար»: Մանուչակի ուրախությունն ու հույսը երկնքի ակնկալությամբ Փիլիպպեցիների առաջին գլխում գրված Պողոսի խոսքերին նոր իմաստ է տալիս, երբ ակնարկում է կյանքի ու մահվան հարցերի մասին: «Էլ չգիտեմ, թե ո՞րն ընտրեմ: Երկու կողմից էլ նեղ տեղն եմ փափագելով դուրս գալ Քրիստոսի հետ լինել, որ շատ ավելի լավ է» (Հմ. 22-23): Բողոքս էլ դժվար ժամանակներ ենք դիմագրավում, որ մղում է մեզ ամոքվելու փափագ ունենալ: Սակայն ինչպես մեզ Մանուչակը ցույց տվեց ուրախություն, հակառակ իր ներկա վիճակին, մենք էլ կարող ենք շարունակել «վագել, ցատկել ու խաղալ՝ փառաբանելով Տիրոջը» այդ ճոխ կյանքի համար, որ Աստված մեզ տալիս է այստեղ, և անվերջ ուրախ ու երջանիկ կյանքի համար, որ մեզ է սպասում:

Կարդա՛ Փիլիպ. 1. 21-26

Երկու կողմից էլ ցեղ տեղն եմ՝ փափագելով դուրս գալ ու Քրիստոսի հետ լինել... Բայց մարմնի մեջ մնալս ձեզ ավելի է հարկավոր:
Փիլիպ. 1.23-24

Աղոթք - Տեր, երբ ժամանակները դժվար են, օգնիր ինձ ուրախություն գտնել: Օգնիր մեզ այս աշխարհի դժվար ժամանակների մեջ ապրել, մինչ ավելի լավ բաների ենք սպասում:

Երբ Աստված մեզ նոր սկիզբ է տալիս, մենք գտնում ենք անսպառ ուրախություն:

Մխիթարիչը

Երբ ինքնաթիռ մտա գնալու մղոններ հեռու գտնվող մի քաղաք ուսանելու համար, ջղային ու միայնակ զգացի: Սակայն թռիչքի ընթացքում հիշեցի, թե ինչպես Հիսուսը խոստացավ Իր աշակերտներին Սուրբ Հոգու մխիթարական ներկայությունը:

Հիսուսի բարեկամները շփոթվեցին, երբ Նա ասաց. «Լավ է ձեզ համար, որ ես գնամ» (Հովհ. 16.7): Նրանք, ովքեր տեսել էին Իր կատարած հրաշքները ու սովորել Իր խոսքերից, ինչպե՞ս ավելի լավ պիտի լինեին առանց Նրա: Սակայն Հիսուսը նրանց ասաց, թե երբ Ինքը գնա, Մխիթարիչը՝ Սուրբ Հոգին պիտի գա:

Տե՛ր Հիսուսը, գիտենալով, որ Իր մեկնելու ժամը մոտեցել է, Իր աշակերտների հետ բաժանեց մեզ ծանոթ Իր «Ողջերթի ճառը» (Հովհ. 14-17)՝ օգնելու նրանց, որ հասկանան Իր մահն ու համբարձումը: Սուրբ Հոգու գալուստը կենտրոնական տեղ էր գրավում Իր խոսքում. Մխիթարիչը (14.16-17) իրենց հետ պետք է լինե՛ր (15.15)՝ սովորեցնելու (հմ. 26), վկայելու (հմ. 26) ու նրանց առաջնորդելու (16.13): Քանի որ ընդունել ենք Աստծո առաջարկը նոր կյանքի, մեզ տրված է Սուրբ Հոգու՝ մեր մեջ բնակություն պարգևը: Մենք շատ բան ենք ստանում Նրանից: Նա դատապարտում է մեր մեղքը ու օգնում մեզ փրկվելու: Հանգիստ է պարգևում, երբ ցավում ենք, զորություն տալիս դժվարություն պահին, իմաստություն՝ հասկանալու Աստծո խոսքը, հույսը և հավատքը՝ հավատալու, և սերը՝ բաժանելու համար: Մենք ուրախ պիտի լինենք, որ Հիսուսը Մխիթարիչին մեզ համար է ուղարկել:

Աղոթք - Երկնավոր Հայր, Քո Որդուն ուղարկեցիր մեզ փրկելու ու Հոգուդ՝ մեզ մխիթարելու ու դատապարտելու համար: Թույլ տուր Քեզ փառք բերել, մինչ շնորհակալություն ենք հայտնում Քո սիրո ու բարության համար:

Սուրբ Հոգին լցնում է Հիսուսի հետևողներին:

Կարդա՛ր Հովհաննես 16.7-15

Սակայն երբ նա՝ ճշմարտության Հոգին գա, նա ձեզ ամեն ճշմարտության կառաջնորդի...

Հովհ. 16. 13

Ճամբարային սաղմոսներ

Երբ ամուսինս ու ես բնության մեջ քայլելու ենք զնուս, մեր լուսանկարչական սարքերով մոտիկից նկարում ենք բույսերը, որոնք երկրի մանրակերտներին են նման: Ինչ զանազան տեսակներ ու գեղեցկություն ենք տեսնում, անգամ մեկ գիշերում ծլած անտառանկերը՝ նարնջագույն, կարմիր ու գեղին:

Մեր շուրջ եղած այս գեղեցիկ բնությունից առնված պատկերները ինձ ներշնչում են աչքերս բարձրացնելու Արարչին, որ ոչ միայն այս բույսերն ու սնկերն է ստեղծել, այլև երկնքի աստղերը: Նա ուրվագծել է մի աշխարհ՝ զանազան, անհուն ու անեզր տեսություն սահմանով: Նա նաև ստեղծել է քեզ և ինձ և դրել այս գեղեցկություն կենտրոնում՝ վայելելու և իշխելու նրա վրա (Ծննդ. 1.27-28, Սաղմ. 8.6-8):

Իմ մտածումները զնուս են մեր ընտանեկան «Ճամբարային սաղմոսներից» մեկին, այն սաղմոսները, որ մենք կարգում էինք խարույկի շուրջ նստած: «Տե՛ր, ո՛վ մեր Տեր, ի՛նչ հրաշալի է քո անունը ողջ աշխարհում: Քո փառքը բարձրացավ երկնքից վեր: Մանկահասակ և ծծկեր երեխաների բերանից թող օրհնություն ելնի ընդդեմ քո թշնամիների, Տե՛ր, որպեսզի ոսոխն ու հակառակորդը կործանվեն: Տեսնեմ երկինքը՝ քո մատների գործը, լուսինն ու աստղերը, որոնք դու հաստատեցիր: Մարզն ի՞նչ է, որ հիշում ես նրան, կամ մարդու որդին՝ որ այցի գաս նրան» (Սաղմ. 8.2-5): Ի՛նչ հիանալի է, որ այդ մեծ Աստվածը, որ ստեղծեց երկիրը իր ամբողջ գեղեցկությամբ, հոգում է իմ և քո մասին:

Աղոթք - Մեր Տե՛ր, մեր վեհաշուք Արարիչ: Մեր սրտերը փառաբանել են ուզում, երբ Քո ստեղծած աշխարհի գեղեցկությունն ենք տեսնում: Շնորհակալ ենք մեզ ստեղծելու համար: Օգնիր մեզ իմաստությամբ իշխելու Քո երկրին:

Իմաստուն Աստված, որ աշխարհն ու ինձ է ստեղծել, բավականաչափ իմաստուն է իմ վրա հսկելու: Ֆիլիդ Ենսի

Կարդա՛ր Սաղմոս 8.1-9

Տե՛ր, ո՛վ մեր Տեր, ի՛նչ հրաշալի է քո անունը ողջ աշխարհում: Սաղմ. 8.1

Սերմեր ցանել

Մի շատ գեղեցիկ էլեկտրոնային նամակ ստացա մի կնոջից, որ գրում է. «Քո մայրը իմ առաջին ուսուցչուհին էր Փաթնամ քաղաքում 1958-ին: Նա հիանալի ուսուցչուհի էր, շատ ազնիվ, սակայն շատ խիստ: Ես սոսկացի, երբ նա ստիպեց մեզ, որ սովորենք ու արտասանենք 23-րդ Սաղմոսը: Սակայն այդ Սաղմոսը միակ ծանոթությունս էր Աստվածաշնչի հետ մինչև 1997-ը, երբ ճշարտապես Քրիստոնեական Հավատքը ընդունեցի: Տիկին Մըք Գասլանտի մասին հիշողությունները ետ են գալիս, երբ կարդում եմ կամ արտասանում այդ Սաղմոսը»:

Հիսուսը մի մեծ բազմության պատմեց Սերմնացանի առակը, որի սերմերը ընկան տարբեր տեղեր՝ ճամփեզրին, ժայռերի, փշերի մեջ և լավ հողում (Մատթ. 13.1-9): Մինչ մի շարք սերմեր երբեք չբուսնեցին, լավ հողը ակնարկում է նրա խոսքը, լսում ու հասկանում է և արդյունք տալիս հարյուր, վաթսուց և երեսուն անգամ (Հմ. 23): Մայրս քսան տարի ոչ միայն դասավանդեց ընթերցանություն, գեղագրություն և թվաբանություն դպրոցի առաջին դասարանում, այլև ցանեց Աստծո բարություն ու սիրո սերմերը:

Մորս նախկին աշակերտուհին իր նամակը ավարտում էր՝ գրելով. «Ես բնականաբար ունեցա այլ ազդեցություններ իմ Քրիստոնեական Հավատքի մեջ, սակայն իմ սիրտը միշտ գնում է 23-րդ Սաղմոսին ու մորդ համեստ էությունը»:

Աղոթք - Տե՛ր, ուզում եմ, որ այսօր իմ կյանքը ցանի բարի սերմեր իմ շուրջիմների կյանքում: Օգնիր ինձ, որ տամ այն, ինչ որ Դու ես ինձ տվել:

Մենք ցանում ենք սերմը, Աստված տալիս է հունձը:

Կարդա՛ր Մատթեոս 13. 1-9

Իսկ բարի հողի մեջ սերմանվածը... պտուղ է տալիս, որը՝ հարյուր, որը՝ վաթսուց և որը՝ երեսուց:

Մատթ. 13.23

Հավերժական ծաղիկներ

Երեխաս ուրախանում էր, երբ ամեն անգամ իր պոկած խոտը կամ ծաղկավաճառից հոր հետ գնած ծաղիկը ինձ էր տալիս: Ես շնորհակալությամբ էի ընդունում ու պահում դրանք, մինչև չորանան ու թափելու լինեին:

Մի օր նա ինձ տվեց արհեստական ծաղիկների փունջ: Նա նազանքով տեղավորեց գունավոր ծաղիկները ծաղկամանում ու ասաց. «Նայի՛ր, մայրի՛կ, նրանք հավերժ կմնան, ու ես քեզ այդքան եմ սիրում»:

Այդ օրից ի վեր երեխաս հասակ է առել ու երիտասարդ դարձել, ու մտաքայա ծաղիկի թերթերը ծվատված, մաշած, խամրած ու դժգունած են: Սակայն նրա խոսքը՝ «Հավերժական ծաղիկներ», հիշեցնում է իր ունեցած սերը իմ հանդեպ: Մտաբերում եմ նաև Հավերժական Աստծո մնայուն ու անսահման սերը (Ես. 40.8):

Մինչ Իսրայելի ժողովուրդը շարունակաբար փորձանքներ դիմագրավեց, Եսայի մարգարեն նրանց մխիթարեց Աստծո Հավիտենական Խոսքին վստահելու խորհրդով (40.1): Նա հայտարարեց, թե Աստված վճարեց Իսրայելի գործած մեղքի պատճառով եղած պարտքը (Հմ. 2)՝ հույսը դնելով Մեսիայի գալուստի վրա (Հմ. 3-5): Նրանք վստահեցին մարգարեին, որովհետև նրա կենտրոնացումը միշտ մնաց Աստծո ու ոչ թե հանգամանքների վրա:

Անորոշություններով ու տառապանքով լեցուն աշխարհի մեջ մենք գեռևս կարող ենք վստահել Աստծո անփոփոխ սիրուն, ինչպես որ հայտնվում է Իր մնայուն ու հավիտենական Խոսքի մեջ:

Աղոթք - Տե՛ր, շնորհակալ եմ մեզ տված Քո հավիտենական Յոգու համար, որ ապահովում է Քո հավիտենական խոստումները ու օգնում մեզ հականալ Քո խոսքը:

Աստված հաստատում է Իր սերը՝ Իր վստահելի ու անփոփոխ Խոսքի միջոցով, որ մնում է հիմա ու հավիտյան:

Կարդա՛ր Եսայի 40.1-8

Խոտը չորանում է,
ծաղիկը թափվում,
բայց Տիրոջ խոսքը
մնում է հավիտյան:
Ես. 40.8

Իսկական բարեկամ լինել

Բանաստեղծ Սամ Ֆոսը «Ճամփեզրի տունը» գրքում գրում է. «Թող որ ճամփեզրին բնակվեմ և մարդու բարեկամը լինեմ»: Մարդու բարեկամը լինեմ, ասում էր նա: Ուզում եմ ճամփեզրին կանգնել ու սպասել հոգնած ճամփորդներին, օգնել նրանց, ովքեր անտեսված են, վիրավորված ու զրկանքներ տարած և ծանր բեռներ են կրում, սնուցանել և ամոքել քաջալերական խոսքերով և դարձյալ ճանապարհ դնել: Հավանաբար չկարողանամ նրանց հարցերը լուծել, սակայն օհնություն կարող եմ տալ:

Երբ Աբրահամը պատերազմից հոգնած վերադառնում էր, Մելքիսեդեկ՝ Սաղեմի թագավորն ու մարգարեն, օրհնեց նրան և հաց ու գինի բերեց (Ծննդ. 14): «Օրհնություն»-ը շատ ավելին է, քան «առողջություն» քաղաքավարի խոսքը, որն ասում ենք, երբ մեկը փոշտում է: Մենք ուրիշներին օրհնում ենք, երբ նրանց բերում ենք դեպի նրան, որ օրհնության աղբյուրն է: Մելքիսեդեկն օրհնեց Աբրահամին՝ ասելով. «Օրհնյալ է Աբրամը բարձրյալ Աստծու կողմից, որ ստեղծեց երկինքն ու երկիրը» (Հմ. 19):

Մենք կարող ենք ուրիշներին օրհնել՝ նրանց հետ աղոթելով. մեզ հետ կարող ենք տանել շնորհի գահին՝ օգնություն գտնելու նեղության ու կարիքի ժամանակ (Եբր.4.16): Մենք թերևս չկարողանանք փոխել հանգամանքները, սակայն կարող ենք նրանց ցույց տալ Աստծուն: Ծջմարիտ բարեկամը դա է անում:

Աղոթք - Տեր Դիսուս, սովորեցրու մեզ լինել մարդկանց բարեկամը, ինչպես՝ Դու մեզ հետ: Տո՛ւր մեզ աչքեր՝ ուրիշներին ու նրանց կարիքները տեսնելու և նրանց լսելու ժամանակ գտնելու համար: Օգնիր մեզ, որ նրանց դեպի Քեզ՝ կյանքի աղբյուրին առաջնորդենք:

Սիրել մեծ մասով նշանակում է կարողանալ լսել:

Կարդա՛ր
Ծննդոց 14.17-24

Սաղեմի արքա Մելքիսեդեկը հաց ու գինի հյուրասիրեց նրան...
Օճնդ. 14.18

Առյուծների հետ ապրել

Երբ Չիկագոյի մեջ թանգարան այցելեցի, Բաբելոնի ինքնատիպ թիւակվոր առյուծներից մեկին տեսա: Մեծ որմնանկար ներկայացնող առյուծ էր՝ վայրագ տեսքով: Բաբելոնի սիրո ու պատե՛րազմի Իշտար աստծուն խորհրդանշող այդ առյուծը նմանօրինակ 120 առյուծներից մեկն է, որոնք շարված էին լինում Բաբելոնի արահետներում Ք.Ա. 604-562 թթ.:

Պատմաբանները վկայում են, որ երբ բաբելոնցիները Երուսաղեմը գրավեցին, հրեա գերիները պիտի որ տեսած լինեին այդ առյուծներին՝ Նաբուգոդոնոսորի թագավորության օրերին: Պատմաբանները նաև նկատում են, որ հավանաբար իսրայելցիները հավատում էին, որ Իշտար աստվածը հաղթեց Իսրայելի Աստծուն:

Դանիելը՝ հրեա գերիներից մեկը, չընդունեց իսրայելցիների այդ կասկածը: Աստծո հանդեպ իր ունեցած տեսակետի ու նվիրումի մեջ նա հաստատ մնաց: Նա օրական երեք անգամ ազդեց իր պատուհանները բաց՝ նույնիսկ իմանալով, թե կարող էր առյուծների գուբը նետվել: Աստծու՝ նրան այդ մեծ կենդանիներից ազատելուց հետո Դարեհ թագավորն ասաց. «Դանիելի Աստվածը... է կենդանի Աստվածը և կա հավիտյան: Նա է, որ օգնական է լինում և փրկում» (Դան. 6.26-27): Դանիելի հավատարմությունը մեծ ազդեցություն ունեցավ Բաբելոնի թագավորի վրա:

Հակառակ ճնշումների ու վհատություն՝ Աստծուն հավատարիմ մնալը կարող է ուրիշներին ներշնչել Նրան փառք տալու:

Աղոթք - Սիրելի՛ Աստված, տո՛ւր ինձ զորություն քեզ վստահելու, երբ վհատվեմ: Օգնիր ինձ, որ քո անվախճան սերը վայելեմ ու քեզ մոտ մնամ:

Մեր հավատարմությունը Աստծուն ուրիշներին է և ներշնչում:

Կարդա՛ր
 Դանիել 6.19-28

...որովհետև նա է կենդանի Աստվածը և կա հավիտյան: Դան. 6.26

Աստծով զգեստավորվել

Երբ երեխաներս փոքր էին, մեր կեղտոտ պարտեզում խաղալուց հետո ցեխով ու աղտով էին ծածկվում: Իրենց ու նաև տունը մաքուր պահելու համար կեղտոտ հագուստները հանում էի դռան մոտ ու նրանց փաթաթում սրբիչի մեջ՝ լողաբան տանելու: Նրանք շուտով մաքրվում էին օձառով, ջրով ու նաև իմ ողջագուրումներով:

Չաքարիայի տեսիլքում տեսնում ենք Հեսուե քահանայապետին կեղտոտ հագուստներով, որ ներկայացնում են մեղքեր ու անօրենություններ (Չաք. 3.3): Սակայն Աստված նրան մաքրում է՝ հանելով վրայից կեղտոտ հագուստները ու հագցնելով պատվական զգեստներ (3.5): Նրա գլխի նոր խուլյրն ու վրայի հագուստը խորհրդանշում են այն, որ Աստված նրա մեղքերը ներել է:

Մենք էլ կարող ենք Աստծո մաքրությունը ստանալ, երբ մեր անօրեն քայլերից ազատ լինենք Հիսուսի կատարած փրկարար արարքով: Որպես արդյունք իր խաչելության՝ մենք կարող ենք մեզ վրա եղող ցեխից ու մեղքից լվացվել ու ստանալ Աստծո զավակների պատմուճանը: Այլևս մենք չենք երևա մեր սխալներով, լինեն դրանք ստախոսություն, զրպարտություն, գողություն, ցանկություն կամ այլ բան, այլ կարող ենք ստանալ այն անունը, որ Աստված է տալիս նրանց, ում սիրում է, և որոնք վերանորոգված, մաքրված, բարեզարգված ու ազատ են:

Խնդրի՛ր Աստծուց, որ քո վրայից հանի քո բոլոր աղտեղությունները, որպեսզի դու էլ կարողանաս հագնել մաքուր զգեստներ:

Աղոթք - Տեր Հիսուս, Քո փրկարար մահվան միջոցով խաչի վրա մենք կարող ենք ունենալ սեր ու ընդունելություն: Թող որ Քո փառքի պարգևն ստանանք:

Ո՞վ կարող է մաքրել իմ աղտեղությունները: Միայն Հիսուսը:

Կարդա՛ր Չաքարիա 3

Ահա վերացրի քեզ-
 ցից քո անօրենու-
 թյունները: Պարե-
 գո՛ւտ հագցրեք
 նրան և սուրբ
 խո՛յր դրեք նրա
 գլխին: Չաք. 3.5

Պատրաստիր մանկանը

Մտորներին վերաբերող մի կայքէջ ասում է. «Պատրաստիր մանկանը ճանապարհի համար, ոչ թե ճանապարհը՝ մանուկի»: Փոխանակ բոլոր արգելքները անտեսելու ու ճանապարհը հարթելու մեր զավակների համար՝ մենք պետք է նրանց պատրաստենք իրենց ճանապարհին եղող բոլոր դժվարությունները հաղթահարելու: Սաղմոսերգուն ասում է. «Մյուս սերնդին պատմեցինք օրհնությունն ու զորությունը Տիրոջ և այն սքանչելագործությունները, որ նա արեց: ...որ նրանք այդ բոլորը ցույց տան իրենց որդիներին, որ սովորեցնեն մյուս սերնդին: Որդիները, որ ծնվելու են, պիտի ելնեն և պատմեն դա իրենց զավակներին» (Սաղմ. 77.4-6): Նպատակը այն է, որ «իրենց հույսը դնեն Աստծու վրա և չմոռանան Աստծու գործերը՝ հետևելով նրա պատվիրաններին» (Հմ. 7):

Մտաբերիր այն հոգևոր ազդեցությունը, որ ուրիշներն են ունեցել մեզ վրա՝ իրենց ասածներով ու ապրած կյանքով: Նրանց հետ երկխոսությունն ու ցուցաբերած օրինակը մեր ուշադրությունն են գրավել ու բորբոքել Հիսուսին հետևելու կրակը, ինչպես իրենք են արել: Սքանչելի նախապատվություն է Աստծո խոսքն ու մեր կյանքի համար ունեցած իր ծրագիրը հաջորդ սերնդի հետ բաժանել: Հոգ չէ, թե ինչ է սպասում մեզ կյանքի ուղու վրա, ուզում ենք, որ նրանք պատրաստվեն ու զինվեն Տիրոջ զորությունը:

Աղոթք - Երկնքում ապրող Հայր, խնդրում ենք Քո իմաստությունը ու առաջնորդությունը՝ պատրաստելու մեր զավակներին, և ուզում ենք, որ նրանք հավատքով Քեզ հետ քայլեն:

Երկխոսությամբ ու կյանքի օրինակով պատրաստենք մեր զավակներին Տիրոջը հետևելու:

Կարդա՛ր Սաղմոս 77.1-8

...մյուս սերնդին պատմեցինք օրհնությունն ու զորությունը Տիրոջ և այն սքանչելագործությունները, որ նա արեց: Սաղմ. 77.4

Ելքի ճանապարհը գտնել

Կալիֆորնիայի Սանտա Բարբարա քաղաքում մի փողոց կա վտանգավոր և քսու անունով: Փողոցը կոչվում է «Salsipuedes», որ նշանակում է՝ «Թող, եթե կարող ես»: Երբ այդ փողոցը առաջին անգամ անվանակոչվեց, եղբրված էր ճահճով, որ երբեմն դուրս էր գալիս: Քաղաքի իսպանախոս նախագծողները այդ տեղն անվանեցին մարդկանց հեռու պահող մի հայտարարութամբ: Աստծո խոսքը մեզ զգուշացնում է հեռու մնալ մեղքի ու փորձության «սխալ ճանապարհից»: «Մի՛ անցիր այն վայրով, ուր բնակվում են նրանք: Խուսափի՛ր նրանցից և խորշի՛ր այդ վայրից...» (Առ. 4.15-16): Սակայն Աստծո խոսքը պարզապես չի ասում, թե «Թող, եթե կարող ես»: Նա վստահություն է տալիս ու ասում մեզ ուր գնալ փորձության ժամանակ. «Աստված հավատարիմ է, որ ձեզ չի թողնի ձեր կարողությունից վեր փորձվելու, այլ փորձության հետ ելքն էլ կպատրաստի, որ կարողանաք համբերել» (Ա Կորնթ. 10.13): Աստծո խոստումը մեր կարողությունից ավելի չփորձվելու քաջալերական հիշեցում է: Երբ մենք Աստծուն ենք դիմում այն պահին, երբ փորձության ենք ենթարկվում, վստահ լինենք, թե Նա ուզում է, որ մենք հեռու մնանք փորձությունից:

Աստվածաշունչը հաստատում է, որ Հիսուսը ոչ միայն կարող է «մեր տկարություններին կարեկից լինել», այլ «ամեն բանով փորձված է մեզ նման, բայց առանց մեղքի» (Եբ. 4.15): Հիսուսը լավ գիտի ամեն տեսակի փորձությունից դուրս գալու ելքը և մեզ ցույց պիտի տա ուղին, երբ իրեն դիմենք:

Աղոթք - Շնորհակալ եմ, Տե՛ր, խոստումիդ հավատարիմ լինելու ու ելք ցույց տալու իմ դիմագրաված փորձություններից դուրս գալու ճանապարհին:

Աստված խոստանում է մեզ օգնել փորձության ժամին:

Կարդա՛ր Ա Կորնթ. 10.1-13

...բայց Աստված հավատարիմ է, որ ձեզ չի թողնի ձեր կարողությունից վեր փորձվելու, այլ փորձության հետ ելքն էլ կպատրաստի, որ կարողանաք համբերել:
 Ա Կորնթ. 10.13

Աստծուն տեսնել

Տաղրանկարիչներն իրենց նկարակախները դնում են հրապարակներում ու փողոցներում և նկարում այն մարդկանց, որոնք պատրաստ են համեստ գումար վճարել իրենց զվարճալի դիմանկարների համար: Նրանց վրձնահարվածները զվարճացնում են, որովհետև նրանք չափազանցում են մի կամ մի քանի դիմագծեր, որոնք նկատելի, սակայն ծիծաղաշարժ են:

Մյուս կողմից Աստծո ծաղրանկարները միշտ հաճելի չեն: Իր չափազանցված հատկանիշներից մեկը ներկայացնում է մի խեղաթյուրված պատկեր, որ մարդիկ նկատի չեն ունենում: Ծաղրանկարների նման խեղաթյուրված, Աստծո պատկերը ներկայացնող երևույթները լուրջ չեն ընդունվում: Նրանք, ովքեր տեսնում են Աստծուն իբրև բարկացած ու պահանջոտ դատավոր, հեշտուխամբ են հրապուրվում նրանով, որ շեշտում է ողորմությունը: Նրանք, որ տեսնում են Աստծուն որպես մեծսիրտ մի պապ, պիտի մերժեն այդ պատկերը, երբ արդարություն կարիք ունենան: Նրանք, ովքեր Աստծուն տեսնում են իբրև խմացական գաղափար, փոխանակ ապրող ու սիրող էակի, պատահաբար պիտի գտնեն այլ գրավիչ գաղափարներ: Նրանք, ովքեր Աստծուն տեսնում են իբրև լավ բարեկամ, հաճախ Նրան մի կողմ են թողնում, երբ գտնում են մարդկային բարեկամներ, որոնք ավելի իրենց են նման: Աստված ներկայացնում է Իրեն իբրև գթասիրտ ու ողորմած, սակայն միևնույն ժամանակ մեղքն ու հանցանքը դատապարտող (Ելից 34.6-7): Մինչ մեր հավատքը գործնականի ենք վերածում, պետք է զգուշանանք գծագրելու Աստծուն միայն մեր նախասիրած հատկանիշներով: Մենք պիտի պաշտենք Աստծո ամբողջ էությունը, ոչ միայն այն, ինչ մենք ենք նախընտրում:

Կարդա՛ր Ա Մնացորդաց 13-15

Տեղը համբերատար է, ողորմած ու ճշմարիտ, որ ներում է անօրենությունները, անիրավություններն ու մեղքերը, բայց և ամենեւեմ չի ներում մեղսագործներին: Թվեր 14.18

Աղոթք - Յայր, Որդի՛ եւ Սուրբ Յոզի՛, Քեզ եմ պաշտում: Դու սուրբ, արդար, բարի ու սիրող ես, միայն Դու ես Աստված:

Աստված միայն Ինքն է Աստված:

Թարթիր ու մտածիր Աստծու մասին

«Աստված աչքի նման է», - ասաց ընկերուհիս՝ Ուայլին, ու ես զարմացած աչքս թարթեցի: Ի՞նչ էր ուզում ասել նա: «Մի քիչ պարզաբանիր», - ասացի նրան: Աստվածաշնչի մեջ Աստծո զարմացնող կերպարների մասին էինք կարդում, օրինակ, «Համբերող եղա ինչպես ծննդկան» (Ես. 42.14), և կամ «Տերը պիտի շարժի... գոռեխներին, որոնք Աստրեստանի երկրում են» (7.18): Սակայն այս մի պատկերը նորութուն էր ինձ համար: Ուայլին ցույց տվեց ինձ Բ. Օրինաց 32-րդ գլուխը, ուր տեսնում ենք Մովսեսին, որ պաշտում է Աստծուն՝ ժողովրդին տված հոգատարության համար: 10-րդ համարն ասում է, որ Աստված նրան շրջապատեց, խրատեց ու աչքի լույս պես պահպանեց: Տարբեր թարգմանություններում «աչքի լույս» բառերի փոխարեն «աչքի խնձոր» արտահայտությունն է օգտագործվում: Ուայլին ինձ բացատրեց, թե «աչքի խնձոր» բառերը տառացիորեն նշանակում են «աչքի լույս», որովհետև կոպը նուրբ աչքը պաշտպանող պատյանն է: Կոպը պաշտպանում է աչքը վտանգից ու թարթելով՝ մաքրում է աչքի մեջ մտած փոշին ու կեղտը և արգելում, որ քրտինք մտնի: Այն խոնավություն է հաղորդում աչքին՝ առողջ պահելու համար, ու փակվում է՝ հանգիստ տալու: Մինչ մտածում էի Աստծո՝ իբրև կոպ հանդես գալու մասին, չկարողացա փառք չտալ նրան իր զանազան արարքների համար՝ օգնելու մեզ, որ հասկանանք իր սերը: Երբ գիշերը մեր աչքերը փակենք ու առավոտ բանանք, կարող ենք Աստծո մասին մտածել ու փառք տալ նրան իր պաշտպանության ու հոգատարության համար:

Աղոթք - Շնորհակալ եմք, Աստված, զարմանալի կերպարների մեջ մտնելով մեզ օգնելու համար, որ կարողանանք Քեզ ավելի լավ հասկանալ: Շնորհակալ եմք մեզ պաշտպանելու համար, ինչպես կոպն է պաշտպանում բիրը:

Երբ աչքդ թարթես, հիշիր իր հոգատարության համար Աստծուն շնորհակալություն հայտնելու մասին:

Կարդա՛ր
Բ Օրենք 32. 1-12

...ծարավեցնող տոթից պաշտպանեց նրան, խրատեց ու աչքի լույսի պես պահեց նրան:
Բ Օր. 32.10

Աստծուն պաշտպանել

Մի մեքենայի ետևում փակցված հակա-Աստված խոսքերը համալսարանի դասախոսի ուշադրությունը գրավեցին: Որպես նախապես հավատ չունեցած մարդ՝ նա մտածեց, որ մեքենայի տերն ուզում է բարկացնել հավատացյալներին: «Բարկությունն օգնում է անաստվածին արդարացնելու իր անաստվածությունը», - բացատրեց նա ու շարունակեց. «Շատ հաճախ անաստվածը վերցնում է այն, ինչ որ ինքն է փափագում ունենալ»:

Հիշելով իր հավատքի ճամփորդությունը՝ դասախոսը նկատի ունեցավ մտավախությունը մի Քրիստոնյա բարեկամի, որ իրեն մղել էր ճանաչել Քրիստոսի մասին եղած ճշմարտությունը: Իր ընկերոջ «փրկության կարիքի անմիջականության զգացումը հայտնվել էր առանց որևէ բարկության նշույլի»: Նա երբեք չմոռացավ այդ օրն իր ստացած հարգանքն ու շնորհը:

Հիսուսին հավատացողները հաճախ հարձակողական դիրք են ընդունում, երբ ուրիշները Նրան մերժում են: Սակայն ինչպե՞ս է Նա զգում մերժումը: Հիսուսը հաճախ դիմադրավեց ատելություն ու սպառնալիք, սակայն երբեք անձնապես կասկած չունեցավ իր աստվածության վերաբերյալ: Մի օր, երբ մի գյուղ մերժեց հյուրասիրել Նրան, Հակոբոսն ու Հովհաննեսը ուզեցին անմիջապես հատուցել. «Տե՛ր, ուզո՞ւմ ես ասենք՝ երկնքից կրակ իջնի ու դրանց ոչնչացնի...» (Ղուկ. 9:54): Հիսուսը դա չուզեց ու հանդիմանեց նրանց (հմ. 55): Զարմանալի կարող է թվալ, որ Աստված մեր կարիքը չունի իրեն պաշտպանելու համար: Նա ուզում է, որ իրեն ներկայացնենք, իսկ դա ժամանակ, ջանք, ճնշում ու սեր է պահանջում:

Աղոթք - Տե՛ր, երբ ատելություն ենք դիմագրավում, օգնիր մեզ, որ ատելությամբ չլցվենք, սակայն պատասխանենք այնպես, ինչպես Դու ասացիր. «Չայր, ցերի՛ր նրանց, որովհետև չգիտեն, թե ի՞նչ են անում» (Ղուկ. 23:34):

Յիսուսին պաշտպանելու լավագույն ձևը Նրա նման ապրելն է:

Կարդա՛ր
Ղուկաս 9. 51-56

Սիրալիք պատասխանը մեղմացնում է գայրույթը, բայց խիստ խոսքը բարկություն է հարուցում: Առ. 15.1

ՆՄԱՆԱԿՆԵՐ

Ատում են, թե բոլորս էլ ունենք գոնե մեկը, որ նման է մեզ՝ մեզ հետ կապ չունեցող, սակայն մեզ շատ նման անձ:

Իմ նմանակը երաժշտական աշխարհից է: Երբ ներկա եմ լինում նրա համերգներին, շատ երկրպագուներ մոտենում են ինձ ընդմիջմանը: Սակայն ես Ձեմս թեյլորը չեմ, երբ հերթը երգելուն ու կիթառ նվագելուն է հասնում:

Մենք պարզապես նման ենք իրար:

Դու ո՞ւմ ես նման: Մինչ այդ հարցին ես պատասխանում, մտածիր Բ Կորնթ. 3.18-ի մասին, ուր Պողոսը մեզ ասում է. «...մենք բոլորս նույն (Տիրոջ) պատկերի նման կերպարանափոխվում ենք»: Երբ փորձում ենք մեր կյանքով Տիրոջը պատվել, մեր նպատակներից մեկը պիտի լինի Նրա պատկերը կրել: Բնականաբար, սա չի նշանակում մորուք թողնել, տրեխ հագնել, այլ՝ Սուրբ Հոգու օգնությամբ Քրիստոսանման հատկանիշներ ցույց տալ կյանքում: Օրինակ՝ կեցվածքի մեջ՝ հեզուլթյուն, նկարագրի մեջ՝ սեր, ու կարեկցության մեջ՝ դժբախտներին օգնություն: Մենք Հիսուսին պիտի նմանվենք ու Նրան ընդօրինակենք:

Մինչ «խորհում ենք Տիրոջ փառքի մասին», մեր աչքերը սևեռելով Հիսուսի վրա՝ կարող ենք ավելի աճել ու ավելի նմանվել Նրան: Ի՛նչ հրաշալի պիտի լինի, եթե մարդիկ մեզ նայեն ու ասեն. «Հիսուսին եմ տեսնում քո մեջ»:

Աղոթք - Տե՛ր, օգնիր ինձ Քեզ նայելու, Քեզ հասկանալու ու ճանաչելու: Մոտեցրու մեզ Քո պատկերին մեր ասածներով, ուրիշներին սիրելով ու Քեզ պաշտելով: Թող ուրիշները Դիսուսին տեսնեն մեր մեջ:

Սերը ընտանեկան ցմանությունն է, որ աշխարհին տեսանելի պիտի լինի Քրիստոսի հետևորդների կյանքի մեջ:

**Կարդա՛ր
 Բ Կորնթ. 3.17 - 4.2**

Սակայն մենք...
 նույն պատկերի
 նման, կերպարա-
 նափոխվում ենք
 փառքից դեպի
 փառք, ինչպես որ
 Տիրոջ Գոգուց:
 Բ Կորնթ. 3.18

Նախանձի բուժումը

Ուրախությամբ համաձայնեցի թոռնիկներինս հոգ տանել, երբ նրանց ծնողները գնացին մի երեկոյի: Ողջագուրումից հետո հարցրի երեխաներին, թե ի՞նչ արեցին շաբաթվա վերջին: Երկուսն էլ տարբեր արկածներ էին ունեցել: Բրիդջերը, որ երեք տարեկան էր, շնչասպառ պատմեց, թե ինչպես էր մի երեկո անցկացրել մորաքրոջ ու քեռու հետ. պաղպաղակ էր կերել, պտտվող արհեստական ձիերի վրա նստել ու ֆիլմ դիտել: Հաջորդը հինգ տարեկան Սամուելի հերթն էր: Երբ հարցրի, թե ի՞նքն ինչ է արել, նա պատասխանեց. «Ճամբար էի գնացել - camping»: Հարցրի. «Ուրա՞խ անցավ»: «Ոչ այդքան», - պատասխանեց նա: Սամուելը նախանձի զգացում ունեցավ՝ մոռանալով, թե որքան լավ ժամանակ էր անցկացրել հոր հետ ճամբարում, երբ կրտսեր եղբայրը պատմում էր իր արկածների մասին:

**Կարդա՛ր
 Ա Թագ. 18. 5-15**
 Այն օրից Սավուղը ծուռ աչքով էր նայում Դավթին:
 Ա Թագ. 18.9

Բոլորս էլ նախանձի թակարդն ենք ընկնում: Սավուղ թագավորն էլ նախանձի մեծաչյա հրեշին լսեց, երբ Դավթի փառքը իրենից ավելի եղավ. «Սավուղը հազար, իսկ Դավիթը բազմահազար մարդկանց սպանեց» (Ա Թագ. 18.7): Սավուղը բորբոքվեց ու «այն օրից ծուռ աչքով էր նայում Դավթին» (Հմ. 9): Նա այնքան զայրացավ, որ ուզեց սպանել Դավթին: Համեմատվելու խաղը քանդող ու հիմար է: Միշտ մեկը պիտի ունենա մի բան կամ փորձություն, որ ուրիշը չունի: Սակայն Աստված արդեն տվել է զանազան օրհնություններ, թե կանք այս աշխարհի վրա, ու կա հավիտենական կյանքի խոստում բոլոր նրանց, ովքեր հավատում են Իրեն: Նրա վրա կենտրոնանալով ու շնորհակալ սրտով՝ Նրա օգնությունը վստահելով՝ մենք կարող ենք հաղթել նախանձին:

Աղոթք - Տեր, մեզ տալիս ես կյանք ու հավիտենական կյանքի խոստում, եթե վստահեմք Քեզ որպես մեր Փրկչի: Դրա ու շատ ուրիշ օրհնությունների համար Քեզ ենք փառավորում:

Նախանձի բուժումը շնորհակալությունն է Աստծուն:

Արագավազ ջրերի վրա նավարկել

Հաճույքով սկսելու էի լաստանավով նավարկումի իմ առաջին փորձը, երբ լսեցի արագավազ ջրերի գոչուհը: Սիրտս թրթռաց վախի, անորոշույթյան ու անապահովության զգացումներից: Հորդառատ ջրերի մեջ առաջինը սոսկանք ապրեցի: Ու հանկարծ ամեն բան փոխվեց: Լաստի ետևում նստած մեր առաջնորդը հանգարտորեն նավարկեց արագավազ ջրերի միջով: Ես ապահով զգացի գոնե մինչև հաջորդ հոսքը:

Մեր կյանքում եղած փոփոխություններն էլ կարող են նման փորձություն ունենալ, անխուսափելի ուսումներ կյանքի մի եղանակից մյուսը՝ քույրից աշխատանքի ասպարեզ, աշխատանքի փոփոխություն, ծնողների թողնելով առանձին կամ կողակցի հետ ապրելը, աշխատանքից հեռանալը, թոշակի անցնելը, երիտասարդությունից ծերություն անցումը: Այս բոլորն էլ մեզ տալիս են անորոշույթյան և անապահովության զգացողություն:

Հին Կտակարանի ամենից նշանակալից անցման պատմության արձանագրությունը Սողոմոնի զահ բարձրանալն է իր հորից՝ Դավթից հետո: Վստահ եմ, որ անորոշության զգացում ուներ այս հանգամանքի համար: Ո՞րն էր հոր խրատը. «Մի՛ վախեցիր ու մի՛ զարհուրիր, քանզի իմ Տեր Աստվածը քեզ հետ է, նա քեզ չի թողնի» (Ա Մնաց. 28.20): Մենք էլ մեր կյանքի մեջ անցման դժվարություններ պիտի ունենանք: Սակայն Աստծուն մեր լաստի մեջ ունենալով՝ մենք միայնակ չպիտի լինենք: Նա, որ նավարկում է մեր կյանքը, մեզ պիտի տա ուրախություն և ապահովություն: Նա մեզնից առաջ շատերին է անցկացրել այդ հորդահոս ջրերի միջով:

Աղոթք - Տեր, մեզ հետ եղիր, երբ դիմագրավում եմք կյանքի մեջ գոռացող արագավազ ջրերին:

Կարդա՛ր
 Ա Մնաց. 28. 9-20

...մի՛ վախեցիր ու մի՛ զարհուրիր, քանզի իմ Տեր Աստվածը քեզ հետ է, նա քեզ չի թողնի ու չի լքի...

Ա Մնաց. 28.20

Աստված առաջնորդում է մեզ արագավազ ջրերի մեջ:

Գործառնագուրկ

Գործառնագուրկ բառը հաճախ գործածվում է՝ ներկայացնելու անհատների, ընտանիքների, կազմակերպությունների, որոնք չեն անում իրենցից ակնկալվածը: Մինչ գործառու նշանակում է կանոնավոր աշխատանքի մեջ լինել, գործառնագուրկ նշանակում է հակառակը. կոտրված, կանոնավոր աշխատանք չունեցող, անկարող անելու այն, ինչի համար կոչված ու պատրաստված է:

Պողոս առաքյալը Հռոմի եկեղեցուն իր գրած նամակում սկսում է ներկայացնել հոգևոր առումով գործառնագուրկ եղող մարդկություն (1.18-32): Մենք բոլորս էլ մաս ենք կազմում ապստամբ մի հասարակության. «Ամենքը խոտորել են, միասին անպիտանացել. բարություն անող չկա, անգամ մե՛կն էլ չկա: Որովհետև բոլորը մեղանչեցին ու զրկված են Աստծո փառքից» (Հռոմ. 3.12, 23):

Սակայն բարի լուրը այն է, որ «նրա շնորհով ճրի են արդարանում, այն փրկության միջոցով, որ Հիսուս Քրիստոսի մեջ է... քավություն լինելու նրա արյանը հավատացողներին» (Հմ. 24-25): Երբ հրավիրենք Քրիստոսին մեր կյանք ու ընդունենք Աստծո տված ներումի առաջարկն ու նոր կյանքը, մենք իր ստեղծած անձը լինելու շավղի վրա կլինենք: Անմիջապես կատարյալ չենք լինի, սակայն նաև կոտրված ու գործառնագուրկ չենք մնա:

Սուրբ Հոգու միջոցով մենք ստանում ենք գորություն՝ մեր արածներով և ասածներով Աստծուն պատվելու ու մեր վրայից թոթափելու մեր նախկին վարքին վերաբերող հին մարդուն, նորոգվելու մեր մտքի հոգով ու հագնելու նոր մարդուն, որ ստեղծվել է արդարության ու ճշմարտության սրբությունով (Եփ. 4.22-24):

Աղոթք - Տե՛ր, մեր գործառնագուրկ կյանքում Քեզ ենք դառնում վերանորոգման ու գորության համար: Շնորհակալ ենք Քո հիանալի շնորհի ու սիրո համար:

Քրիստոսին մոտենալը մեզ օգնում է ապրելու այնպես, ինչպես Ինքն է ձևավորել:

Կարդա՛ր
Յոռմ. 3.10-26

Որովհետև բոլորը
մեղանչեցին ու
զրկված են Աստծու
փառքից:

Յոռմ. 3.23

Ոչ մի ճնճղուկ

Մայրս, որ շատ ազնվական, վայելուչ ու կոկիկ կին էր, հիմա պառկած է հիվանդանոցում՝ գամված անկողնուն ու տկարացած տարիքի պատճառով: Նա շնչելու դժվարություն ունի, ու նրա վատթարացող վիճակը հակասում է նրա ունեցած սքանչելի գարուններին, որոնք հիմա անցյալում են:

Բոլոր հոգեբանական նախապատրաստությունները չեն կարող մեզ բավականաչափ տրամադրել անխուսափելի հրաժեշտին: Ու ես մտածեցի, թե որքան արհամարհելի է մահը:

Ուշադրություն դարձրի պատուհանագործի՝ դրսում գտնվող թռչուններին կերակրելու համար նախատեսված ամանին: Մինչ մի թռչուն մոտեցավ կեր առնելու, մի ծանոթ խոսք հիշեցի. «Մեկն էլ (ճնճղուկներից) առանց ձեր Հոր կամքի գետին չի ընկնի» (Մատթ. 10.29): Հիսուսն այս խոսքն ասաց Իր աշակերտներին, երբ նրանց տալիս էր առաքելության կոչ՝ գնալու Հուդայի շրջանները: Սակայն այս սկզբունքը մեզ բոլորիս է վերաբերում: Նա նաև ասաց. «Դուք շատ ճնճղուկներից ավելի լավ եք» (Հմ. 31):

Մայրս հուզմունքով աչքերը բացեց ու իր մանկության օրերից եկող իր մոր մասին մի հոլանդական գուրգուրանքի խոսք ասաց. «Մթին է մահացել»: «Այո՛, նա հիմա Հիսուսի հետ է», - ասաց կինս: Իսկ մայրս անվստահ շարունակեց ու հարց տվեց. «Իսկ Զոյան ու Զե՞յմսը»: «Այո՛, նրանք էլ Հիսուսի հետ են», - ասաց կինս: «Մենք էլ իրենց հետ պետք է լինենք»:

«Դժվար է սպասել», - ասաց մայրս կիսաձայն:

Աղոթք - Երկնավոր Հայր, այս կյանքը կարող է շատ դժվար ու ցավալի լինել: Սակայն Դու միշտ մեզ հետ ես. մեզ սիրում, պահում ու պահպանում ես: Ու խոստանում ես երբեք չլքել մեզ:

Մահը վերջին մթությունն է՝ երկնքի արշալույսից առաջ:

Կարդա՛ր
Մատթեոս 3.10-26

Տիրոջ աչքում
հարգելի է մահն իր
սրբերի:
Սաղմ.115.15

Թող պատիվը հանդիպի պատվին

Միշտ հիացումով ու զմայլանքով եմ դիտել Արլինգթոն Ազգային գերեզմանատան Անհայտ զինվորի դամբարանի առջև պահակների լուրջ ու մեծաշուք փոփոխությունը: Ուշադրությամբ ծրագրված ու դասավորված այս արարքը ազդու գովաբանություն է այն զինվորներին, որոնց անուններն ու զոհաբերումը միայն Աստծուն են հայտնի: Նույն չափով հուզիչ է միայնակ պահերի մեջ եղած այս արարքը, երբ մարդ չկա. առաջ ու ետ, ամեն ժամ, ամեն օր, նույնիսկ աննպաստ եղանակին:

2003-ի սեպտեմբերին, երբ Իզաբել կոչված որոտամորրիկը մոտենում էր Վաշինգտոն քաղաքին, պահակներին ասվեց, որ կարող են պատասպարվել, երբ մորրիկը սաստկանա: Սակայն նրանք մերժեցին ու իրենց դիրքում մնացին սաստիկ մրրկի դիմաց՝ պատվելու իրենց ընկերներին:

Ես հավատում եմ, որ Մատթեոս 6.1-6-ում արձանագրված Հիսուսի ուսուցման հիմքը կազմում է Նրա այն ցանկությունը, որ մենք ապրենք մեր կյանքը անձնուրաց նվիրումով: Աստվածաշունչը հրավիրում է մեզ բարի գործ անելու ու սուրբ կյանքով ապրելու: Սակայն սրանք պիտի լինեն պաշտամունքի ու հնազանդության գործեր (Հմ. 4-6), ոչ թե ձևական գործեր ինքնագովության համար (Հմ. 2): Պողոս առաքյալը հաստատում ու վավերացնում է ամբողջ կյանքով լինելիք հավատարմությունը, երբ աղերսում է մեզ, որ մեր «մարմինները ներկայացնենք կենդանի զոհ» (Հռոմ. 12.1): Թող մեր միայնակ ու մարդկանց մեջ եղած պահերը խոսեն ամբողջ սրտով մեր նվիրումի մասին:

Աղոթք - Տե՛ր, տուր այսօր ինձ զորություն՝ հարատևելու ու պատիվ բերելու Քո անվանը, երբ ծառայում եմ Քեզ: Իմ ցանկությունն է անձս նվիրել իմ հանդեպ Քո ունեցած սիրո համար:

Որքան ավելի ծառայենք Քրիստոսին, ավելի քիչ ենք ծառայում մեր անձին:

Կարդա՛ր Մատթեոսի 6. 1-6

Ձգո՛ւյշ կացեք, որ ձեր ողորմությունը մարդկանց առաջ, նրանց երևալու համար չանեք, այլապես վարձ չեք ունենա ձեր Հորից, որ երկնքում է:

Մատթ. 6.1

Ողորմություն ակնկալել ու տալ

Ռժգոհեցի մի բարեկամից, որի արած ընտրությունները նրան առաջնորդում էին ինձ վրա: Այն կինը, որի հետ ամեն շաբաթ աղոթում էի, ձեռքերը ձեռքերիս մեջ դնելով՝ ասաց. «Աղոթենք բոլորիս համար»:

Ճակատս կնճռոտելով՝ ասացի. «Բոլորիս համար»: «Այո՛», - ասաց նա: «Դու չե՞ս, որ միշտ ասում ես, թե Հիսուսը հաստատում է սրբություն մեր չափանիշները, ուրեմն՝ մեր մեղքերը չպիտի համեմատենք ուրիշների մեղքերի հետ»:

Ես ասացի. «Այդ ճշմարտությունը մի քիչ ցավեցնում է, սակայն ճիշտ ես: Իմ դատողությունն ու հոգևոր հպարտությունը ավելի լավը չեն իր մեղքերից»: «Ու խոսելով բարեկամիդ մասին՝ մենք բամբասում ենք: Ուրեմն...»: «Մենք մեղք ենք գործում»: Գլուխս ծռելով՝ ասացի. «Խնդրեմ, աղոթիր բոլորիս համար»:

Ղուկաս 18-ի մեջ Հիսուսը մի առակ պատմեց երկու մարդկանց մասին, որոնք տաճար գնացին աղոթելու տարբեր ձևերով (Հմ. 9-14): Փարիսեցու նման մենք կարող ենք ուրիշների հետ մեզ համեմատելու ծուղակն ընկնել: Կարող ենք հպարտանալ մեր արածներով (Հմ. 11-12) ու ապրել այնպես, կարծես ուրիշներին դատելու իրավունքը ու պատասխանավությունն ու ուժը ունենանք ուրիշներին փոխելու: Սակայն երբ Հիսուսին նայենք՝ իբրև օրինակ սուրբ կյանք ապրելու, ու այդ մաքսավորի նման Աստծո ողորմությունը խնդրենք, պիտի տեսնենք, որ մեր ակնկալիքը պիտի չափազանցվի (Հմ. 13):

Աղոթք - Տե՛ր, խնդրում եմ հեռու պահիր մեզ ուրիշների հետ համեմատելու ծուղակից: Կաղապարիր ու մեզ Քեզ նման դարձրու:

Երբ անդրադառնանք ողորմության մեր ակնկալիքին, ավելի պատրաստ կլինենք ողորմություն տալու ուրիշներին:

Կարդա՛ր
Ղուկաս 18.9-14

Ո՛վ Աստված, ողորմիր ինձ՝ մեղավորիս: Ղուկ. 18.13

Կոտորված լինելու գեղեցկությունը

«Կիտսուկին» կոտորած ամաններ կպցնելու դարերի պատմությունը ունեցող ճապոնական արվեստ է: Ոսկու փոշին, խառնված ռետինի հետ, որպես ուժեղ սոսինձ՝ օգտագործվում է փրչված կտորները կպցնելու ու ճեղքերը փակելու: Փոխանակ ծածկելու նորոգված հատվածը՝ այդ արվեստը գեղեցիկ բան է ստեղծում փրչված կտորներից:

Աստվածաշունչը մեզ ասում է, որ Աստված նույնպես արժևորում է մեր կոտորված վիճակը, երբ մենք իրապես զղջում ենք մեր գործած մեղքերի համար: Դավիթը Բերսաբեի հետ մերձենալուց ու նրա ամուսնուն սպանելու ծրագիրը դնելուց հետո, Նաթան մարգարեին հակադրեց իրեն ու զղջաց: Դավիթի աղոթքը ցույց է տալիս մեզ, թե Աստված ինչ է ուզում, երբ մենք մեղք ենք գործում: «Եթե ուզեիր՝ պատարագ կմատուցեիր, բայց դու ողջակեզներ չես սիրում: Խոնարհ հոգին է պատարագն Աստծու, մաքուր սիրտն ու խոնարհ հոգին Աստված չի արհամարհում» (Սաղմ. 50.18-19):

Կարդա՛ր
Սաղմոս 50

Խոնարհ հոգին է
պատարագն
Աստծու:

Սաղմ. 50.19

Երբ մեր սիրտը կոտորած է մեղքի պատճառով, Աստված նորոգում է այն խաչի վրա Փրկչի տված անգին ներումով: Նա մեզ ընդունում է սիրով, երբ մեր անձերը խոնարհեցնենք իր առջև, ու մեր մոտիկությունը վերահաստատվի:

Որքա՞ն ողորմած է մեր Աստվածը: Խոնարհ ու հեզ սրտի համար իր ցանկությունը, ինչպես նաև իր ազնվությունը գեղեցկությունը թող մեզ համար Սուրբ Գրային աղոթքի առիթ լինեն. «Փորձի՛ր ինձ, Աստվա՛ծ, ու ճանաչի՛ր իմ սիրտը, քննի՛ր ինձ ու ճանաչի՛ր իմ շավիղները, և տե՛ս, եթե իմ ճանապարհին տնօրենություններ կան, առաջնորդի՛ր ինձ քո հավիտենական ճանապարհներով» (Սաղմ. 138.23-24):

Աղոթք - Սիրող Աստված, ուզում եմ ուրախություն պատճառել Քեզ՝ ունենալով խոնարհ, հեզ ու զղջացող մի սիրտ:

Աստվածային ցավը ուրախության է առաջնորդում:

Ամեն բան, ինչի կարիքն ունենք

Հաճախ ինձ անընդունակ եմ զգում ստանձնածս պարտակա- նուլթյունները կատարելու, լինեն դրանք կիրակնօրյա դպրոցում դասավանդում, բարեկամի խորհուրդ տալ կամ այս գրքույկի համար հոգված գրել: Ընդհանրապես մարտահրավերը թվում է կարողութունիցս շատ ավելին: Պետրոսի նման ես էլ շատ բան ունեմ սովորելու: Նոր Կտարակարանը պարզում է Պետրոսի թերութունները Տեր Հիսուսին հետևելու իր ջանքի մեջ: Երբ նա քայլում էր ջրի վրայով, սկսեց սուզվել (Մատթ. 14.25-31): Երբ Հիսուսը ձերբակալվեց, երզվեց, որ Նրան չէր ճանաչում (Մարկ. 14.66-72): Սակայն նրա հանդիպումը հարություն առած Քրիստոսի հետ ու Սուրբ Հոգու գորությունը նրա կյանքն ամբողջովին փոխեցին:

Պետրոսի համար պարզ եղավ, որ «աստվածային գորությունը մեզ շնորհեց այն ամենը, ինչ կյանքի և աստվածապաշտության համար պետք է նրա՛ գիտու- թյամբ, ով մեզ կանչեց փառքով ու առաքինությամբ» (Բ Պետ. 1.3), «որոնցով ամենամեծ ու պատվական խոստումներ են մեզ տրված, որպեսզի դրանցով աստվածային բնությանը հաղորդա- կից լինեք՝ աշխարհում ցանկութունից եկող ապականութունից հեռու փախչելով» (Հմ. 4): Տեր Հիսուսի հետ մեր հարաբերու- թյունը Աստծուն պատվելու, ուրիշներին օգնելու ու ներկայի մարտահրավերները դիմադրավելու համար մեզ հարկավոր իմաստության, համբերության ու գորության աղբյուրն է:

Աղոթք - Շնորհակալ եմ, Հայր, ամեն բանի համար, որ տալիս ես, որոնց կարիքն ունեմ Քեզ ծառայելու և ուրիշներին քաջալերելու: Թող Քեզ պատվեմ իմ բոլոր արածներով:

Կարդա՛ր Բ Պետրոս 1.1-11

Ինչպես որ նրա աստվածային զորությունը մեզ շնորհեց այն ամենը, ինչ կյանքի և աստվածապաշտության համար պետք է նրա գիտությանը, ով մեզ կանչեց փառքով և առաքինությամբ:

Բ Պետրոս 1.3

Աստված խոստանում է ամեն բան տալ, որպեսզի մեր կյանքով Իրեն պատվենք:

Ապառաժյա պատվանդան

Ապառաժյա պատվանդանի վրա լուսազարդ հսկա մի խաչ կա մեր քաղաքի դիմաց գտնվող տափաստանում: Բազմաթիվ տներ են շինված նրան կից հողամասի վրա, սակայն այդ տների տերերը հարկադրված եղան իրենց տներից դուրս գալ անապահովության մտահոգություններով: Հակառակ այն բանի, որ այս տները մոտ էին այդ ամուր հիմնաժայռին, ապահով էին: Նրանց հիմքերը սկսել էին շարժվել քիչ-քիչ, ամեն օր մի մատնաչափ՝ պատճառ դառնալով ջրի խողովակների կտրվելուն ու արագընթաց հոսքի:

Հիսուսը համեմատում է նրանց, ովքեր լսում են իր խոսքերը ու կատարում դրանք, նրանց, ովքեր իրենց տները կառուցում են ամուր հիմքի վրա (Ղուկ. 6.47-48): Այդ տները դիմանում են հեղեղներին: Մյուս կողմից Նա ասում է, որ նրանք, ովքեր լսում են Իր խոսքերը ու չեն գործադրում, նմանվում են նրանց, ովքեր իրենց տները կառուցում են առանց հիմքի, և հեղեղների ժամանակ փուլ են գալիս:

Շատ անգամ եմ փորձում անտեսել խիղճս, երբ վստահ եմ լինում, որ Աստված ինձնից շատ ավելին է ակնկալում, մտածելով, թե իմ արածները բավարար են: Վտանգված այդ տները ինձ պարզեցին, որ «մոտ» լինելը բավարար չէ Իր խոսքին հնազանդվելու համար: Իրենց տները հաստատ հիմքերի վրա կառուցող մարդկանց նման, որոնք հաստատուն են մնում իրենց դեմ խուժող կյանքի փոթորիկների դիմաց, պետք է ուշադիր լինենք մեր Տիրոջ բոլոր խոսքերին:

Աղոթք - Տե՛ր, օգնիր ինձ, որ իմ ամբողջ սրտով հնազանդվեմ Քեզ: Շնորհակալ եմ, որ Դու ես իմ հաստատուն հիմքը:

Աստօծ խոսքը կյանքի միակ հաստատուն հիմքն է:

Կարդա՛ր Ղուկաս 6.46-49

«Եվ ինչո՞ւ եք ինձ «Տե՛ր, Տե՛ր» կանչում, բայց չեք անում այն, ինչ ասում եմ:

Ղուկ. 6.46

Վատահել ինչ-որ մեկին

Բարեկամուհիս արցունքոտ աչքերով ասաց. «Ձեռ կարող որե՛կ մեկին վատահել: Ամեն անգամ, երբ փորձում եմ ինչ-որ մեկին վատահել, ցավեցնում է»: Նրա պատմությունը ինձ վրդովեց, երբ ասաց, թե իր բարեկամը, որի մասին մտածում էր, թե կարող էր վատահել, իրարից բաժանվելուց հետո իրեն զրպարտել էր: Ցավալի անցյալ ունենալուց հետո, երբ նա փորձել էր մարդկանց վատահել, բարեկամի դավաճանությունը մեկ անգամ ևս հաստատել էր, թե չի կարելի մարդկանց հավատալ:

Ինձ համար դժվար եղավ բառեր գտնել: Չկարողացա իրեն ասել, թե սխալվում էր, որովհետև կարելի է վատահելի ու ազնիվ մարդիկ գտնել: Նրա պատմությունը ցավալիորեն հիշեցրեց ինձ անակնկալ դավաճանություն պահեր, որոնք ունեցել եմ կյանքիս մեջ: Աստվածաշունչը բացահայտ խոսում է մարդկային վատ բնույթի մասին: Առակաց 20.6-ում հեղինակը նույն բանի մասին է խոսում: Մարդկանց անգթությունը պատմության մի մասն է միայն: Հակառակ այն իրողություն, որ մարդկանց վիրավորանքները իրական են, Հիսուսը հնարավոր է դարձնում իրավ ու կատարյալ սերը: Հովհաննու 13.35-ում Հիսուսն իր աշակերտներին ասաց, թե աշխարհը պիտի իմանա, որ նրանք իր հետևորդներն են իրենց ունեցած սիրո համար: Հակառակ այն իրողություն, որ մարդիկ կարող են մեզ վիրավորել, Տեր Հիսուսի պատճառով նաև պիտի լինեն մարդիկ, որոնք առանց որե՛կ պայմանի պիտի քաջալերեն ու հոգան մեր մասին: Թող որ Նրա սիրուն հենվելով՝ մեր ցավերն ամոքենք ու քաջություն ունենանք ուրիշներին սիրելու, ինչպես Նա արեց:

Աղոթք - Տեր, մարդկանց՝ մեզ պատճառած վերքերը կարող եմ խորը լինել: Շնորհակալ եմք մեր գտած հանգստի ու սփոփանքի համար եկեղեցու ընտանիքի՝ Քո մարմնի մեջ: Օգնիր մեզ, որ այս սերը բաժանենք ուրիշների հետ:

Հիսուսը հնարավոր դարձրեց ճշմարիտ սերը:

**Կարդա՛ր
Հովհաննես 13.33-55**

Մեծանուն ու պատվական է գթասիրտ մարդը, բայց դժվար է գտնել հավատարիմ մարդ:

Առ. 20.6

Կատարյալ խաղաղություն

Բարեկամուհիս ասաց, թե տարիներ շարունակ փնտրեց խաղաղություն ու հաճույք: Նա ու ամուսինը միասին հաջող մի գործ հիմնեցին, հետևաբար կարողացան մեծ տուն, գեղեցիկ հագուստ ու գոհարեղեն գնել: Սակայն սրանք չկարողացան գոհացնել ներքին խաղաղության ցանկությունը, ոչ էլ ազդեցիկ մարդկանց հետ բարեկամություն հաստատելու փափազը: Մի օր, երբ շատ վատ էր զգում, մի բարեկամ պատմեց նրան Հիսուսի բարի լուրի մասին: Այդ պահին նա գտավ Խաղաղության Իշխանին, ու իր պատկերացումը ճշմարիտ խաղաղության ու հաճույքի մասին արմատապես փոխվեց:

Հիսուսը նման խաղաղության խոսքեր ասաց Իր աշակերտներին վերջին ընթրիքից հետո (Հովհ. 14), երբ պատրաստում էր նրանց բոլոր այն բաների համար, որոնք շուտով պիտի պատահեին՝ իր մահը, հարությունն ու Սուրբ Հոգու գալուստը: Նկարագրելով խաղաղությունը, ոչ այն խաղաղության նման, որ աշխարհը կարող է տալ, նա ուզեց, որ նրանք սովորեն, թե ինչպես կարելի է լավ լինելու զգացում ունենալ՝ նեղությունների մեջ լինելով հանդերձ: Ապա երբ հարություն առավ, երևաց Իր մահից հետո վախեցած աշակերտներին: Նա ողջունեց նրանց՝ ասելով. «Խաղաղություն՝ ձեզ» (Հովհ. 20:19): Նա հիմա կարող է նրանց ու մեզ տալ նոր ըմբռնում հանգիստ գտնելու, այն, ինչ որ Ինքն արեց մեզ համար: Մինչ մենք այս ենք անում, կարող ենք ունենալ վստահության երաշխիք, որը մեր փոփոխական զգացումներից շատ ավելի խորն է:

Աղոթք - Երկնավոր Չայր, կատարյալ խաղաղության մեջ պիտի թողնես նրանց, որոնց միտքը Քեզ վրա է հաստատված: Օգնի՛ր մեզ, որ կարողանանք Քեզ վստահել, որովհետև Դու մեր հաստատուն վե՛մն ես:

Չիսուսը եկավ մեզ ու մեր աշխարհին խաղաղություն բերելու:

Կարդա՛ր
Չովհաննես 14. 25-31

Խաղաղություն եմ
թողնում ձեզ, իմ
խաղաղությունն եմ
տալիս ձեզ...:

Չովհ.14.27

Ի՞նչ ենք ուզում

Մի տարեց մարդ իր թոռանն ասաց. «Ձիուց ու մեքենայից լուսնի վրա քայլող մարդ դարձա՛ս»: Ապա մտածելով շարունակեց. «Երբեք չմտածեցի, որ շատ կարճ պիտի լինի»:

Կյանքը կարճ է, ու մեզնից շատերը Հիսուսին են դիմում, որովհետև ուզում են հավիտյան ապրել: Դա վատ բան չէ, սակայն իրականում չենք հասկանում, թե ինչ է հավիտենական կյանքը: Մենք սխալ բաներ ենք ցանկանում: Փափազում ենք ավելի լավ բան ունենալ ու մտածում ենք՝ ինքներս մեզ ասելով. «Միայն թե կարողանամ դպրոցս ավարտել: Միայն թե այդ աշխատանքը ունենամ: Միայն թե ամուսնացած լինեի: Միայն թե թոշակի անցնեի: Միայն թե...»: Եվ մի օր էլ լսում ենք պապի ձայնի արձագանքը և զարմանում ենք, թե ինչպես է ժամանակն անցել:

Ճշմարտությունն այն է, որ մենք հավիտենական կյանք ունենք հիմա՛: Պողոս առաքյալն ասում է. «Հիսուս Քրիստոսի մեջ կյանքի հոգու օրենքն ինձ ազատեց մեղքի ու մահվան օրենքից» (Հռոմ. 8:2): Ապա նա ասաց. «Մարմնավոր եղողները մարմնի բաներն են մտածում, իսկ հոգևոր եղողները՝ հոգու բաները» (Հմ. 5): Այլ խոսքով, մեր ցանկությունները փոխվում են, երբ Քրիստոսին ենք դիմում: Սա բնականաբար մեզ տալիս է այն, ինչ ցանկանում ենք ունենալ: Կյանքի մեծագույն խաբեություններից մեկն այն է, որ մենք ուզում ենք ուրիշ տեղ լինել, ուրիշ բան անել, ուրիշի հետ լինել, փոխանակ սկսենք ճշմարիտ կյանքով ապրել: Երբ կյանք գտնենք Տեր Հիսուսով, մեր կարծիքը կփոխենք կյանքի կարճության մասին՝ հանուն Նրա հետ ներկայում ու ապագայում ամբողջական երջանկության:

Աղոթք - Տեր, Դու եկար կյանք տալու ու ավելի կյանք տալու, սակայն շատ անգամ մենք մեր անձնական ցանկություններն ու կյանքի նպատակներն ունենք: Ների՛ր մեզ և օգնիր, որ ցանկանանք այն, ինչ Դու ես կամենում:

Հավիտյան ապրելու համար թույլ պիտի տանք, որ Հիսուսը մեր մեջ ապրի:

Կարդա՛

Հոռմեացիներ 8.1-11

...Քրիստոսին մեռելներից հարություն տվողը ձեր մահկանացու մարմիններն էլ կկենդանացնի իր Հոգով...: Հոռմ. 8.11

Տասնհինգ թույլի մարտահրավերը

Հարվարդի Համալսարանի տարիների ռեկտոր զոկտոր Չարլզ Էլլիոթը հավատում էր, որ սովորական մարդիկ, ովքեր մշտապես կարդում են գրականություն նույնիսկ օրական մի քանի ընթացքով, կարող են որոշ արժեք ներկայացնող կրթություն ստանալ: 1910-ին նա համախմբեց պատմական, գիտական, փիլիսոփայական ու արվեստի գրքերից հատվածներ հիսուն հատորի մեջ՝ հայտնի «Հարվարդի դասականներ» անունով: Յուրաքանչյուր հավաքածու պարունակում էր զոկտոր Էլլիոթի ընթերցանության ուղեցույցը՝ խորագրված «Օրական տասնհինգ ընթացքով», որ ուներ հանձնարարելի հատվածներ տարվա յուրաքանչյուր օրվա համար՝ կազմված 5-10 էջից:

Կարդա՛ր
Սաղմոս 118. 33-40

Սիրտս հակի՛ր դեպի քո պատվիրանները...:
Սաղմ. 118.36

Ի՞նչ կլինի, եթե մենք օրական տասնհինգ ընթացքով Աստծո խոսքը կարդանք: Սաղմոսերգուհի հետ կարող ենք ասել. «Սիրտս հակի՛ր դեպի քո պատվիրանները, և ոչ թե դեպի ազատություն: Երջի՛ր աչքերս, որ ունայնություն չտեսնեմ, ինձ պահպանի՛ր քո ճանապարհին» (Սաղմ. 118.36-37):

Օրական տասնհինգ ընթացքով հավասար է տարեկան իննսունմեկ ժամի: Սակայն օրական քանի ընթացքով էլ Աստվածաշունչ կարդանք, հարատևությունը գաղտնիքն ու բանալի համեմն է, կատարելությունը չէ, այլ հարատևությունը: Եթե մի օր կամ մի շաբաթ զանց առնենք կարդալը, կարող ենք դարձյալ սկսել: Մինչ Սուրբ Հոգին սովորեցնում է մեզ, Աստծո խոսքը տեղափոխվում է մեր մտքից մեր սրտին ու ապա մեր ձեռքերին ու ոտքերին՝ մեզ տանելով ուսումնից այն կողմ եղող բարեփոխության:

Աղոթք - Քեզ եմ դառնում, որպեսզի սովորեցնես ինձ, մինչ շարունակում եմ կարդալ քո խոսքը: Ուզում եմ Քեզնից լսել, Քեզ ճանաչել ու ավելի մոտենալ Քեզ:

Աստվածաշունչը միակ գիրքն է, որի Հեղինակը միշտ ներկա է, երբ կարդում ենք:

Աստված կանչում է

Մի առավոտ աղջիկս մի պահ բջջային հեռախոսը տվեց տասնմեկ ամսական որդուն՝ նրան զբաղեցնելու համար: Մի քանի վայրկյան հետո հեռախոսս զանգեց: Երբ վերցրի ու պատասխանեցի, լսեցի մանկան ձայնը: Ըստ երևույթին՝ նրա մատը սխալմամբ համարս էր հավաքել: Որպես արդյունք՝ ես ու թոռնիկս «խոսակցություն» ունեցանք, որը երբեք չպիտի մոռանամ: Թոռնիկս հազիվ է մի քանի բառ արտասանում, սակայն ճանաչում է ձայնս: Հետևաբար հետը խոսեցի ու ասացի, թե որքան եմ սիրում նրան: Ուրախություն ապրեցի նրա ձայնը լսելով ու հիշեցի Աստծո ցանկությունը՝ մեզ հետ սերտ հաղորդակցություն ունենալու: Սկզբից Աստվածաշունչը մեզ ցույց է տալիս, թե ինչպես է Աստված գործնականապես մեզ հետևում: Ադամը և Եվան Աստծուն չհնազանդվելով մեզք գործեցին ու

Կարդա՛ Ծննդոց 3.1-10

Աստծու սերը մեր մեջ նրանով երևաց, որ Աստված իր միածին Որդուն աշխարհ ուղարկեց, որպեսզի նրանով կյանք ունենանք:

Ա Չովհ. 4.9

Նրանից փախուստ տալով՝ փորձեցին պարտեզում թաքնվել. «Տեր Աստված կանչեց Ադամին ու ասաց նրան. «Ո՛ւր ես» (Ծննդ. 3.9):

Աստված շարունակեց հետևել մարդկությունը Տեր Հիսուսի միջոցով: Քանի որ ցանկանում է հարաբերություն ունենալ մեզ հետ, իր Որդի Հիսուսին աշխարհ ուղարկեց, որպեսզի նրա մահով մեր մեղքերը հատուցի: Որքա՛ն լավ է իմանալ, որ Աստված մեզ սիրում է ու ուզում, որ իր սերը փոխադարձենք Տեր Հիսուսի միջոցով: Նույնիսկ եթե չգիտենք, թե ինչ ասենք, Աստված իր ուշադրությունը սևեռում է մեզ վրա՝ մեզ լսելու համար:

Աղոթք - Երկնավոր Յայր, շնորհակալ եմ Քո սիրո ու Քեզ հետ հարաբերություն ունենալու հնարավորության համար: Օգնիր ինձ, որ ուրախությամբ Քեզ մոտենամ:

Աստծո սերը մեր հանդեպ հայտնվում է Հիսուսի միջոցով:

Մատանիներ ու շնորհ

Երբ նայում եմ ձեռքերիս, հիշում եմ նշանադրության ու ամուսնություն իմ կորցրած մատանիները: Զանազան գործեր միաժամանակ կատարելով՝ ճամփորդական պայուսակս էի պատրաստում և մինչև այսօր չգիտեմ, թե ուր մնացին դրանք:

Սոսկումով ամուսնուս ասացի պատահածի մասին՝ մտահոգ, թե ինչ ազդեցություն պիտի թողնի դա նրա վրա: Սակայն նա սիրով ու հոգատարությամբ ընդունեց եղածը ու մտահոգվեց ավելի ինձ համար, քան մատանիներով: Հակառակ իր այս սիրալիկ մոտեցումին՝ դեռևս ուզում եմ որևէ քան անել նրա շնորհն ու վստահությունը շահելու համար: Նա, սակայն, այս դեպքը երբեք իմ դեմ սխալ կերպով չի գործածել:

Կարդա՛ր Երայեցիներ 8.6-13

...Նրանց մեղքերն ու նրանց անօրենություններն այլևս չեն հիշելու: Եբր. 8.12

Շատ հաճախ ենք հիշում մեր մեղքերը ու մտածում, թե մի քան պիտի անենք՝ Աստուծու ներումն ստանալու համար: Սակայն Աստված ասել է, թե մենք շնորհով ենք փրկվում ու ոչ թե գործով (Եփ. 2.8-9): Խոսելով Նոր Ուխտի մասին՝ Աստված խոստում տվեց Իսրայելի ժողովրդին՝ ասելով. «...Նրանց անիրավությունները պիտի ներեմ և նրանց մեղքերն այլևս չպիտի հիշեմ» (Երմ. 31.34): Մենք ունենք սիրող Աստված, որ ներում է ու այլևս չի հիշում մեր գործած մեղքերը:

Մենք դեռևս կարող ենք տխուր զգալ մեր անցյալի համար, սակայն պետք է վստահել նրա խոստումին ու հավատալ, որ Իր շնորհն ու ներումը կարելի է ստանալ Հիսուս Քրիստոսով: Այս լուրը մեզ պիտի մղի հավատքի միջոցով շնորհակալության և վստահության: Երբ Աստված ներում է, Նա նաև մոռանում է:

Աղոթք - Սիրելի՛ Տեր, շնորհակալ եմք քո շնորհի և տված փրկության ու ներումի համար Քրիստոսի միջոցով: Սա ձրի պարզ և, որ կախված չէ մեր արածներից:

Շնորհն ու ներումը չվաստակած պարզևներ են:

Երգելու պատճառ

Երգելը փոխում է մեր ուղեղը: Մի շարք ուսումնասիրություններ ցույց են տալիս, որ երբ երգում ենք, մեր մարմինները արտադրում են հորմոններ, որոնք ամոքում են նեղարտությունն ու ճնշումը: Մի այլ ուսումնասիրություն մատնանշում է, թե երբ մի խումբ մարդիկ միասին երգում են, նրանք սիրտը միաժամանակ է բարախում:

Պողոսի գրած խոսքերը քաջալերում են եկեղեցու անդամներին՝ իրար հետ խոսելու սաղմոսներով, օրհներգերով ու հոգևոր երգերով (Եփ. 5.19) կրկնում է «Փառաբանե՛ք» խոսքը հիսուսից ավելի անգամ: Բ Մնացորդաց 20-ի մեջ կարդում ենք Աստծո ժողովրդի պատմությունը, որ ցույց է տալիս նրա վատահույությունը երգելով ու օրհնություններով պատերազմ մղելիս: Երբ թշնամիները Հուդայի դեմ են ելնում, Հոսափատը կանչում է ամբողջ ժողովրդին ու առաջնորդում աղոթքի: Նրանք քաղցած ու ծարավ միայն աղոթում են՝ սասելով. «...Չգիտենք, թե ինչ անենք նրանց դեմ: Մեր աչքերը քեզ են ուղղված» (Հմ. 12): Հաջորդ օրը նրանք ելնում են թշնամու դեմ ոչ թե կատաղի մարտիկներով, այլ երգչախմբով: Նրանք հավատում են Աստծո տված խոստումին, թե պատերազմում պիտի հաղթեն առանց կռվի (Հմ. 17): Մինչ նրանք երգելով առաջ են գնում, թշնամիները իրար դեմ են դուրս գալիս, ու մինչև խրայելիցիները պատերազմի դաշտ կհասնեն, թշնամիներն իրար են կոտորում, ու պատերազմն ավարտվում է: Աստված Իր ժողովրդին ազատում է, որովհետև նրանք հավատքով են տողանցում դեպի անորոշ՝ Իր փառքը երգելով: Մենք պատերազմի զնանք թե ոչ, Աստծուն փառավորելը զորություն ունի մեր խորհուրդները, սրտերն ու կյանքերը փոխելու:

Կարդա՛ր
Բ Մնաց. 20.14-22

Սաղմո՛ս երգեցեք
մեր Աստծուն,
սաղմո՛ս երգեցեք
մեր քազավորին,
սաղմո՛ս երգեցեք:
Սաղմ. 46.7

Աղոթք - Ո՛վ Աստված, փառավորում ենք Քո հավիտենական սերն ու հավատարմությունը: Դու մեզ պաշտպանում ես ու առաջնորդում, որպեսզի մեր կյանքերը Քեզ վստահենք:

Աստծո հետ ներդաշնակ սիրտը Նրա փառքն է երգում:

Ուալդոյին գտնել

Ուալդոն մանկական ծաղրանկարների ժամանակակից լավագույն գրքի հերոսն է: Գրքի յուրաքանչյուր էջի վրա Ուալդոն թաքնված է լինում գծագրված խառը տեսարանների մեջ՝ հրավիրելով մանուկներին գտնել իրեն: Ծնողները սիրում են տեսնել մանուկների երջանկությունը, երբ նրանք գտնում են Ուալդոյին: Ուրախանում են նաև, երբ մանուկներն իրենց օգնությունն են խնդրում միասին փնտրելու:

Եկեղեցու երեցներից Ստեփաննոսի քարկոծումից կարճ ժամանակ անց (Գործք. Առ. 7) լայնատարած հալածանք է սկսվում քրիստոնյաների դեմ՝ պատճառ դառնալով շատերի Երուսաղեմից փախչելուն: Մի այլ եկեղեցու երեց՝ Փիլիպպոսը, Սամարիա փախչող քրիստոնյաներին է հետևում, ուր Բրիստոսին է քարոզում ու լավ ընդունելություն գտնում (8.6): Սուրբ Հոգին հատուկ առաքելությունք Փիլիպպոսին անապատային ամայի ճանապարհն է առաջնորդում: Այս առաջարկը տարօրինակ է թվում՝ հաշվի առնելով, որ քարոզչության պտուղը Սամարիայում է լինում: Պատկերացրեք Փիլիպպոսի ուրախությունը, երբ նա հանդիպում ու օգնում է եթովպիացի ներքինուն՝ գտնելու Հիսուսին Եսայի մարգարեի գրքի էջերում (Հմ. 26-40):

Մեզ էլ է տրվում առիթը ուրիշներին օգնելու, որ «Հիսուսին տեսնեն» Աստծո խոսքի մեջ: Ծնողի նման, որ տեսնում է մանկան աչքերի մեջ ուրախություն, ու նաև Փիլիպպոսի նման, որ օգնում է եթովպիացիներին գտնելու Հիսուսին, կարող է բերկրանք լինել մեզ համար՝ տեսնելու նույն հրճվանքը մեր շուրջը եղողների մեջ:

Աղոթք - Հայր, շնորհակալ եմք, որ մեզ Քեզ մոտեցրիր Սուրբ Հոգու մղումով: Մեր աչքերն ու սրտերը բաց, որպեսզի օգնենք նրանց, ովքեր դեռևս Քեզ չեն ճանաչում:

Մեծագույն գործը, որ մի քրիստոնյա կարող է անել, քարեկամ գտնելն ու Նրան Քրիստոսին ներկայացնելն է:

Կարդա՛ր
Գործք Առ. 8 .26-40

Եվ ներքինին Փիլիպպոսին պատասխանեց. «Խնդրում եմ քեզ, մարգարեն այս բանն ո՞ւմ մասին է ասում, ի՞նչ մասին, թե՞ մի ուրիշի մասին»:

Գործք Առ. 8.34

Սրտի կեցվածքը

Երբ ամուսինս եկեղեցում փառաբանության ժամանակ երգե-
հոն է նվագում, նկատել եմ, որ երբեմն աչքերը փակում է:
Նա ասում է, որ աչքերը փակելն օգնում է իրեն կենտրոնանալ՝
խափանելով ամեն խանգարող բան, որ կարողանա լավ նվագել:
Նա ասում է՝ միայն ինքը, իր երգեհոնն ու երաժշտությունը՝
Աստծուն պաշտելու համար: Ոմանք
հարց են տալիս, թե արդյոք մեր աչքերը պի-
տի փակե՞նք աղոթքի ժամանակ: Մենք կա-
րող ենք ցանկացած տեղ ու ցանկացած ժա-
մանակ աղոթել, հետևաբար ամեն պահ մեր
աչքերը փակելը դժվար կլինի, ինչպես երբ
քայլում ենք, գործ անում կամ մեքենա վա-
րում: Հատուկ օրերնք չկա կեցվածքի համար,
երբ Աստծո հետ ենք խոսում: Երբ Սողոմոն
թագավորը աղոթեց իր կառուցած տաճարի
նավակատիքի ժամանակ, ծուռնկի եկավ և «ձեռքերը դեպի երկինք
մեկնեց» (Բ Մնաց. 6.13): Ծնկի գալ (Նփ. 3.14), ոտքի կանգնել (Ղուկ.
18.10-13) և նույնիսկ բերանքսիվայր ընկնել (Մատթ. 26.39). այս ամե-
նը հիշված են Աստվածաշնչում՝ որպես աղոթքի դիրք:

Ծնկի գանք կամ ոտքի մնանք Աստծո առջև, մեր ձեռքերը
երկինք բարձրացնենք կամ աչքերը փակենք, որպեսզի ավելի
կենտրոնանանք Աստծու վրա, մեր մարմնի դիրքը չէ կարևորը,
այլ մեր սրտի կեցվածքը: Մեր ամեն արած բան սրտից է բխում,
քանի որ «նրանից է բխում կյանքի աղբյուրը» (Առ. 4.23): Երբ
աղոթում ենք, թող մեր սրտերը միշտ խոնարհված լինեն երկր-
պագուլթյամբ, փառաբանությամբ և շնորհակալությամբ սիրող
Աստծո առջև, որովհետև գիտենք, որ Նրա աչքերը բաց են
մարդկանց աղոթքների առջև (Բ Մնաց. 6.40):

Աղոթք - Տե՛ր, ուղղիր ինձ միշտ Քեզ վրա կենտրոնանալու
և սովորեցրու ինձ հավատարմությամբ Քեզ հետևել և սիրել:

Բարձրագույն ձևը աղոթքի գալիս է մեր սրտի խորքից:

Կարդա՛

Բ Մնաց. 6 7-9, 12-15

Սողոմոնը... բոլոր
ժողովականների
առաջ ծնրադրեց և
իր ձեռքերը դեպի
երկինք մեկնելով՝
ասաց (աղոթեց):

Բ Մնաց. 6.13-14

Անհմաստ բան չկա

Երբորդ տարին է, որ պայքարում եմ վհատություն ու ընկճախտի դեմ սահմանափակ շարժունակության և տևական ցավի պատճառով: Այս վիճակում քաջություն ունեցա սիրտս բանալու մի բարեկամի՝ ասելով. «Մարմինս մաշվում է, ու զգում եմ, որ ոչինչ չունեմ Աստծուն կամ որևէ մեկին տալու»:

Բարեկամուհիս ձեռքս սեղմելով՝ ասաց. «Կարող ես ասել, որ տարբերություն չկա՞, եթե քեզ ժպիտով ողջունեմ կամ լսեմ: Կարող ես ասել, որ անարժեք ու անհմաստ է, որ քեզ համար աղոթեմ կամ ազնիվ խոսք ասեմ»:

Պատասխանեցի. «Անշուշտ ո՛չ»:

Բարեկամուհիս խոժոռված ասաց. «Ուրեմն ինչո՞ւ ես այդ ստերն ասում դու քեզ: Նույն բանն անում ես ինձ և ուրիշներին»: Այդ պահին շնորհակալություն հայտնեցի Աստծուն՝ ինձ հիշեցնելու համար, թե չկա բան, որ անում ենք Իր համար, որը անարժեք է և անհմաստ:

Ա Կորնթացիներ 15-րդ գլխում Պողոս առաքյալը մեզ վրատահեցնում է, թե մեր մարմինները տկար են թվում, սակայն «հարություն են առնում գորությունք» (Հմ. 43): Որովհետև Աստված խոստացավ մեզ հարություն տալ Քրիստոսով, մենք կարող ենք վստահել Նրան, որ օգտագործի ամեն ընծա, ամեն փոքր ջանք, որ թափում ենք Իր գործի մեջ (Հմ. 58):

Նույնիսկ երբ մենք ֆիզիկապես սահմանափակված ենք, մի ժպիտ, մի քաջալերական խոսք, աղոթք կամ հավատքի արտահայտություն մեր փորձություն ժամանակ կարող է միջոց լինել ծառայելու Քրիստոսի մարմնին: Երբ Տիրոջն ենք ծառայում, ոչ մի գործ կամ սիրո դրսևորում անարգ չէ:

Աղոթք - Տեր, շնորհակալ եմք, որ արժևորում ես մեզ ու գործածում ուրիշների նորոգության համար:

Արա այն, ինչ կարող ես անել քո ունեցածով,
ու արդյունքը թող Աստծուն:

Կարդա՛ր
Ա Կորնթ. 15.42-58

...ինացե՛ք, որ Տիրոջով ձեր աշխատանքը զուր չէ:
Ա Կորնթ. 15.58

Նկատի ունեցիր ամպերը

Տարիներ առաջ երեխաներս և ես, մեջքներիս վրա պառկած, դիտում էինք սահող ամպերը: Երեխաներից մեկն ասաց. «Հա՛յրիկ, ինչո՞ւ են ամպերը ծփում»: «Լավ, տղա՛ս», - սկսեցի՝ նպատակ ունենալով ցույց տալ լայն իմացությունս: Սակայն շտապով լռեցի և ընդունելով, որ չունեի ճիշտ պատասխանը, ասացի. «Չգիտեմ, բայց պիտի որոնեմ ու ասեմ քեզ»:

Փնտրտուքի արդյունքում գտա, որ երբ ձգողության պատճառով խտացած խոնավությունը ցած է իջնում, հանդիպում է գետնից բարձրացող բարեխառն տաք օդին: Ապա խոնավությունը փոխվում է շոգիի ու նորից բարձրանում՝ վերածվելով ամպի: Սա բնության երևույթի սովորական բացատրությունն է:

**Կարդա՛ր
Յոթ 37.1-16**
Գիտե ամպերի էությունը:
Յոթ 37.16

Սակայն բնական բացատրությունները վերջնական պատասխաններ չեն: Ամպերը ծփում են, որովհետև Աստված Իր իմաստությունք բնության օրենքները դրել է այնպես, որ նրանք ցույց տան «ամպերի էությունը» (Հոթ 37.16): Հետևաբար ամպերը կարելի է համարել խորհրդանիշ, բացահայտ ու տեսանելի նշան Աստծո բարությունն ու շնորհի ստեղծման մեջ:

Հետևաբար, երբ մի օր մտածես, թե ինչ պատկերներ կարող ես երևակայել ամպերի մասին, հիշիր այս խոսքը. Նա, որ ամեն բան գեղեցիկ ստեղծեց, ամպերը տարուբերում է օդի մեջ: Նա այդպես է անում, որպեսզի մեզ հրավիրի պաշտամունքի ու գովաբանության: Երկինքը ու նույնիսկ ամպակույտի դասավորությունը հաստատում են Նրա փառքը:

Աղոթք - Սքանչելի Արարիչ, հիացունով եմք դիտում քո ստեղծած աշխարհը: Ուստի արժանի ես ամեն տեսակ փառաբանության:

Ստեղծագործությունը լեցուն է նշաններով, որոնք ցույց են տալիս Արարչին:

Շնորհի համաչափությունը

Ինչպես տարեկան ու վաթսուներորդ տարվա ամուսնական կյանք ունեցող մի բարեկամ ու կինը իրենց ընտանիքի պատմությունը գրեցին իրենց զավակների, թոռների ու զավիք սերունդների համար: Վերջին գլուխը, որ խորագրված է «Նամակ հորից ու մորից», պարունակում է նրանց սովորած կյանքի կարևոր դասերը: Դրանցից մեկը պատճառ դարձավ, որ մի պահ կանգ առնեմ ու կյանքիս ցուցակը պատրաստեմ: «Եթե տեսնում ես, որ Քրիստոնեությունը քեզ սպառում է՝ խլելով ուժերդ, դա նշան է, որ դու կրոնն է, որ ապրում ես՝ Հիսուս Քրիստոսի հետ հաճելի հարաբերություն ունենալու փոխարեն: Եթե Քրիստոսի հետ քայլես, չես հոգնի: Հիսուսի հետ քայլելը քեզ պիտի խրախուսի, ուժդ պիտի նորոգի ու կորովդ ավելացնի»: Յուզին Պետերսոնի բացատրությունը այս հատվածի մեջ Հիսուսի հրավերի առթիվ սկսվում է այսպես. «Հոգնա՞ծ ես: Սպառվա՞ծ ես: Զգվե՞լ ես կրոնից: Ինձ հետ քայլիր ու գործիր: Սովորիր չկեղծված շնորհի համաչափությունը»:

Երբ մտածեմ, թե Աստծուն ծառայելը ինձ է թողնված, կսկսեմ իր համար գործել՝ փոխանակ իր հետ քայլելու: Հիմնական մի տարբերություն կա այստեղ: Եթե Քրիստոսի հետ չեմ քայլում, հոգիս չորանում է ու դառնում դյուրաբեկ: Մարդիկ մեզ համար հոգս են լինում, ու ոչ մի մարմնավոր էակ ստեղծված չէ Աստծո պատկերով: Ոչ մի բան չի թվում ճշմարիտ: Երբ զգում ենք, թե կրոնն է, որ կիրառում ենք, փոխանակ Հիսուսի հետ հարաբերություն ունենալու, ժամանակն է, որ մեր բեռները ցած դնենք ու իր հետ քայլենք իր «չկեղծված շնորհի համաչափությունով»:

Աղոթք - Տե՛ր Զիսուս, Քեզ եմ գալիս այսօր փոխարինելու իմ մոլեգին գործս Քո շնորհի ճանապարհին:

Զիսուսն ուզում է, որ իր հետ քայլենք:

Կարդա՛ր
Մատթ. 11. 25-30

Մի լուծը ձեզ վրա՛ վերցրեք ու ինձանից՝ սովորեցեք, որովհետև ես հեզ եմ ու սրտով խոնարհ, և ձեր անձերի համար հանգստություն կգտնեք:
Մատթ. 11. 29

Խաղաղության կապը

Էլեկտրոնային նամակով բարեկամուհուհու հակադարձեցի մի հարցի առթիվ: Նա չպատասխանեց: Արդյոք սահմանն անցե՞լ էի: Չուզեցի վիճակն ավելի վատթարացնել՝ շարունակելով նրան նեղել: Սակայն միաժամանակ չէի ուզում հարցը օդում թողնել իր արտասահման գնալուց առաջ: Հաջորդող մի քանի օրերի ընթացքում հիշում էի նրան և աղոթում նրա համար՝ չիմանալով ինչպես լուծել հարցը: Մի առավոտ քայլելու գնացի հանրային այգի և հանդիպեցի նրան: Երբ ինձ տեսավ, դեմքին վրա հստակ էր ցավը: Ինքս ինձ ասացի. «Շնորհակալ եմ, Տե՛ր, որ կարող եմ նրա հետ խոսել»: Ու շունչ քաշելով՝ ժպիտով մոտեցա նրան: Միասին քայլեցինք, զրուցեցինք ու լուծեցինք տարակարծությունը:

Կարդա՛ Եփեսացիներ 4.1-6

Ձանալով Ռոզու միաբանությունը խաղաղության կապով պահել: Եփես. 4.3

Երբեմն ցավ ու իրար հետ խոսելու դժկամություն է լինում մեր հարաբերություններում: Ու նրանց լուծումը մեր հնարավորությունների սահմանից դուրս է թվում: Սակայն ինչպես Պողոս առաքյալն է ասում Եփեսոսի եկեղեցուն գրած իր նամակում, որ մենք հրավիրված ենք խաղաղության ու միաբանության համար գործել Աստծո Սուրբ Հոգու միջոցով՝ մեզ վրա վերցնելով ազնվության, խոնարհության ու համբերության զգեստները, մինչ ցանկանում ենք մեր հարաբերություններում Աստծո բուժումը: Տերը փափագում է, որ մենք միաբանենք իր Հոգու միջոցով: Նա կարող է իր ժողովրդին կողք կողքի բերել, նույնիսկ երբ անակնկալ կերպով գնում ենք հանրային այգում քայլելու:

Աղոթք - Ռոզի Աստված, աղոթում եմք, օգնիր մեզ, երբ ուրիշների հետ դժվարություն ունենանք: Խաղաղություն ու միաբանություն ենք ուզում ունենալ Քո շնորհով:

Աստված միաբանություն է ցանկանում հավատացյալների միջև:

Վերակենդանացալ

Որպես երիտասարդ, երբ հայրս մի խումբ բարեկամների հետ քաղաքից դուրս մարզախաղի էր գնում, նրանց մեքենայի անիվները սահեցին թաց ճանապարհի վրա: Նրանք շատ վատ պատահար ունեցան: Նրա բարեկամներից մեկը անդամալույծ դարձավ, մեկ ուրիշը մահացավ: Հայրս էլ, մահացած նկատվելով, տարվեց դիակներձարան: Երբ նրա վշտահար ու ցնցված ծնողները եկան ինքնությունը հաստատելու, նա վերագարթնեց մահաքոռնից, ու սուզն ուրախության փոխվեց:

Եփեսացիների 2-րդ գլխում Պողոս առաքյալը մեզ հիշեցնում է, թե առանց Քրիստոսի մենք «մեռած ենք հանցանքների ու մեղքերի մեջ» (Հմ. 1): Բայց Աստված, որ հարուստ է ողորմությամբ, իր առատ սիրո համար, որով մեզ սիրեց, երբ մեռած էինք հանցանքներում, մեզ Քրիստոսի հետ կենդանացրեց» (Հմ. 4-5): Քրիստոսի միջոցով մահից փոխվեցինք կյանքի:

Հետևաբար, մենք մեր կյանքերը պարտական ենք մեր Հորը, որ երկնքում է: Իր մեծ սիրով հնարավոր դարձրեց մեզ համար, որ մեռած էինք մեղքի մեջ, կյանք ու նպատակ ունենալ իր Որդու միջոցով:

Աղոթք - Հայր, շնորհակալ եմք այն սիրո համար, որ հաղթում է մեղքին, կյանքի համար, որ մահին է հաղթում, և շնորհի համար, որ գրավել է սիրտս: Թող մեր կյանքը Քո փառաբանության անուշ բույրը լինի:

Կարդա՛ր Եփեսացիներ 2. 1-10

Երբ մեռած էինք հանցանքներում, մեզ Քրիստոսի հետ կենդանացրեց:
Եփես. 2.5

**Մենք ունենք պարտք, որ չէինք կարող վճարել, սակայն
Հիսուսը վճարեց այն պարտքը, որ իրենը չէր:**

Միասին ժամանակ անցկացնել

Ընտանիքի անդամներից մեկի պատկառելիությունից հետո երկու ժամ տևող վերադարձի ճանապարհին մայրս երրորդ անգամ հարցրեց, թե ի՞նչ նորություն կա աշխատանքիս մեջ: Մի շարք մանրամասներ նորից վերհիշեցի, կարծես առաջին անգամ էի պատմում, մինչ մտածում էի, թե ինչ կարելի է անել, որ ասածներս հիշի: Մայրս հիվանդություն ուներ, որը հետզհետե վատացնում է հիշողությունը, ազդում վարքի վրա, նպաստում խոսքի կարողությունների վերացմանը և շատ այլ բաներ: Ցավում եմ մորս հիվանդության համար, սակայն շնորհակալ եմ, որ նա դեռևս այստեղ է, ու միասին կարող ենք ժամանակ անցկացնել և նույնիսկ զրուցել: Ինձ ուրախացնողն այն է, որ երբ գնում եմ նրան տեսնելու,

Կարդա՛ր
Սաղմոս 146.1-11
 Տերն իրենից երկյուղ կրողներին է հավանում, և նրանց, որ իրենց հույսը դրել են իր ողորմության վրա: Սաղմ. 146.11

ուրախությունս է լցվում և բացականչում. «Ալիսըն, ի՞նչ հաճելի անակնկալ»: Մենք հաճույք ենք ստանում իրար հետ անցկացրած ժամանակից ու նույնիսկ լռության մեջ, երբ մոռանում է բառերը, շարունակում ենք հաղորդակցվել: Հավանաբար սա Աստծո հետ մեր ունեցած հարաբերության մի փոքր պատկեր է: Աստվածաշունչն ասում է. «Տերն իրենից երկյուղ կրողներին է հավանում, և նրանց, որ իրենց հույսը դրել են Իր ողորմության վրա» (Սաղմ. 146.11): Աստված Իր զավակներն է համարում բոլոր նրանց, ովքեր Հիսուսին են հավատում (Հովհ. 1.12): Հակառակ այն բանի, որ մենք նորից ու նորից նույն խնդրանքներն ենք անում կամ բառեր չենք գտնում ասելու, Նա համբերությամբ է վարվում մեզ հետ, որովհետև սիրով հաղորդակցվելու կապ ունի մեզ հետ:

Աղոթք - Սիրելի՛ Տեր, մեզ ուրախացնում ես, երբ ցանկանում ես հարաբերություն սնունդով մեզ հետ: Շնորհակալ ենք Քեզից սովորելու ու աղոթքով Քեզ հետ հաղորդակցվելու առիթների համար:

Աստված ուրախացնում է մեզ լսելով:

Կատարյալ Հայր

Մի օր հայրս ինձ ասաց. «Մինչ դու մեծանում էիր, ես հաճախ էի այլ տեղ լինում»:

Դա չեմ հիշում: Իր գործն ավարտելուց հետո նա երեկոները գնում էր եկեղեցու երգչախումբը ղեկավարելու: Առիթների դեպքում նա մեկ կամ երկու շաբաթով ճամփորդում էր «տղամարդկանց քառյակով»: Սակայն կյանքիս բոլոր կարևոր պահերին նա կողքիս էր:

Օրինակ, երբ ութ տարեկան էի, ունեցա մի փոքր դեր դպրոցի երեկոյան ներկայացման մեջ: Բոլոր մայրերը եկան և մեկ հայր՝ իմ հայրը: Մի շաբթ փոքր բաներում նա միշտ մեզ հասկացրել է, որ իր համար կարևոր ենք, ու սիրում է մեզ: Ու տեսնելով, թե նա ինչպես էր մորս խնամում կյանքի վերջին մի քանի տարվա ընթացքում, ես սովորեցի, թե ինչ է անանձնական սերը: Հայրս կատարյալ է, սակայն միշտ էլ ծնող է եղել, հայր, որ տալիս է մի լավ պատկեր իմ Երկնավոր Հորից: Իրականում այդ է, որ ամեն Քրիստոնյա պետք է անի:

Ժամանակ առ ժամանակ երկրային հայրերը հուսախաբ են անում և ցավեցնում իրենց զավակներին: Սակայն մեր Հայրը, որ երկնքում է, «գլխասիրտ, ողորմած է, համբերատար ու ողորմաշատ» (Սաղմ. 102.8): Երբ մի հայր, որ սիրում է Տիրոջը, չտկում է, հանգստացնում, ուղղություն է տալիս և հոգում իր զավակների կարիքները ու օրինակ դառնում նրանց, ներկայացնում է մեր կատարյալ Երկնավոր Հորը:

Աղոթք - Երկնավոր Հայր, շնորհակալ եմ Քո հավատարմության համար, որին կարող եմ վստահել: Խնդրում եմ, օգնիր ինձ ապրելու այնպիսի կյանքով, որ թողնի հավատարմության ու սիրո կտակ:

Քրիստոսի համար ապրված կյանքը լավագույն ժառանգությունն է, որ մենք կարող ենք թողնել մեր զավակներին:

Կարդա՛ր Առակներ 20.3-7

Ով անարատ է քայլում արդարության ճամփով, նա իրենից հետո երանության արժանի որդիներ պիտի թողնի: Առ. 20.7

Աստծուց մղված

Մի քանի ամիս առաջ էլեկտրոնային նամակով հրավեր ստացա միանալու «մղված մարդկանց» մի խմբի: Որոշեցի «մղված» բառի իմաստը որոնել ու գտա, որ մղված անձը նա է, ով բարձր կերպով դրդված է հաջողություն ունենալու ու շատ է աշխատում նպատակին հասնելու:

Լա՞վ է մղված լինել: Մի քննություն կա, որ երբեք չի ձախողվում. «Ամեն բան Աստծու փառքի համար արեք» (Ա Կորնթ. 10.31): Շատ անգամ ենք բաներ անում մեր փառքի համար: Ջրհեղեղից հետո՝ Նոյի օրերին, մի խումբ մարդիկ որոշեցին աշտարակ կառուցել, որպեսզի «համբավ ձեռք բերեն» (Ծննդ. 11.4):

Նրանք ուզեցին հռչակավոր լինել ու չցրվել աշխարհով մեկ: Նրանք դա Աստծո փառքի համար չէին անում, հակառակ այն բանի, որ մոլորությունից էին մղված:

Որպես հակապատկեր, երբ Սողոմոն թագավորը ուխտի տապանակը ու նորակառույց տաճարը նվիրեց, ասաց. «Տեր Աստծու անունով տուն շինեցի» (Թագ. 8.20): Հետո աղոթեց. «...Մեր սրտերը նրանից չխտտորվեն, ընթանանք նրա նշած ճանապարհով, պահենք մեր հայրերին տված նրա բոլոր պատվիրանները, նրա հրամանները, նրա կարգադրությունները» (Հմ. 58):

Երբ մեր մեծագույն ցանկությունն է Աստծուն փառք բերել, մենք մղված մարդիկ կլինենք, որոնք սիրում ու ծառայում են Հոգու զորությունը: Թող մեր աղոթքը արձագանքի Սողոմոնի աղոթքին: «Մեր սրտերը հավատարիմ թող լինեն մեր Տեր Աստծու նկատմամբ, որպեսզի մենք մաքուր սրտով ընթանանք ըստ նրա հրամանների և պահենք նրա պատվիրանները...» (Հմ. 61):

Աղոթք - Հայր, տուր ինձ ցանկություն Քեզ հնազանդվելու ու անելու ամեն բան Քո փառքի համար:

Ամեն բան Աստծո փառքի համար արա:

Կարդա՛
Գ Թագ. 8.54-63

...որ մեր սրտերը
նրանից չխտտոր-
վեն, ընթանանք
նրա նշած ճանա-
պարհով...

Գ Թագ. 8.58

Ժպտալու պատճառ

Աշխատավայրում քաջալերական խոսքերը կարևոր են: Աշխատողների՝ միմյանց հետ խոսելու ձևը ազդեցություն ունի հաճախորդների գոհ լինելու, ընկերության պատկերի ու գործընկերների գնահատականի վրա: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ամենից հեղինակավոր աշխատանքային խմբերը վեց անգամ ավելի են վստահում իրար, քան անվստահություն, անհամաձայնություն կամ հեզմանք արտահայտում: Խմբերը, որոնք ավելի քիչ արդյունք ունեն, յուրաքանչյուր զբաղված խոսքի դիմաց երեք ժխտական մոտեցումի են արժանանում:

Պողոսը փորձառություններ սովորեց խոսքի կարևորությունը, որ ձևավորում է հարաբերություններն ու արդյունքները: Դամասկոսի ճանապարհի վրա Քրիստոսին հանդիպելուց առաջ նրա խոսքերը և արարքները ահաբեկեցին Հիսուսի հետևորդներին: Սակայն այն ժամանակ, երբ զրեց իր նամակը Թեսաղոնիկեի եկեղեցուն, փոխվեց ու դարձավ մեծ քաջալերող Աստծո արած գործի: Հիմա իր անձի օրինակով նա թախանձեց իր ընթերցողներին իրար հորդորել: Մինչ ուշադիր էր փաղաքշանքի հանդեպ, ցույց տվեց, թե ինչպես կարելի է հորդորել ուրիշներին և Քրիստոսի Հոգին ցոլացնել: Պողոսը հիշեցնում է իր ընթերցողներին, թե քաջալերանքը որտեղից է գալիս: Նա տեսավ, որ մեր անձերը Աստծուն վստահելը, որ այնքան սիրեց ու մեռավ մեզ համար, պատճառ է հանգստացնելու, ներելու, ներշնչելու և սիրով քաջալերելու իրար (Ա Թես. 5.10-11): Պողոսը մեզ ցույց է տալիս, որ իրար քաջալերելը միջոց է իրար օգնելու, որպեսզի Աստծո համբերության ու բարության համը առնենք:

Աղոթք - Երկնքում բնակվող Հայր, խնդրում ենք օգնիր մեզ տալ ուրիշներին Քո ողորմության ու բարության համը, որ հավիտյան մեզ ես տալիս:

Ի՞նչն է ավելի լավ, քան աշխատել դուրս բերել լավագույնը մեր մեջ:

**Կարդա՛ր
Ա Թես. 5.9-28**

Դրա համար իրար քաջալերեցե՛ք և իրար շինություն տվե՛ք, ինչպես որ անում էլ եք:
Ա Թես. 5.11

Մխիթարության գավաթը կիսել

Մի բարեկամ իր շինած հողե անոթներից մի քանիսը տուփի մեջ դրած փոստով ինձ ուղարկեց: Երբ ծանրոցը հասավ, տուփը բացելով տեսա, որ փոխադրելու ընթացքում գավաթներից մեկը փշրվել էր մի քանի կտորի: Ամուսինս կտորները միացնելով ամրացրեց: Այդ զեղեցկորեն այլանդակված գավաթը դրեցի դարակի վրա: Այդ հողե գավաթի նման ես էլ սպիներ ունեմ, որոնք փաստում են, թե դեռևս կարող եմ ամուր մնալ դժվար ժամանակներից հետո, որոնց միջով Աստված ինձ ապահով անցկացնում է: Այդ գավաթի տված մխիթարությունն ինձ հիշեցնում է, թե Տերը ինչպես է գործել իմ կյանքի մեջ, ինչը կարող է ուրիշներին էլ օգնել իրենց տառապանքի ժամերին:

Պողոսը Աստծուն է փառափորում, որովհետև Նա «գլխությունների Հայրը և ամեն մխիթարության Աստված» է (Բ Կորնթ. 1.3): Տերը օգտագործում է մեր ցավերն ու տառապանքները՝ մեզ ավելի իրեն նմանեցնելու համար: Իր տված մխիթարությունը մեր նեղությունների մեջ զինում է մեզ ուրիշներին քաջալերելու, մինչ կիսում ենք նրանց հետ Տիրոջ արածները մեր նեղության մեջ (Հմ. 4): Մինչ մտածում ենք Քրիստոսի կրած տառապանքների մասին, կարող ենք ներշնչումն ունենալ հարատևելու մեր ցավերի մեջ՝ վստահ լինելով, որ Աստված գործածում է մեր փորձառությունները՝ զորացնելու ու տանելու մեզ և ուրիշներին դեպի համբերատար տոկունություն (Հմ. 5-7):

Աղոթք - Տե՛ր, շնորհակալ ենք, որ մեզ գործածում ես մխիթարություն, քաջալերանք և հույս տալու նրանց, ովքեր տառապում են: Փառք ենք տալիս Բեզ Քո բոլոր արածներով մեզ մխիթարելու համար:

Աստված մխիթարում է ուրիշներին, մինչ մենք կիսվում ենք, թե ինչպես է Նա մխիթարել մեզ ցավի ժամանակ:

Կարդա՛ր Բ Կորնթ. 1.3-11

Եվ ձեզ վրա մեր հույսը հաստատուն է, որովհետև գիտենք, ինչպես որ չարչարանքներին եք մասնակից, այնպես էլ մխիթարությանը:

Բ Կորնթ. 1.7

Լռութիւն

Երբ օգնութիւն բաժանող բեռնատարները անցան անձրևից վնաս-
ված ճանապարհների վրա գտնվող մի աղքատ գյուղի հին հյու-
ղակների առջևից, բոբիկ ոտքերով ապշած մանուկները նայեցին, ու
վախեցած հավերը ցիրուցան եղան: Հանկարծ պարսպապատ մի դղ-
յակ երևաց: Այդ սքանչելի կառույցը գյուղապետի բնակարանն էր, ու
նա այնտեղ էլ բնակարան էր ապրում: Իր ժողովուրդը կա-
րիքի մեջ էր, մինչ ինքը շուկային գրանցում
էր հեռու մի քաղաքում: Նման անարդա-
բութիւնը գայրացնում է մեզ, ինչպես գայ-
րացրեց Աստծո մարգարեին: Երբ Ամբա-
կում մարգարեն տեսավ կեղեքող զրկանք,
հարց տվեց. «Մինչև ե՞րբ, Տե՛ր, աղոթեմ,
բայց դու չլսես» (Ամբ. 1:2): Սակայն Աստված նկատեց ու ասաց.
«Վա՛յ նրան, ով յուրացնում է այն, ինչ իրենը չէ: Վա՛յ նրան, ով
իր տան համար ազահութիւն կանի» (2:6,9): Դատաստանը մոտ էր:

Մենք ընդունում ենք, երբ Աստված դատում է ուրիշին, սակայն
առանցքային մի կետ կա Ամբակումի մարգարեութեան մեջ, որ մեզ
մի պահ կանգնեցնում է. «Սակայն Տերը իր սուրբ տաճարի մեջ է,
և ամբողջ երկիրը թող վախենա Նրանից» (2:20): Ամբողջ երկիրը:
Կեղեքվածն ու կեղեքողը: Երբեմն Աստծո խաբուսիկ լռութեան
հարմար պատասխանը լռութիւնն է: Ինչո՞ւ լռութիւն: Որովհետև
մենք հեշտութեամբ անտեսում ենք մեր հոգևոր չքավորութիւնը:
Լռութիւնը թույլ է տալիս անդրադառնալ մեր մեղավոր լինելու
գիտակցութեանը Աստծո սուրբ ներկայութեան մեջ: Զգիտենք Աստ-
ծո բոլոր ծրագրերը, սակայն գիտենք, որ Նա բարի է: Ոչ մի բան
Նրա հսկողութիւնից ու ժամանակից դուրս չի մնում:

Աղոթք - Տե՛ր, երբ նեղութիւն գա, կարող եմք աղոթել Ամբա-
կումի նման. «Տե՛ր, քո լուրը լսեցի և վախեցա: Երբ տարիները մո-
տենան կիայտնվես, երբ ժամանակը հասնի՝ կերևաս» (Ամբ. 3:2):

Արդարը գիտե տնանկներին իրավունքով դատել, բայց ամ-
բարիշտը խելամուտ չի լինում այն գիտենալու մեջ: **Առ. 29.7**

Կարդա՛ր
Ամբակում 1.1-4, 2.20

Մինչև ե՞րբ, Տե՛ր,
աղոթեմ, բայց դու
չլսես:

Ամբակում 1.2

Համերգին նվագել

Մեր թոռնուհու դպրոցի նվագախմբի Համերգին, երբ այդ 11-12 տարեկան երեխաները միասին նվագում էին, շատ էի սպավորվել: Եթե նրանցից յուրաքանչյուրը ցանկանար մենակատար լինել, չպիտի կարողանար անել այն, ինչ արեցին միասին: Բոլոր նվագարանները նվագեցին իրենց բաժինները, և արդյունքը շատ գեղեցիկ երաժշտություն եղավ:

Պողոսը Հռոմում եղող Հիսուսի Հետևորդներին գրեց. «...Շատերս մեկ մարմին ենք Քրիստոսի մեջ, բայց ամեն մեկս միմյանց անդամ ենք: Միայն թե գանազան պարզեկներ ունենք ըստ այն շնորհի, որ մեզ տրված է» (Հռոմ. 12.5-6): Պողոսի հիշած շնորհների շարքում են մարգարեությունը, սպասարկությունը, սովորեցնելը, հորդորելը, բաշխելը, վերակացությունը և ողորմությունը (հմ. 7-8): Յուրաքանչյուր շնորհ պետք է գործադրվի բոլորի օգտի համար (Ա Կորնթ. 12.7):

Բացատրական մի սահմանում «Համերգ» բառի համար ասում է՝ «ծրագրի կամ ուրվագծի համաձայնություն, միացյալ գործընթաց, ներդաշնակություն»: Սա Աստծո ծրագիրն է մեզ՝ Իր զավակների համար Հիսուս Քրիստոսի վրա եղած հավատքով. «Եղբայրասիրության մեջ իրար նկատմամբ գլխասիրտ եղեք, պատիվ տալու մեջ իրարից առաջ անցեք» (Հռոմ. 12.10): Նպատակը համագործակցությունն է, ոչ թե մրցակցությունը: Որևէ կերպ մենք ամեն օր «բեմի վրա ենք» մեզ նայող ու լսող աշխարհի առջև: Մենակատարներ չկան Աստծո նվագախմբում, և յուրաքանչյուր գործիք էական է:

Աղոթք - Տեր, Դու ես ղեկավարը մեր կյանքի: Ուզում ենք այսօր Քո սիրո ու շնորհի երգը նվագել համերգի ընթացքում՝ Քո զավակների հետ:

Մենակատարներ չկան Աստծո համերգում:

Կարդա՛ր Հոռմեացիներ 12.3-8

Այնպես էլ շատերս մեկ մարմին ենք Քրիստոսի մեջ, բայց ամեն մեկս միմյանց անդամ ենք: Միայն թե գանազան պարզեկներ ունենք ըստ այն շնորհի, որ մեզ տրված է: Հռոմ. 12.5-6

Այստեղ՝ ծառայելու

Մեր եկեղեցու համար ժամանակն էր նոր առաջնորդների խումբ կարգել առաքելության համար: Խորհրդանշելու համար նրանց դերը որպես ծառա-առաջնորդների՝ եկեղեցու ավագները մասնակցեցին հիշատակելի ոտնլվայի արարողության: Բոլոր առաջնորդները, ներառյալ եկեղեցու հովիվը, իրար ոտք լվացին ժողովրդի առջև:

Ինչ որ նրանք արեցին այդ օրը, արդեն օրինակ էր Տեր Հիսուսի կողմից, ինչպես արձանագրված է Հովհաննեսի 13-րդ գլխում: Այն դեպքի ժամանակ, որ պատահեց մեզ ծանոթ Վերջին Ընթրիքին, Հիսուսը «վեր կացավ... կոնքի մեջ ջուր լցրեց ու սկսեց աշակերտների ոտքերը լվանալ» (Հովհ. 13.4-5): Հետո, մինչ Հիսուսը բացատրում էր աշակերտներին, թե ինչու այդպես արեց, ասաց. «Ծառան իր տիրոջից մեծ չէ, ոչ էլ ուղարկվածն է իր ուղարկողից մեծ» (Հմ. 16): Նա նաև ասաց. «...ես ձեր մեջ ծառայողի պես եմ» (Ղուկ. 22.27):

**Կարդա՛ր
Հովհաննես 13.3-17**

Դետո կոնքի մեջ ջուր լցրեց ու սկսեց աշակերտների ոտքերը լվանալ: Հովհ. 13.5

Եթե Տեր Հիսուսի արժանապատվությունից ցածր չէ նման խոնարհ մի գործ, ուրեմն մեզնից ոչ մեկի պատվից ցածր չէ ուրիշներին ծառայելը: Ի՛նչ հիանալի օրինակ տվեց Նա մեզ: Նա «չի եկել, որ իրեն ծառայեն, այլ ինքը ծառայի...» (Մարկ. 10.45): Նա մեզ ցույց տվեց, թե ինչ է նշանակում առաջնորդ ու ծառա լինել: Այս է Հիսուսը. Նա, ով ծառայում է:

Աղոթք - Սիրելի՛ Տեր, օգնիր ինձ, որ ուրիշներին ծառայեմ: Ուղղիր ինձ իմ անձնական շահերն ու ցանկությունները մի կողմ դնելով օգնություն ցույց տալ նրանց, ովքեր կարիք ունեն:

Ցանկացած կարիք փոքր չէ, երբ Քրիստոսի համար է:

Յուրացնել Աստծո խոսքը

Երբ մեր երեխան՝ Զավիերը, մանուկ էր, ընտանիքով Մոնդերի Մոցի Զկնարանը գնացինք: Երբ շենք մտանք, ցույց տվեցի մի մեծ քանդակ, որ կախված էր առաստաղից, ու ասացի. «Տե՛ս, սա-պատավոր կետածուկ»: Զավիերն աչքերը լայն բացեց ու ասաց. «Հսկա՛»: Ամուսինս ինձ նայելով՝ ասաց. «Որտեղի՞ց գիտի այդ բառը»: Ուսերս թափահարելով՝ ասացի. «Նա պիտի որ մեզնից լսած լինի»: Ու հիացա այն բանի համար, թե ինչպես էր երեխան յուրացրել այն բառամթերքը, որ մենք չէինք սովորեցրել նրան:

Բ Օրինաց 6-րդ գլխում Աստված քաջալերում է Իր ժողովրդին, որ ուշադիր լինեն՝ Իր Խոսքը սովորեցնելու երիտասարդ սերնդին, որպեսզի իմանան ու հնազանդվեն Իրեն: Երբ իսրայելցիները իրենց իմացածը Աստծո մասին ավելացնեին, իրենք ու իրենց զավակները պիտի աճեին Նրան պատվելով ու պիտի վայելեին զանազան պարգևներ, որոնք նրանց պիտի տրվեին Նրան մոտից ճանաչելու, ամբողջ սրտով Նրան սիրելու ու հնազանդությամբ Նրան հետևելու համար (Հմ 2-5): Երբ միտումնավոր մեր սրտերն ու մտքերը Աստծո խոսքով հագեցնենք (Հմ. 6), ավելի լավ պատրաստված կլինենք Աստծո սերն ու ճշմարտությունը բաժանելու մեր զավակների հետ մեր ամենօրյա գործունեություն մեջ (Հմ. 7): Օրինակելի կյանքով մենք կարող են գինե՛լ ու քաջալերե՛լ երիտասարդներին՝ ճանաչելու ու հարգելու Աստծո անփոփոխ ճշմարտություն հեղինակությունն ու պատշաճությունը (Հմ. 8-9):

Աղոթք - Տե՛ր, շնորհակալ եմ Քո խոսքի պարգևի համար: Մինչ մենք միտումնավոր մեր անձերը թաղում ենք Քո ճշմարտության մեջ, օգնիր մեզ, որ Քո սերն ու խոսքերը ազնվությամբ ու հարգանքով լցնենք ուրիշների կյանքի մեջ:

Կարդա՛ր
Բ Օրենք 6.1-9

Այս պատգամները, որ այսօր հաղորդում եմ քեզ, կպահես մտքիդ ու հոգուդ մեջ: Դրանք կհաղորդես քո որդիներին:
 Բ Օր. 6.6-7

Մեր ներս առած խոսքերը որոշում ենք մեր ասած խոսքերը, որոնցով ապրում ենք ու փոխանցում մեր շուրջ եղողներին:

Շատ բարի է

Մի շարք օրեր այնպես է թվում, թե մի նյութի շուրջ եմ տա-
րուբերվում: Վերջերս նման մի օր ունեցա: Մեր հովիվն իր
քարոզն սկսեց Ծննդոց առաջին գլխի մասին խոսելով ու բաց-
փող ծաղիկների գեղեցիկ ու հիանալի երկու բույսերից պատ-
կերներ ցույց տվեց: Հետո տանը համացանցում զանազան ծա-
ղիկների շարան տեսնվեց: Ու ապա, երբ
անտառում քայլում էի, տարբեր գար-
նանային ծաղիկներով շրջապատվեցի.
այսառատունկ, ձղկի և վայրի շուշան:

Երրորդ օրը Աստված ստեղծեց ծա-
ղիկները և ամեն տեսակ բանջարեղեն,
ինչպես նաև հողը, որպեսզի նրա մեջ
ածեն, ծլեն ու մեծանան: Այդ օրը Աստված

երկու անգամ հայտարարեց ու սասց. «Լավ է» (Ծննդ. 1:10,
12): Նույնպես վեցերորդ օրը դարձյալ Աստված երկու անգամ
կրկնեց «Լավ է» խոսքը (Հմ. 24, 31): Իրականում այդ օրը Նա
նաև ստեղծեց մարդուն ու իր գլուխգործոցն ամբողջացրեց.
Նա նայեց իր բոլոր արածներին ու «տեսավ, որ շատ լավ է»:

Արարչագործության պատմության մեջ մենք տեսնում ենք
Արարչագործ Աստծուն, որ ուրախանում ու հաճույք է ստա-
նում իր ստեղծագործությանը: Նա ստեղծեց աշխարհը սքան-
չելի գույներով ու հիանալի բազմազանությամբ: Ու լավագույ-
նը պահեց վերջին օրվան, երբ «մարդուն ստեղծեց իր պատկե-
րով» (Հմ. 27): Որպես իր պատկերը կրողներ՝ մենք օրհնված ու
ներշնչված ենք իր գեղեցիկ ու հիանալի ձեռագործով:

Աղոթք - Սիրելի՛ Արարչագործ Աստված, շնորհակալ եմ,
որ աշխարհը իր բոլոր գեղեցկություններով մեր ու Քո հա-
ճույքի համար ստեղծեցիր: Շնորհակալություն նաև մեզ Քո
պատկերով ստեղծելու համար, որպեսզի մենք էլ ներշնչվենք
ստեղծագործելու համար:

Կարդա՛ ծննդոց 1. 24-31

Աստված տեսավ,
որ այն ամենը, ինչ
ստեղծել էր, շատ
լավ է: Ծննդ. 1.31

Ամեն ստեղծված բան Աստծո կնիքն է կրում:

Յինգ մատների աղոթք

Աղոթքը Աստծո հետ խոսակցություն է, ոչ թե տարազ, բանաձև կամ դեղատոմս: Երբեմն մենք «միջոցի» կարիք ունենք մեր աղոթքի կյանքը նորոգելու: Որպես աղոթք՝ մենք կարող ենք Սաղմոսներ կամ այլ Սուրբ Գրային հատվածներ, ինչպես նաև Տերունական Աղոթքը արտասանել, մեզ ծանոթ Փառաբանություն, Շնորհակալություն, Խոստովանություն ու Աղերսի ձևը օգտագործել: Վերջերս հանդիպեցի «Հինգ մատների աղոթքին», որ կարելի է գործածել, երբ ուզենք աղոթել ուրիշների համար:

Կարդա՛ր
Հակոբոս 5.13-18

...և իրար համար
աղոթք արեք...:

Հակ. 5.16

Երբ փակում ես ձեռքդ, բխամատող ամենից մոտն է քեզ: Ուստի սկսիր աղոթել նրանց համար, ովքեր ամենից մոտն են քեզ, այսինքն՝ քո սիրելիների (Փիլիպ. 1.3-5):

Ցուցամատը ցույց տվող սլաքն է: Ուստի աղոթիր նրանց համար, ովքեր սովորեցնում են, այսինքն՝ Աստվածաշնչի ուսուցիչների, քարոզիչների ու նրանց, ովքեր մանուկներին են սովորեցնում (Ա Թես. 5.25): Հաջորդ մատը ամենից երկարն է: Այն հիշեցնում է աղոթել հեղինակությունների համար՝ ազգային ու տեղական առաջնորդների, ինչպես նաև աշխատանքային ղեկավարների (Ա Տիմ. 2.1-2):

Չորրորդ մատը ընդհանրապես ամենից թույլն է: Աղոթիր նրանց համար, ովքեր նեղություն ու ցավի մեջ են և տառապում են (Հակ. 5.13-16): Ապա գալիս է ճկույթը: Այն քեզ հիշեցնում է ճղճիմությունդ՝ համեմատած Աստծո վիթխարիության հետ: Խնդրիր Նրանից, որ կարիքներդ հոգա (Փիլիպ. 4.6, 19):

Ինչպես էլ օգտագործես, կարևոր չէ, միայն խոսիր Հորդ հետ: Նա ուզում է լսել սրտիդ եղածը:

Աղոթք - Հայր, տուր ինձ իմաստությունը ուրիշների համար աղոթելու:

Հարցը մեր գործածած բառերը չեն աղոթքի ժամանակ, այլ մեր սրտի վիճակը:

Անավարտ գործեր

Երբ մեծ արվեստագետ Միքելանջելոն մահացավ, բազմաթիվ անավարտ գործեր թողեց: Սակայն նրա նշանավոր քանդակներից չորսը ծրագրված էր, որ անավարտ մնային: Դրանք էին «Մորուքավոր ստրուկը», «Աշխարհացույց ստրուկը», «Արթնացող ստրուկը» եւ «Երիտասարդ ստրուկը»: Այս չորս գլուխգործոցները թեև անավարտ են թվում, սակայն այնպիսին են, ինչպես Միքելանջելոն մտադրված էր անելու: Արվեստագետն ուզեց ցույց տալ, թե ինչպիսին կարող է լինել հավիտյան ստրուկ լինելու զգացողությունը: Փոխանակ քանդակելու շղթաների մեջ եղած պատկեր՝ նա այնպես արեց, կարծես կերպարները մարմարի մի մասն են՝ շերտերով քանդակված, որտեղից երբեք հնարավոր չէր դուրս գալ: Այդ կերպարների մարմինները մարմարից դուրս են ցցվում, սակայն ոչ ամբողջությամբ: Մկանները թեքված են, սակայն կերպարները երբեք չեն կարող իրենք իրենց ազատագրել:

Իմ համակրական զգացումները գնում են ստրուկների քանդակների կողմը: Նրանց վիճակը նման է մեղքի դեմ իմ պայքարին: Ես չեմ կարողանում ինքս ինձ ազատագրել ու քանդակների նման կառչած եմ մնում, ինչպես Պողոսը կասեր. «Ինձ գերի է վերցնում այն մեղքի օրենքով, որ իմ անդամներում է» (Հռոմ. 7.23): Ինչքան էլ փորձում եմ, չեմ կարողանում ինքս ինձ փոխել: Բայց շնորհակալություն հզոր Աստծուն, որ դու և ես անավարտ գործեր չպետք է մնանք: Կատարյալ չպիտի լինենք մինչև երկինք հասնենք, սակայն մինչ այդ եթե ընդունենք Սուրբ Հոգու փոխակերպող էությունը, նա կփոխի մեզ: Աստված խոստանում է ամբողջացնել մեր մեջ սկսած բարի գործը (Փիլ. 1.16):

Աղոթք - Ո՛վ Աստված, շնորհակալ եմք, որ մեզ նոր արարածներ ես դարձնում Բո Որդու՝ Հիսուս Քրիստոսի գործի միջոցով՝ մեզ ազատելով մեր մեղքի ստրկությունից:

Նա բրուտն է, իսկ մենք՝ կավը:

Կարդա՛ր
Յոռմ. 7. 14-25

...այս մահվան մարմնից ո՞վ կազատի ինձ: Աստծուց շնորհակալ եմ մեր Տեր Հիսուս Քրիստոսի միջոցով:
Յոռմ. 7.24-25

Հավատ՝ աշխատանքում

Երբ բարեկամս նպարեղենի խանութ էր գնում մեքենայով, նկատեց մի կնոջ, որ քայլում էր ճամփեզրով ու մտածեց ետ դառնալ ու նրան առաջարկել իր հետ վերցնել: Ճանապարհին խոսակցության ժամանակ տխրեց, երբ իմացավ, որ կինը, փոխադրամիջոցի գումար չունենալով, մղոններ քայլելով էր վերադառնում շոգ ու խոնավ եղանակին: Ոչ միայն այդ երկար ճամփորդությունն էր անում դեպի տուն, այլև երկար ժամեր էր քայլել այդ առավոտ՝ ժամը չորսին գործի հասնելու համար:

Բարեկամս իր այս առաջարկով Հակոբոսի հրահանգը արդի հանգամանքներում գործնական դարձրեց: Այս արարքը լավ օրինակ է քրիստոնյաների համար՝ իրենց հավատքը ապրելու գործով. «Հավատը, եթե գործ չունենա, ինքնին մեռած է» (Հակ. 2.17): Հակոբոսի մտահոգությունն էր եկեղեցու այրիների ու որբերի հոգատարությունը (Հակ. 1.27), նաև ուզում էր, որ նրանք դատարկ խոսքերի չվստահեն, այլ իրենց հավատքը ապրեն սիրո գործերով:

Մենք հավատով ենք փրկված, ոչ թե գործերով: Սակայն մեր հավատն ենք ապրում ուրիշներին սիրելով ու հոգ տանելով: Թող մենք էլ այս բարեկամի նման մեր աչքերը բաց պահենք՝ տեսնելու նրանց, ովքեր օգնության կարիք ունեն, երբ միասին քայլում ենք այս կյանքի ճամփորդության մեջ:

Աղոթք - Տեր Հիսուս, Դու արեցիր գերագույն գործը՝ մեռելով խաչի վրա ինձ համար: Երբեք չեմ մոռանա այն զոհողությունը, որ ինձ կյանք է տալիս:

Կարդա՛ր Հակոբոս 2.14-26

Ցույց տուր ինձ քո հավատն առանց գործերի, ես էլ քեզ ցույց կտամ իմ հավատն իմ գործերից: Հակ. 2.18

Մեր հավատը ապրում ենք մեր բարի գործերի միջոցով:

Ծաղկելու ժամանակ

Անցյալ տարի որոշեցի մեր տան ետևի դռան մոտ գտնվող վարդի թուփը կտրել: Մեր տանը բնակվելու երեք տարիներին այդ թուփը շատ ծաղիկ չի տվել. տգեղ է, ու նրա անպտուղ ճյուղերը ամեն ուղղությամբ են տարածվում: Շատ զբաղված լինելով այն կտրելու ծրագիրը հետաձգվեց: Մի քանի շաբաթ անց այդ անհույս թվացող վարդի թուփը աներևակայելիորեն ծաղկել սկսեց, ինչը երբեք չէր եղել: Հարյուրավոր անուշ բույրով հարուստ սպիտակ ծաղիկներ կախվեցին ետևի դռան վրա ու գեղեցիկ ծաղկաթերթեր թափեցին:

Մեր վարդի թփի վերակենդանացումը ինձ հիշեցրեց Տեր Հիսուսի պատմած անպտուղ թզենու առակը Ղուկ. 13.6-9-ում: Իսրայելում սովորություն կար թզենիներին տալ երեք տարի՝ պտուղ տալու համար: Եթե նրանք անպտուղ մնային, պիտի կտրվեին, որպեսզի հողը ավելի լավ ձևով օգտագործվեր: Հիսուսի պատմության մեջ մի այգեսպան խնդրում է տիրոջից մի ծառի համար մեկ տարի ավելի տալ՝ արդյունք ակնկալելով: Այստեղ նշված առակը ակնարկում է այն իրողությանը, որ Իսրայելի ժողովուրդը չէր պարել այնպես, ինչպես Աստված էր ուզում, հետևաբար Աստված արգարորեն կարող էր դատապարտել նրանց: Սակայն Աստված, համբերատար լինելով, նրանց տվեց հավելյալ ժամանակ՝ իրեն դառնալու ներումի, նորոգության ու աճումի համար:

Աստված ցանկանում է, որ ամեն մարդ ծաղկի ու աճի: Եթե մենք մեր հավատի կյանքի աճման ընթացքի մեջ ենք կամ աղոթում ենք մեր ընտանիքի անհավատ անդամների ու բարեկամների համար, իր համբերությունը բարի լուր է մեզ բոլորիս համար:

Աղոթք - Սիրելի Հայր, շնորհակալ եմ Քո համբերատարության համար, երբ մենք անպտուղ ենք լինում: Ներիյ մեր հանցանքները և օգնիր, որ աշխատենք ունենալ ծաղկելու ժամանակ մեր հավատի մեջ:

Աստված աշխարհին հավելյալ ժամանակ է տալիս՝ պատասխանելու իր տված ներումի առաջարկին:

Կարդա՛ր Ղուկաս 13. 1-9

Տեր, այս տարի էլ թող դրան, մինչև որ դրա չորս կողմը փորեն ու աղբ դնեն:
Ղուկ. 13.8

Նյութերի ցանկ

Ազդոթք	Հուն. 9
Անարդարություն.....	Հուն. 22
Առանձնություն.....	Դեկ. 29
Անաստվածություն.....	Մայ. 23
Ապաշխարություն.....	Մայ. 31
Աստվածաշունչ.....	Ապր. 4, 9, մայ. 15, Հուն. 6, 25
Աստծու Հոգածությունը.....	Ապր. 6, 16, մայ. 1, 3, 10, 22, 26, Հուն. 1, 21
Աստծու սերը	Ապր. 6, 8, 13, 15, 22, 26, Հուն. 1, 21
Աստծու վարդապետությունը.....	Հուն. 7, 8, 13, 15, 22, 26
Աստծուն վստահել.....	Ապր. 20, 29, մայ. 1, 5, 10, 26, Հուն. 22
Ավետարանչություն...Ապր. 19, 27, մայ. 9, 14, 23, Հուն. 10, 25	
Բարեկամություն.....	Ապր. 10, մայ. 16
Բարկություն.....	Ապր. 28
Գոհունակություն.....	Հուն. 4
Դավաճանություն.....	Հուն. 3
Դրախտ.....	Ապր. 17, մայ. 11, 21
Դատել.....	Մայ. 30
Երջանկություն.....	Մայ. 11
Ծառայել.....	Ապր. 25, Հուն. 12, 29
Ծնող լինել.....	Մայ. 19
Կարեկցություն.....	Ապր. 3, Հուն. 29
Կռապաշտություն.....	Ապր. 5
Հանգիստ.....	Հուն. 14
Հավատքի պատմություններ.....	Մայ. 19
Հավիտենական կյանք.....	Հուն. 5
Հարաբերություններ.....	Հուն. 3, 15, 18
Հիվանդություն դեմ դիմադրել.....	Մայ. 8
Հնազանդություն.....	Հուն. 2, 19, 25
Հոգեկան նվերներ.....	Հուն. 23

Հոգեկան բարեփոխություն..Ապր. 9, մայ. 24, 27, հուն. 6, 28	
Հոգևոր աճում.....Ապր. 23	
Հոգու պտուղը.....Մարտի 28	
Հույս.....Մայ. 8	
Հուսահատություն.....Ապր. 29	
Մահ.....Մայ. 8, 28	
Մեղք.....Մայ. 20, հուն. 8, 28	
Մեղքերի թողություն.....Հուն. 8, 30	
Միություն.....Հուն. 23	
Ներում.....Ապր. 11, մայ. 6	
Շնորհակալություն.....Մայ. 7	
Ուրիշ հավատացյալների հետ ապրել.....Հուն. 15	
Պաշտամունք.....Ապր. 5, 12, 18, մայ. 7, 13, 17, 21	
Սեր ուրիշների հանդեպ.....Մայ. 2, 16	
Սուրբ Հոգի.....Ապր. 28, մայ. 12, հուն. 28	
Վախ.....Հուն. 4	
Վերջին ընթրիք.....Մայ. 12	
Վհատություն.....Հուն. 12	
Տալ.....Ապր. 21	
Փառաբանություն.....Հուն. 9	
Փորձություն.....Մայ. 20	
Փրկություն.....Մայ. 18, Հուն. 7, 8, 14, 16, 30	
Քաջակերություն.....Հուն. 20, 21	
Քրիստոս՝ Փրկիչ.....Ապր. 10, 14, 15, 16	
Քրիստոսի համար ապրել.....Մայ. 29, հուն. 19	
Քրիստոսի հրաշքները.....Ապր. 9	
Քրիստոսի մահը.....Ապր. 12, 13, 14, հուն. 4	
Քրիստոսի հարությունը.....Ապր. 16, հուն. 4	
Քրիստոսի նման ապրել.....Ապր. 7, 19, մայ. 17, 30	
Քրիստոսով կենդանի.....Ապր. 24	

Կարևոր ազդ

Հարգելի՛ բարեկամ, եթե գիտեք մարդկանց, ովքեր ուզում են ունենալ այս գրքույկի հաջորդ համարները, կարող եք նրանց անունները գրել ներքևի կտրոնի վրա և ուղարկել հետևյալ հասցեով.

*Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության
Հայաստանի մասնաճյուղ
0019, Երևան, Մարշալ Բաղրամյան 18
Հեռախոս՝ (010) 54-35-76; (010) 54-35-78
Էլփոստ՝ amaa.armenia@amaa.am
Կայքէջ՝ www.amaa.am*

*Արցախ
ք. Ստեփանակերտ
Ալեք Մանուկյան 7ա
Հեռ. (374) 94 52 75; 95 02 95*

Անուն, ազգանուն

Հասցե.....

.....

Հեռախոս.....

ՆՇՈՒՄՆԵՐԻ ԳԱՄԱՐ
